

Դ. Ա. Թորագյան

ԱՅԱԺ-ՆՈՎԱՆ
ՀՈՏ
ՎՐԱՑԱԿԱՆ
ԱՐՅՈՒՄՆԵՐԻ



ՍԱՅԱՅ-ՆՈՎԱՅԻ
ՊՆԵՒՅԱՆ,
250-ԱՄՅԱԿԻ
Ա.ՌԹԻԿ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
Институт Литературы им. М. Абегянса

П. М. МУРАДЯН

САЯТ-НОВА
по
ГРУЗИНСКИМ
ИСТОЧНИКАМ

Филологические заметки
и материалы.

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
Ереван 1963

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ՎԻՇՆԱՎԻ ՁԱՎԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԻՒՐՆԵՐ

891.09.092 [Մայոր - Անվա]

Լրաց.

894.631.09

Դ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԱՅՅԱԹ-ԿՈՎԱՐԻ


Ը Ս Տ

ՎՐԱՅԱԿԱՆ
ԱՐՅՈՒՐՆԵՐԻ

Ա 27.770

Բանասիրական պրպտոմետ
և նյութեր

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՐԵՎԱՆ 1963



3. მ. მურადიანი
საიათ - ნოვა
ქართული წყაროების მიხედვით
აფილოლოგიური შენიშვნები და მასალები
ერევანი 1963

ՎՐԱՅ ՍՍ.ՅԱԹՆՌՎՈ.ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(Համառոտ ակնարկ)

Հայ հանճարեղ երգիշ-բանաստեղծ Սայաթ-Նովայի մասին գրված հոդվածներն ու ուսումնասիրություններն այնքանշատ են, որ այսօր կարող ենք ամփոփել «սայաթնովագիտությունը այլ սկզբանավորում ունի հայ իրականության մեջ և այլ՝ Վրաստանում։ Հայկական սայաթնովագիտությունն սկսվում է Գ. Ախվերդյանի մեծարժեք ուսումնասիրությամբ ու հանճարեղ գուսանի հայերեն խաղերի հրատարակությամբ։ Հայ սայաթնովագիտուններն այնուհետեւ աստիճանաբար լրացնում են։ Սայաթ-Նովայի խաղերի ցանկը, ճշտում ու մեկնում Ախվերդյանի մի քանի դրույթները, նոր լուսաբանում առաջարկում և այլն։ Գ. Ախվերդյանն իսկապես հայտնաբերեց Սայաթ-Նովային և իր երկասիրությամբ հայ սայաթնովագիտության արժանավոր հիմնադիրը դարձավ (1852)։

Վրաց գրականության պատմության մեջ Սայաթ-Նովային վերաբերող հնագույն արձագանքը պատկանում է նշանավոր հնագետ և վրաց մատենագրության պատմության քաջագիտակ Պլատոն Իոսելիանուն՝ դրված 1860-ական թվականներին (Հրատ. 1895)։ Պլ. Իոսելիանին տիրապետել է հայոց լեզվին, ճանաչել է իրեն ժամանակակից հայ մտավորականներին։ Հորից՝ Իգնատիոս Իոսելիանուց, նա մտան-

Հազրական հարուստ ժառանգություն է ստացել¹: «Պատմություն Գեորգի XIII թագավորի» մենագրության բաժիններից մեկում Պլ. Իոսելիանին թվարկում ու բնութագրում է Գեորգի XIII-ին ժամանակակից մի շարք բանաստեղծների ու հասարակական գործիչների: Ճիշտ այդ շարում խոսվում է նաև Սայաթ-Նովայի մասին. «103) (Սայաթ-Նովա, Թիֆլիսցի հայ, նշանավոր անձնավորություն, անվանի բանաստեղծ, մահացել է 1801 թվականին,) պարզ-խոսակցական լեզվով դրոշը բանաստեղծ էր, սակայն սուր գաղափարներ ունեցող: Նրա ասածները դեռ այսօր էլ վրացիները իբրև պատկերակությունը են գործածում (բառացի՝ իբրև առակ): Նաև երգիչ էր»²:

Պլ. Իոսելիանին, ինչպես նշեցինք, բաշատեղյակ էր վրաց մատենագրության պատմությանը: Հիմքեր կան ևնթագրելու, որ ծանոթ է եղել նաև հայկական աղբյուրներին. Արա արխիվում պահպանվել են Սիք. Զամշանի նշանավոր «Պատմությունից» վրացերեն թարգմանված առանձին հատակտորներ. Սայաթ-Նովային վերաբերող այս հաղորդումը ժամանակակիցի վկայություն չէ, այլ գրառված է Սխիվերդցանի հրատարակությունից ութ տարի հետո:

Սայաթ-Նովայի խաղերը XIX դարի առաջին տասնամյակներում իրոք տարածված էին Վրաստանում և բացի «պատկերավոր խոսք» լինելուց իբրև բանաստեղծական բնական էին օգտագործվում աշուղ իարալիի, Գր. Օրբելիանիի և այլոց կողմից: Նրանք գրում էին «Սայաթ-Նովայի հանգույք»: Ճիշտ է նաև, որ աշուղի խաղերը գրված են «պարզ-խոսակցական լեզվով», բայց «սուր գաղափարներով»: Պլ. Իոսելիանին ըստ արժանվույն գնահատել է Սայաթ-Նովայի զրական ժառանգությունը և արդարացիորեն բանաստեղծի անու-

1 Հայրը՝ իդ. Իոսելիանին, նույնպես գիտեր հայերներ կենինդրագի Սալտիկով-Շեղրինի անվ. հանրային դրագարանի վրացական ձեռագրերի հավաքածոյում պահպանվել է «Մեկնութիւն սաղմոսաց»-ի նրա հայերենից վրացերեն կատարած թարգմանությունը:

2 «Ծննդաբառ զուրկություն», Ծգ., 1936, էջ 263, հմմ. 1895 թ. ՀՀատ., էջ 320:

Նը զետեղել «Գեորգի թագավորին ժամանակակից անձինք՝ գործով ու սերմամբ, խոսքով ու վարքով անվանի» խորագրի տակ:

Պլ. Խոսկելիանին պատմական բնույթի ունեցող որևէ փաստաթուղթ օգտագործելիս ամենայն բարեխղճությամբ վկայակոչում է իր աղբյուրը, սովորաբար, «կորուսաից փրկելու համար» այն լրիվ մեջբերելով: Մինչդեռ Սայաթ-Նովայի կապակցությամբ նա ոչ մի սկզբնաղբյուր չի նշում: Հավանաբար չկային այդպիսի աղբյուրներ, որովհետև նրանից առաջ հարցով հատուկ զբաղվել էր Գ. Ախվերդյանը, ոչ մենականացնելով:

Սայաթ-Նովային վերաբերող պարբերությունից քիչ
առաջ, նույն էջում, Իոսելիանին խոսում էր XVIII դարում շատ
հայտնի բանաստեղծ Բեսիկի (Բեսարիոն Գաբաշվիլու) մա-
սին: Նա գրում է. «Բեսիկի կամ Բեսարիոն Գաբաշվիլի, բա-
նաստեղծ, մահացել է 1799 (ՏԸԸ!—Պ. Մ.) թվականին: Սրա
մասին շատ է գրվել, և ես այլևս չեմ կրկնում»³: Եվ իրոք,
Բեսիկիին վերաբերող տասնյակ տեղեկություններ ու պատ-
մական բովանդակությամբ գրագրություններ կան⁴: Բայց
հակառակ սպասելիքի, Պ. Իոսելիանին «շատ գրվելուց» հե-
տո էլ սխալ է թվագրում. Բեսիկին մահացել է ոչ թե 1799
թվականին, այլ 1791 թվականի հունվարի 24-ին⁵: Եթե Բե-
սիկիի մահվան մասին Պ. Իոսելիանին հավաստի տեղեկու-
թյուններ չուներ, ապա նա որտեղից հավաստի աղյուսը կու-
նենար Սայաթ-Նովայի մասին: Այս հանգամանքն է, որ Սա-
յաթ-Նովայի կենսագրությամբ զբաղվող որոշ մասնագետ-
ներ հաշվի չեն առել և հետագա ուսումնասիրողների համար
խաբումիկ «արթիվային» նյութ են ներկայացրել:

Գ. Ախվերդյանի հրատարակությանը հաջորդող տասը տարում (1852—1862) վրաց գրական միտքը որևէ կերպ չի

3 *Vop. zhuship., t. 2 263:*

4 Բավական է հիշել Միքայիլ Արքայազնի հետ ունեցած գրագրությունն ու մտերմությունը:

⁵ ՀԱՅ. Տ. ԿԵՐԵՐԵՆ Ո ՇԵ, ՀԱՐԴ. ԼՈՒԹ. ԽԵՐ., Ը. II⁴, էջ 664:

արձագանքել Սայաթ-Նովայի խաղերի հայտնաբերմանը կամ դոնե այդպիսի արձագանք դեռ հայտնի չէ: Դժվար է ասել, թե վրաց մտավորականները զգիտեին այդ հրատարակության մասին, ամենայն հավանականությամբ դեռևս անհայտ էր վրացական խաղերի գավթարը, այն, որ այժմ կենինգրադում է պահպում (Georg. № 222): Վրաց նշանավոր զիտնական-բառարանագիր Գ. Չուրինաշվիլին (ապրում ու գործում էր Պետերբուրգում) «Վրաց անթոլոգիայի» Զ-րդ հատորը կազմելիս (1863) առաջին անգամ տպագրում է Սայաթ-Նովայի կրեք խաղ⁶ („Ցյ Տա՛յալո ჩյմո տաշո“—«Իմ խեղճ գլուխա, „Ցըցարո ամլցհյուլո“—«Արադի պես պղասոր ես, Քո՛ւո» և „Ցշլօօձ օձո մթյոհս“—«Ես քեզ սրասով չեմ նախանձում»): Չուրինաշվիլին վրացերեն բնագիրը վերցրել էր իր իսկ հնագարանի մի գրչագրից⁷: Բնական է, աստիճանաբառ ծավալվում էր հետաքրքրությունը:

Վրացական «Դրոերա» թերթը հրապարակելով Սայաթ-Նովայի մի խաղը, 1868 թվականին իր ընթերցողներին է դիմում հետեւալ կոչով.

«Սայաթ-Նովայի խաղերից է: Սայաթ-Նովան և Ալավերդան ժամանակիցներ են եղել՝ Թիֆլիսի երգիշ-սազանդարներ: Խմբագրությունը խոնարհաբար խնդրում է «Դրոերայի» ընթերցողներին, որ եթե զիտեն Սայաթ-Նովայի խաղերի տեղը, խմբագրությանն ուղարկեն ի տպագրություն: Սայաթ-Նովայի խաղերը մեր մոտ այն պատվին են արժանի, ինչի արժանի են ժողովրդական երգերն ու խաղերը»⁸:

Խմբագրության հրապարակած խաղը իրականում Սայաթ-Նովային չի պատկանում: Վերջին տողերում նշվում է Հեղինակը՝ աշուղ Ալավերդան: Այնուամենայնիվ, բերված

⁶ „Ջարտցլո յ՛ռօւստոմանուա“, Ա.-Ֆ. 1868, էջ 118:

⁷ Զեռագիրն այժմ գանվում է Կ. Կեկելիձեի անվան Զեռագրերի ինստիտուտի Տ ֆոնդում:

⁸ „Գորոյնուա“, 1868, № 18, էջ 4:

կոչը վկայում է, որ վրաց մտավորականները հետամուտ էին Սայաթ-Նովայի խաղերը հայտնաբերելուն ու հրատարակելուն:

Անցյալ դարի 60—70-ական թվականներին Թիֆլիսում գեռնս կային աշուղ-սաղանդարներ, որոնք գրում ու կատարում էին երկու-երեք լիզուներով, իսկ դա օժանդակում էր գրական ընդհանուր միջավայր ստեղծելուն։ Անկասկած է, նաև, որ այդ աշուղ-սաղանդարները գեռնս կկատարեին և Սայաթ-Նովայի երգերից ժամանակի նշանավոր աշուղ-բանահավաք Սկանդար-Նովան 1870 թվականին հրատարակած „Տալեօն Տանաօնօնո“ («Խրախճանքի երգեր») ժողովածուում զետեղում է Սայաթ-Նովայի մինչ այդ անհայտ (շտպագրված) չորս խաղ („Տայցարուցու ծառածու“—«Միլուհուս այգում...», „ՕՌՅՈՍ շարու օՌ շոյշամս“—«Ոչ ոքի չի մերժել», „Ֆալուծու օյցու“—«Երգում է թութան» և „Ցոց-Ցոց ցացօս“—«Մարդ կա որ...»):

Սայաթ-Նովայի խաղերը այժմ և՛ ընթերցվում էին, և՛ երգվում, իսկ դա բորբոքում էր հետաքրքրությունը։ Սկանդար-Նովան չորս անդամ վերահրատարակում է իր ժողովածուն (1873, 1875, 1895, 1912)⁹ աստիճանաբար ավելացնելով Սայաթ-Նովայի խաղերի թիվը (վերչին հրատարակությունում ութ խաղ է զետեղված):

Մենք մտադիր չենք այսուղ մեկ առ մեկ թվարկելու Սայաթ-Նովայի մյուս խաղերի հայտնաբերումն ու հրատարակումը¹⁰։ Այժմ արդեն ինքնին պարզ է, որ վրաց մատե-

9 Սկանդար-Նովան 1913 թվականին մասնակցում է Սայաթ-Նովայի շուրջը ծավալվող բանավեճին և կենսագրական-ավանդական մի քանի հետաքրքիր տեղեկություններ է հավորպում («Հովիտ», 1913, № 13, 14, 15)։ Սայաթ-Նովայի հիշատակին նվիրված երկու բալական հետաքրքիր խաղ է գրել (նույն տեղ)։ Ի դեպ, Սկանդար-Նովան շատ մտերիմ էր Սունդուկյանին՝ արժանվունք գնահատելով վերչինիս գրական տաղանդը։ Սունդուկյանին նվիրված երկարաշունչ ձռն է հորինել։

10 Վրացերեն խաղերի հրատարակության լիակատար մատենագիտությունը կազմել ենք առանձին, որ կհրատարակվի Հ. Անայանի կազմած «Սայաթ-Նովայի մատենագիտության» մի առանձին բաժնում։

նադրության մեջ մի նոր մասնաձյուղ էր ստեղծվում՝ սայաթ-նովադիտություն, աստիճանաբար ավելի ժավավելով։ Վրաց ամենահեղինակավոր պարբերականները նույնպես հետաքրքրվեցին Սայաթ-Նովայի գրական ժառանգությամբ։ Հատկապես նշանավոր էր «Իվերիա» հանդեսի ելույթը՝ Սայաթ-Նովայի երեք խաղերի հրատարակությամբ (1877)։ Հանդեսի հրատարակիչը ու խմբագիր իլիա Ճավավագեծն արժանվույն դնահատեց հայազգի աշուղ-բանաստեղծի վրացերեն խաղերի գեղարվեստական-գաղափարական կատարելությունը¹¹։ Համընդհանուր ճանաշում վայելող «Իվերիայի» (և նրա խմբագիր իլ. Ճավավագեծների) ելույթը նոր շրջան է նշանավորում։ Հատկապես արժեքավոր է գրականագետ Զաքարիա Ճիճինաձերի ծավալուն ելույթը 1878 թվականին (գրական կեղծանումը՝ Մթածմինդելի)¹²։ Զ. Ճիճինաձեն, ինչպես ինքն է նշում, ծանօթ էր Գ. Ախմետյանի երկասիրությանը և որոշ տեղեկություններ նրանից էր վերցնում։ Սակայն վրաց գրականագետի մոտ ունենք մի քանի նոր հաղորդումներ, որոնք արժեքավոր են Սայաթ-Նովայի մասին եղած ավանդությունների համեմատական ուսումնասիրության համար։ Ճիճինաձեն անձամբ ականջալուր է եղել վրացի ծերունիների պատմածներին և գրառել կարելոր հաղորդումներ։

Հետաքրքիր է, որ վրացական միջավայրում ստեղծված ավանդությունները հիմնականում վերաբերում են Սայաթ-Նովայի Դարիայի վանքում ստացած կրթությանը (sic!), արեղա ձեռնադրվելուն, Հերակլ II-ի հանդեպ ունեցած մտերմությանը, արհեստին և այլն։ Ըստ երևույթին, վրացերեն խաղերի ընթերցողները կամ հենց վրացական միջավայրը արժանվույն են գնահատել հանճարեղ աշուղի ստեղծագործությունները՝ նրանց հեղինակին վանական կրթություն վերագրելով։ Ժողովրդի պատկերացմամբ լավ բանաստեղծը

¹¹ „Ոզյորուա“, 1877, № 28, էջ 10, 11, № 30, էջ 12, տպագրված են „Տառցելու և Տառցելու թշու“,—«Աշխարհից-աշխարհ» սար կա, ճշմարիս է», „Յղաց զու ցամանածն“—«Աստղալուսով ծովը ինչպես...» խաղերը։

¹² „Պողոցնա“, 1878, № 119, էջ 2—3, № 120, էջ 2—3,

լավ կրթություն պիտի ունենա, իսկ Թարիայի (Հերակլ II-ի կնոջ կողմից կառուցված) վանքը այդ առմամբ նշանավոր կրթօջախ էր: Զ. Ճիճինաձեն գրասում է մի ուրիշ ավանդություն ևս: Պարսկաստանից սուրբանդակ է եղել Հերակլ արքայի մոտ՝ պարսից խանի մոտալուս արշավանքը հաղորդելու: Հերակլը հուզ տիտր է: Սայաթ-Նովան «սրինգ» է նովագում իր սիրեցյալ արքայի մոտ և քաջալերում նրան՝ իր ծառայությունն առաջարկելով: Նվազում է «Արագի պես պղտոր ես, Քու» խաղը, այւարանորեն Հերակլին Քու, իսկ պարսից խանին՝ Արագ ներկայացնելով»: Իրականում խաղը ոչինչ ընդհանուր չունի նման այլարանության հետ: Բայց այս դեպքում ուշադրավ է մի այլ բան. պետք է կարծել, որ Սայաթ-Նովայի շուրջը ստեղծված ավանդությունների մի մասը նրա խաղերի ժողովրդական մեկնության վրա են հենված: Վերոքերյալ ավանդությունը հենց այդ է վկայում:

✓ Նույն այս երեսովի արդյունք է նաև Զ. Ճիճինաձեի հաղորդած մի այլ ալանդություն Սայաթ-Նովայի և արեղաների ընդհարման մասին: Վրացական (և ոչ միայն վրացական) միջավայրում անշուշտ գիտեին, որ Սայաթ-Նովան իբրև պատիժ ստիպված է եղել «քահանանալ», իսկ ապա՝ աբեղաձեռնադրությունը էր եղել իր միջավայրի՝ աբեղայոց հետ: Գուցե իրոք այսպիսի լուրեր եղել են ժողովրդի մեջ, սիրված երգչի հետագա բախտով հետաքրքրություն: Բայց այդ լուրը կարող էր իրական տեսք ստանալ նաև «իմ խեղճ զլուխ», ինչ արիր» խաղի՝

ց՞ո ցոյաց, մըցցըլոծա հատ մօնցոდա?

Ցոցո մօտեա՛, ծցհոռծա հատ մօնցոդա!...

[Աշխարհական էի՝ քահանանալն ինչիս էր,
Արի ասա՝ աբեղայությունն ինչիս էր...]

առվերը մեկնելիս: Թեև Զ. Ճիճինաձեի ծավալուն հողվածը առանձնապես մեծ դիտականություն չունի, բայց, ինչպես նշեցինք, ավանդությունների գրասումը, ժամանակակից սայաթնովագիտության համար, ինքնին արժեքավոր է:

Ճիճինաձեից Հետո մինչև 10-ական թվականները վրացական պարբերականներում ու առանձին աշխատություններում Սայաթ-Նովայի վերաբերյալ փոքրիկ հաղորդումներ են միայն հանդիպում¹³:

Սայաթնովագիտությունը նկատելի աշխաժացավ 1913 թվականից հետո, երբ Հ. Թումանյանի գլխավորությամբ Թիֆլիսի հայ և վրաց հասարակությունը, բացի երդի խաղերը հրատարակելուց, ձեռնամուխ եղավ նրա հուշարձանի կառուցմանը: Այդ տարիներին արդեն շնորհալի բանաստեղծի անուն վաստակած իոսեր Գրիշաշվիլին, որ առանձնապես մտաի էր հայ հասարակության մտավոր գործունեությանը, ձեռնամուխ եղավ Սայաթ-Նովայի վրացերեն խաղերի հրատարակությանն ու հեղինակի գրական միջավայրը մենագրելուն^{14:} Գրիշաշվիլին, Սայաթ-Նովայի գրական ժառանգության նկատմամբ, ըստ էության, վրաց իրականության մեջ նույն գերը կատարեց, ինչ Դ. Ախվերդյանը հայ մտավորականների շրջանում, այն տարբերությամբ, սակայն, որ վրաց ընթերցողը մինչ այդ արդեն ծանոթ էր Սայաթ-Նովայի խաղերի մի մասին: Մինչև իր աշխատասիրության հրատարակումը ի. Գրիշաշվիլին վրաց գրական հասարակայնության համար մի քանի դասախոսություններ կարդաց: Ժամանակի մամուլում հետաքրքիր արձագանքներ են տպագրվել այդ գասախոսությունների մասին^{15:}

¹³ Յ. Յու. Յու. Տայ. და მისი წარსული დღი, 1894, էջ 77; օ. გრენი: „ივერია“, № 116, էջ 3: Հաղորդում Թիֆլիսի հայ գրողների ընկերության Սայաթ-Նովայի խաղերը վերահսատարակելու որոշման մասին, ահե՛ս „Տաթառեա ճանչու“; 1911, № 1008, էջ 2 և այլն:

¹⁴ Այդ մասին վրացական մտմուլում հաղորդում է հրատարակելէտ ՏԿ'ս „Եղանակ և Աթոռություն“, 1919, № 35, էջ 16: Վրացերեն խաղերը հրատարակության պատրաստելիս (հատկապես վերծանելիս) Ի. Գրիշա-շվիլուն օժանդակել ու որոշ խաղեր անձամբ արտադրել-ուղարկել է ակադ. Ն. Մառը (այդ մասին տե՛ս „Սահալու գյուղություն“, 1917, № 767, էջ 4, ծան.):

¹⁵ Տե՛ս „Տաճալիք գումարը պահպանությունում“, 1917, № 797, էջ 2.

Դասախոսություններին մասնակցած մատենագիտ Թամարա Մաճավարիանին պատմում է, որ դրանք երբեմն ուղեկցվում էին երաժշտական հատումներով և Թիֆլիսի բանաստեղծական տոնն էին: XVIII և մասամբ XIX դարի Թիֆլիսը աշուղական-ժողովրդական խաղերի մի առանձնահատուկ մրցատեղի էր: «Կինտոների» հետ միաժամանակ անցյալի վերջուց դարձավ նաև աշուղական այդ ինքնատիպ միջավայրը: Գրիշաշվիլու դասախոսությունները վերստեղծում էին այդ ոչ այնքան հեռավոր անցյալը, իսկ Թիֆլիսիցին շատ զգայուն էր իր քաղաքի անցյալի նկատմամբ: Դասախոսը ինքը ևս այդ տարիներին արևելյան պոեզիայի ազդեցությունն էր կրում, մանավանդ Սայաթ-Նովայի:

1918 թվականին լուս տեսավ ի. Գրիշաշվիլու «Սայաթ-Նովա» երկասիրությունը՝ մենագրություն, բնագրեր ու բառարան ներառությամբ: Ինչպես և պետք էր սպասել, աշխատությունը բացառիկ հետաքրքրություն առաջացրեց: Տասնյակ գրչագրերում կատարված պրակտումները հնարավորություն էին ստեղծել բանասեր-բանաստեղծին մենագրություն գրել ոչ միայն Սայաթ-Նովայի, այլ նաև աշուղական պոեզիայի մասին առհասարակ: Առաջին անգամ հայտնի դարձան տասնյակ անուններ, իսկ նրանց առնչությունը Սայաթ-Նովային՝ գրքին տալիս է ընդհանուրացնող բնույթ: Մանրամասն քննվում են աշուղական «արհեստն» ու նրա ինքնությունը, հին Թիֆլիսի առօրյայի, նիստուկացի զուգորդմամբ, աշուղների շըրջանում գոյություն ունեցող ավանդական սովորությունները, մրցակցության տեսակներն ու եղանակները, գրական ժանրերն ու նրանց արևելյան առումը և ի վերջո, այս ամենի աղերսը հին Թիֆլիսին:

Նույնքան արժեքավոր է նաև բնագրերի հրատարակությունը: Մինչ այդ ընթերցողին ծանոթ էր Սայաթ-Նովայի վրացերեն խաղերի մի մասը միայն: ի. Գրիշաշվիլին XVIII—XIX դարերի գրչագրերից հրատարակեց 28 խաղ: Գրիշաշվիլին սոսկ տեքստեր չի հավաքել, այն ժամանակ Սայաթ-Նովայի որոշ խաղեր հայտնի էին եղակի և պակասավոր օրի-

նակներով: Նույն վիճակում հրատարակելու գեղքում որոշակի կտուժեր խաղերի ամբողջականությունը: Ուստի հրատարակող բանասիրը իր բանաստեղծական տաղանդը կիրառեց և այստեղ: Ինչ խոսք, բանասիրության արդի պայմաններում կարելի է գրչագրերի համեմատական բնագիր կազմել, բայց 1918 թվականին այդ հնարավոր չէր (չկային տարբերակներ) և Գրիշաշվիլու մատուցած ծառայությունը, այս առումով, արժանի է մեծ երախտագիտության¹⁶:

Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը արդեն քաջածանոթ էին վրաց գրականության պատմության տեսաբաններին: Այժմ կարելի էր նրան հատկացնել իր արժանավոր տեղը վրաց մշակույթի պատմության մեջ: 1924 թվականին լույս տեսավ Կ. Կեկելիձեի «Վրաց գրականության պատմություն» նշանավոր աշխատության II հատորը: Նա Սայաթ-Նովայի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրությանը մի առանձին բաժին էր հատկացրել: Բացի ի. Գրիշաշվիլու հրատարակությունից, վրացական գրչագրերից նա քաղել էր մի այլ խաղ՝ ևս՝ Սայաթ-Նովային հատկացնելով¹⁷: Ինքնին հասկանալի է, որ Կ. Կեկելիձեն նպատակ չի ունեցել բոլոր հարցերը իրեն հատուկ բազմակողմանիությամբ բննել, որովհետև գործ ուներ ուսումնական ձեռնարկի հետ: Այնուամենայնիվ, բացի նշված մի խաղից, վրաց գրականության հեղինակավոր տեսաբանը մի շարք ուշադրավ դիտողություններ է անում, այդ թվում՝ ծննդյան տարեթվի, գրական մի-

16 Ի. Գրիշաշվիլին հին Թիֆլիսի գրականությանը նվիրված հատուկ ուսումնասիրություն հրատարակեց 1927 թվականին «Հին Թիֆլիսի գրական թուուրունը» խորագրով („մշշլո Ծոյոլուսօն լո՛օ. ծոճյմա“): Ինչպես Սայաթ-Նովային նվիրված աշխատությունը, այնպես էլ վերջինս շահավետ կլինեն նաև հայ ընթերցողի համար: XVIII—XIX դարերի հայ գրականությունը անմիջական ազերս ունի հին Թիֆլիսի հետ, և հիշյալ աշխատությունների թարգմանությունը կօգներ հասկանալու գրական միջավայրը: Էլ չհնք ասում, որ ուսումնասիրած աշուղ-սաղանդարների մի մասը հայագի է, թեկուզ նրանց խաղերը երբեմն վրացարան են:

17 Էջ 483—487, խաղի պատկանելության մասին տես «Սայաթ-Նովա-Ստեփանոս և Ստեփանոս Դերձակ» բաժինը:

զալացրի, բանաստեղծական արվեստի և այլ հարցերի մասին:

Սայաթ-Նովային «Վրաց հին գրականության» մեջ հատուկ ենթաբաժին հատկացնելը ինքնին արդեն գիտական կողմնորոշում էր, մանավանդ որ այդ կողմնորոշուը խոշոր և խըստապահանջ վրացագետ Կ. Կեկելիձեն էր: «Վրաց հին գրականության պատմությունը» չորս անգամ վերահրատարակվել է¹⁸, իսկ ամփոփվող նյութերը, այդ թվում և «Սայաթ-Նովա» բաժինը, աստիճանաբար լրացվել են նոր մեկնություններով ու փաստարկումներով:

Վրացի գիտնականները, հատկապես բանաստեղծ Ի. Գրիշաշվիլին, տարեցարի Սայաթ-Նովային վերաբերող նոր նյութեր ու նրա հեղինակությունը կրող խաղեր էին պրատում: 1924 թվականին վրացական «Ճացճածօռնո» հանդեսում (№ 3—4, էջ 127—128) հրապարակվեց մի նոր խաղ: Երբ տարիներ հետո (1934) այդ խաղն իրրե նորագյուտ մատուցվեց, ի. Գրիշաշվիլին պատասխանեց այդ «գյուտին» և նոր միայն հայտնի դարձավ, որ հրատարակող-ծանոթագրողն ինքն է եղել¹⁹: Այդ նույն պատասխանից էլ տեղեկանում ենք, որ սայաթնովագետը մտադիր է եղել մյուս խաղը ևս („Քյոթօ զա՞րգօ...“ — «Աղատ թող իմ վարդին») հրատարակել, բայց հանդեսի փակման կապակցությամբ բնագիրը մնացել է խմբագրության արխիվում:

Բնութագրելով Սայաթ-Նովայի յուրաքանչյուր նորահայտ խաղի նշանակությունն ու կարեռությունը, ի. Գրիշաշվիլին գրում էր. «Միշտ ինչ որ մի հպարտություն եմ զգում, երբ Սայաթ-Նովային վերաբերող հոգվածներ եմ կարդում, իսկ նրա անծանոթ խաղերի հայտնաբերումը հո այս քաղաքի բանահյուսության տոն կնշանակի»²⁰:

18 Վերջին հրատ. 1958 թվականին:

19 Տե՛ս նրա հոդվածը «Սայաթ-Նովայի անծանոթ խաղերը», «Ըստ Ծյուռնուղարք գանձերու», 1934, № 27, էջ 5:

20 Անդ. Գրիշաշվիլին Սայաթ-Նովային ձոնած բանաստեղծություն ունի: Նա թարգմանել է նաև Հ. Թումանյանի [«Սայաթ-Նովա»] հանրահայտ բանաստեղծությունը, թարգմ. հրատ. տես „Թճառածօ“, 1948, № 4, էջ 24:

Վրաց սայաթնովադիտության պատմության մեջ համկալեալիս նշանավոր է 1930 թվականը, երբ գրեթե միաժամանակ հրատարակվեցին Լ. Մելիքսեթ-Բեկի և Գ. Լեռնիձեի մենագրությունները Սայաթ-Նովայի մասին²¹: Մինչ այդ հայ սայաթնովագեանները սկզբունքային բանավեճ էին մզում Սայաթ-Նովային վերաբերող մի շարք հարցերի շուրջ: Լեռյի և Գ. Ասատուրի այդ բանավեճը («Խորհրդային Հայաստան», 1926) բորբոքեց նաև Վրաստանում ապրող հայագետ-վրացագեանների հետաքրքրությունը:

Լ. Մելիքսեթ-Բեկի մենագրության դրդապատճառներից մեկը (և հիմնականը), ինչպես հեղինակն է նշում, այդ բանավեճում արժարծված հարցադրումներին պատասխան տալն էր՝ վրացական աղբյուրների օգտագործմամբ: Աշխատությունը գուրս եկավ նշված սահմաններից և մի շարք նոր խընդիրներ ու փաստեր առաջադրեց:

Մելիքսեթ-Բեկի սույն աշխատությունը մի տեսակ ընդհանրացնող բնույթ ունի, թեև ոչ քիչ հարցեր այստեղ ևս վիճելի են: Հիմնական արժանիքը, մեր կարծիքով, Սայաթ-Նովայի ինքնազրերի վերծանումն ու պատշաճ օգտագործումն է, իսկ բազմաթիվ ճշտումներն ու նախորդ բանասիրների թերացումների սրբագրումը աշխատությանը մատենագիտական ամբողջություն է տալիս: Լ. Մելիքսեթ-Բեկը, ի տարբերություն մյուս սայաթնովագետների, լրիվ օգտագործում է հայկական ու վրացական աղբյուրները: Այդ իսկ պատճառով էլ այս մենագրությունը արժեքավոր է և ուշագրության արժանի, հատկապես վրացական աղբյուրներին ոչ քաջագիտակ մասնագեանների համար: Աշխատությունը ժամանակին արժանացավ Կ. Կեկելիձեի ուշագրությանը:

Նշանակալից ու արժեքավոր է նաև Գ. Լեռնիձեի մենագրությունը²²:

²¹ Պ. Թեղոյ յետ - ծցց օ, Տառամաշա, Ծյ., 1930; Ճ. Ըցան օ ծց, Ցցանան Տառամաշա, 1930.

²² Աշխատությունը գրվել է 1928 թվականին և 1929 թվականի հունվարի 10-ին կարդացվել է որպես զեկուցում: Հետազում այն լրացվել է

Սայաթ-Նովայի կենսագրությանն ու ստեղծագործությանն առնչվող մի շարք հարցեր այստեղ քննվում են նորահայտ աղբյուրների կիրառմամբ: Գ. Լեռնիձեն իր աշխատությունը շարադրելիս նկատի է ունեցել Վրաստանի տարբեր հնագարաններում պահվող գրչագրերի ընձեռած նորութները՝ շատ հաճախ համեմատական կիրառմամբ օգտագործելով դրանք: Քննելով մենագրելու դրդապատճառները, հեղինակը զրում է:

«...Զնայած այսպիսի ծառայությանը [անդրկովկասյան ժողովուրդների մշակույթի պատմությանը], պետք է նշել, որ Սայաթ-Նովան ըստ արժանվույն չի ուսումնասիրված և նրա կենսագրության ու գրական գործունեության բաղմաթիվ հարցեր գենու մշուշապատ են»²³:

Ինքնին հասկանալի է Գ. Լեռնիձեի նպատակը. վերաբերնել որոշ հարցեր, նոր վկայություններ կիրառելով:

Աշխատության ընդգրկումն այսպիսին է.

1. Վկայություններ Սայաթ-Նովայի անձնավորության, ծննդյան ու դաստիարակության մասին՝ ըստ վրացական նոր աղբյուրների (էջ 9—13):

2. Սայաթ-Նովան Հերակլ II-ի սականդար (էջ 14—16):

3. Սայաթ-Նովան պալատական «զվարճախոս» (էջ 17—18):

4. Սայաթ-Նովան դիվանագիտական գործիչ շի եղել (էջ 19—20):

5. Երգչի վտարումը պալատից (էջ 21—25):


6. Ճիշտ է, թե ոչ Սայաթ-Նովայի եպիսկոպոսությունը (էջ 26—33):

7. Սայաթ-Նովայի մահվան տարեթիվի հարցի շուրջը (էջ 33—46):

8. Երգչի անունը, նրա խաղերի ճակատագիրը (էջ 49—61):

Լեռնինգրադի արևելագիտության ինստիտուտում պահվող մի քանի արժեքավոր սկզբնաղբյուրներով և 1930 թվականին հրատարակվել առանձին դրույթը,

23 Կնդ, էջ 6:



Գ. Լեռնիձեի ուսումնասիրությունը Սայաթ-Նովայի մասին գրված լավագույն երկերից է: Արդեն նշեցինք, որ վրացական մի քանի աղբյուրներ առաջին անգամ էին բանասիրական քննության հիմք դառնում: Այստեղ վրաց ընթերցողին ներկայացվեց Սայաթ-Նովայի մի անձանոթ (նորահայտ) խաղ և երկու կալամբուր: Երեսունական թվականներին դեռևս հրատարակված չէր Հովհան արքայազնի «Կալմասորա» արժեքավոր մենապրությունը, բայց Գ. Լեռնիձեն ձեռադրից հատվածել էր Սայաթ-Նովային վերաբերող մասը և բանասիրական նոր հարցադրում արել:

Սայաթ-Նովայի խաղերի նոր ու կատարյալ հրատարակության անհրաժեշտության մասին է գրել Զարենցին բախտակից վրաց տաղանդավալոր բանաստեղծ Տիգիան Տաբիձեն²⁴: Նա առանձնահատուկ ուշադրությամբ ու դրվատանքով է խոսում Սայաթ-Նովայի բազմալեզվան քնարերգության մասին՝ մշակութային-պատմական ճանաշողական արժեքի ընդուժմամբ.

«Մեր ժամանակի բանաստեղծներս ոչ միայն այս երեք լեզվով գրելը, այլև մեկ-մյուսի ընթերցումն ու հասկանալն էլ չենք հաջողում: Սայաթ-Նովան թեկուզ հենց դրանով էլ նախընտրելի է ու դերադասելի, որպեսզի մեր սերունդը ճանաշի նրա մեծագույն ծառայությունը»²⁵:

1935 թվականին Լ. Մելիքսեթ-Բեկը երկիցս հանդես եկալ Սայաթ-Նովային նվիրված երկասիրություններով: Նախ ուսումնասիրեց Սայաթ-Նովայի ստեղծագործության դրական-ժողովրդական աղբյուրները²⁶, ապա այն միակցեց հայերին խաղերի իր կատարած վրացերեն թարգմանության ու հրատարակեց առանձին դրքով՝ «Սայաթ-Նովա» (հայկական խաղերը

²⁴ „Ըլո՛. ցանցո՞”, 1934, № 28, էջ 3—4:

²⁵ 1934 թվականին գրողների համամիտնենական համագումարում Մ. Տորոշիլձեն զեկուցեց «Վրաց դրականությունը» թեմայով, բնականարար, տեղ հատկացնելով Սայաթ-Նովային. տպագրությունը տես „Թօստոնօծ”, 1934, № 7—8, էջ 220—245: Սայաթ-Նովայի մասին էջ 238—239:

²⁶ „Ըլո՛. մշակութային աշխատանքների մասին”, 1935, էջ 232—254,

վրացերեն)՝²⁷ Գրքի առաջին բաժնում (Առաջաբան և Ներածություն) նւազմական սիրված էն հայ և վրաց մատենագրության և բանահյուսության այն «պատմությունները», զրուցները, ավանդություններն ու կրոնական հոգեոր աղբյուրները, որոնց անմիջական կամ հեռավոր արձագանքը կա Սայաթ-Նովայի խաղերում։ Ինքնին հասկանալի է այսպիսի ուսումնասիրության գիտական անհրաժեշտությունը։ Սայաթ-Նովան, ըստ ամենայնի, այլև աշուղ չէ, այլ՝ նախնյաց մատենագրության բազմաթիվ աղբյուրների գիտակ բանաստեղծ՝ իր գրական դասական նախորդներն ու ավանդներն ունեցող մտավորական։

Երկրորդ բաժինը՝ հայկական խաղերի ժողովածով (վրացերեն թարգմանությամբ) նույնպես շնորհակալ աշխատանք է, բայց, պետք է խոստովանել, ըստ էության սա ոչ թէ գեղարվեստական թարգմանություն է, այլ տողացի փոխադրում՝ գիտական սկզբնաղբյուր բանաստեղծական թարգմանության համար։

Նույն տարիներին Լ. Մելիքսեթ-Բեկը զբաղվում է նաև մի այլ հարցով՝ Սայաթ-Նովայի նահատակության ստուգությունը ճշտող կամ մերժող սկզբնաղբյուրների ուսումնասիրությամբ։ Նա ճշտում ու լրացնում էր գենու 1930 թվականին արտահայտած իր տեսակետը, թէ Սայաթ-Նովան չի նահատակվել, և ավանդությունը շփոթում է։ «Իննա Խելաշվիլին Հայաստանում և Սայաթ-Նովան» հոդվածում²⁸ «Կալմասորայի» այդ հատվածին վերաբերող ժամանակագրական հաշվումների ու քննության հիմամբ Մելիքսեթ-Բեկը նորից հաստատում էր իր ժխտողական վերաբերմունքը նշված ավանդության հանդեպ²⁹։

²⁷ Ծցուղօնո, 1935. Աշխատությունը զբախուել է վաղամեռ հայագետ-վրացագետ իվանե Բեգլարովը, տե՛ս „ածալցանրդա զռմշնություն“, 1936, № 74, էջ 4։

²⁸ „Խայ. Թշն. Թույժացնություն“, 9—Բ (1), 1936, էջ 121—135։

²⁹ Նույն տեսակետը, համաստ, պահպանվում է և 1941 թվականին լույս տեսած „ԺՅ. Սոմն. Ընթացական“ գրքում (էջ 189—208)։

Սայաթ-Նովայի գրական ժառանգության գաղափարական վերլուծությանը նվիրված առաջին հոդվածներից մեկը Ա. Բարամիծեին է պատկանում³⁰: Հետագայում (1940) Ա. Բարամիծեին ավելի ծավալեց նշված հոդվածը և դեռեղից «Ակնարկներ վրաց գրականության պատմության» գրքում՝ նորից խաղերի սոցիալական-աշխատավորական երանզների քննության ընդգծմամբ³¹:

«Չվենի թարբա» հանդեսը 1939 թվականին հրատարակեց ի. Բալախաչվիլու «Սայաթ-Նովայի կենսագրության երկու հարց» խորագիրը կրող հոդվածը³²: Հեղինակը բանավիճում է ի. Մելիքսեթ-Բեկի հետ և մերժում նրա «դերձակության» վարկածը, բայց ինքն էլ մի այլ ծայրահեղություն է ստեղծում՝ Սայաթ-Նովային «դուրգար» հայտարարելով: Համեմատարար ավելի արժեքավոր է Սայաթ-Նովայի պալատից վտարման պատճառներին վերաբերող բաժինը՝ Հերակլի գեմ կազմակերպված դավագրությանը առնչելով: Սակայն, մեր կարծիքով, այստեղ ևս ավելի շատ արհեստական հարմարեցում կա, քան պատմականություն:

✓ Վրաց սայաթնովագիտության հաջորդ շրջանը պատերազմի ավարտից հետո է սկսվում: 1945 թվականին, Սայաթ-Նովայի հորելյանական օրերին, վրացական հանդեսներն ու թերթերը Սայաթ-Նովայի մասին հրապարակեցին մի քանի դիտնականների հոդվածները: «Գրականություն և արվեստ» պարբերականը իր № 32-ը նվիրեց մեծանուն բանաստեղծին: Թերթը հրապարակեց Կ. Կեկելիձեի «Սայաթ-Նովա» հոդվածը, ուր նա իրեն հատուկ հակիրճությամբ դիտական մի քանի հարցեր էր քննում: Հատկապես նոր էր աշուղական պոեզիայի վրացական ակունքներին վերաբերող դիտողությունը: Նույն համարում թարգմանարար տպագրվեց Վ. Բրյուսովի խորհրդածությունները երգչի մասին՝ նշանավոր առաջարանից

³⁰ „Յշնա“ 1936, № 92, էջ 3:

³¹ Ը. II, էջ 348—366:

³² № 7, էջ 59—64:

Հասլածելով, մատենագիտական հաղորդում³³, Ա. Ավշանի «Մեծ աշուղ-բանաստեղծը» հոդվածը և այլն:

Հորելյանական մեծարումների³⁴ ժամանակ, սովորաբար, գիտական հարցեր քիչ են քննվում: Բայց այս դեպքում էլ արդյունքը ուրախալի է. մեծարվող հեղինակը առավել շափով է հանրաճանաչ դառնում: Այդպես կատարվեց և 1945 թվականին: Անմասն շմնաց և վրաց սայաթնովագիտության իսկական հիմնագիրը՝ ի. Գրիշաշվիլին³⁵: Հորելյանական երեկոյի ժամանակ, ի թիվս այլ գիտնականների, զեկուցում կարդաց Կ. Կեկելիձեն³⁶: Հետագա տարիներին (մինչև մեր օրերը) Սայաթ-Նովայի մասին տասնյակի հասնող հոդվածներ են գրվել՝ տարբեր շարժառիթներով. Ալ. Բարամիձեի հոդվածը³⁷, որի ոռուսերեն տարբերակը հրատարակվեց Հայաստանի ԳԱ «Տեղեկագրում»՝ «Саят-Нова по грузинским источникам» վերնագրով, վերահրատարակվեց Գ. Լեռնիձեի մենագրությունը՝ աննշան կրճատումներով³⁸, մասնակի համալրմամբ վերահրատարակվեց Կ. Կեկելիձեի «Վրաց հին մատենագրության պատմությունը» (1952)³⁹: Կ. Կեկելիձեն և Ալ.

33 Հոդվածն անստորագիր է:

34 Այժմ պատճենում են ոռուսերեն «Վեհապետ» բառը՝ «ընթերցումներ», որ սխալ է: Ծփոթում են ոռուսերեն ՎԵՒՐԻ և ՎԵՐԱՎՈՐԻ բառերի իմաստները. ՎԵՒՐԻ բառում է ՎԵՒՐԻ և ՎԵՐԱՎՈՐԻ բառից: Հնում սրբերի հիշատակը եկեղեցին մեծարում էր համապատասխան շարականների ընթերցմամբ, քարոզով, պատարագով, այստեղից էլ բառը ներառում է «կարդալը իմաստը, բայց ոչ երբեք ունիթերցել» ժամանակակից հասկացողությամբ:

35 Նրա «Սայաթ-Նովա» հոդվածը տե՛ս «Հայոց նույնականություն»՝ 1945, № 192:

36 Երեկոն տեղի է ունեցել 1945 թվականի հոկտ. 8-ին, նախագահում էր ի. Գրիշաշվիլին, հարակից զեկուցում ունեցան Ալ. Բարամիձեն, Գ. Լեռնիձեն և Լ. Մելիքսեթ-Բեկը: Սայաթ-Նովային նվիրված բանաստեղծությունների բնիթերցմամբ հանդիս եկան Ալ. Արաշելին, Ռ. Գլետաձեն, Մ. Փաշալիշվիլին: Սայաթ-Նովայի խաղերը կարդացին անվանի դերասաններ Թ. Ճավճավաձեն, Ակ. Վասաձեն, Մ. Զաքարիաձեն, Վ. Գոծիաշվիլին:

37 „Ճշնական աշխատանքներ”՝ 1947, էջ 175—184:

38 „Ուղարկություններ”՝ 1949, էջ 202—303:

39 Սայաթ-Նովային վերաբերող՝ էջ 562—567:

բ) Հայկական խաղերը կարոտ են վրացական գեղարվեստական թարգմանությունը հաջող սկիզբ է, բայց Գրիշաշվիլու պես արևելյան բանաստեղծության քաջադիտակ բանաստեղծի թարգմանություն է հարկավոր՝ թարգմանելուց առաջ բնագրի բառադանձի բնույթի հաշվառմամբ։ Նույնքան կարեոր է և վրացական խաղերի լեզվառճական առանձնահատկությունները նկատառումը։

գ) Աղբբեջաներեն դրված 114 խաղերը գեռես կատարելապես անծանոթ են վրացի ընթերցողին (հայերին ծանոթ են կիսով չափ): Սայաթ-Նովայի դրական ժառանգության նկատմամբ ունեցած պատկերացումը (մասնագետի թե ընթերցողի)՝ առանց աղբբեջաներեն խաղերի թարգմանության, ամփոփ լինել չի կարող և առհասարակ հնարավոր չէ ամբողջական մենագրություն նվիրել նրանց հեղինակին։

դ) Բանասերները ավելի շատ զբաղվել են Սայաթ-Նովայի կենսագրությանը վերաբերող հարցերի ուսումնասիրությամբ, մինչդեռ իրեն գեղարվեստական խոսք այդ խաղերը տակալին բաղմակողմանի ու խոր ուսումնասիրված չեն։

ե) Դեռևս ուսումնասիրման կարոտ է աշուղական քնարերգության (այս գեպքում՝ Սայաթ-Նովայի) մերձավոր աղերսը վրաց բանաստեղծությանը, ավելի վաղ գոյություն՝ ունեցող մատենագրությանը։ Արդյո՞ք Սայաթ-Նովան «ներմուծեց» աշուղություն՝ պալատական նկատառումներին հարմարեցնելով, թե՝ արդեն գոյություն ունեցած տրադիցիաներին նոր երանդ տվեց (թեկուզ արևելյան): Սայաթ-Նովայի արվեստը արդեն գոյություն ունեցող միջավայրի արտահայտություններ, թե՝ իր գոյությամբ ինքը գրական միջավայր ստեղծեց։

զ) Ուսումնասիրության կարոտ է Սայաթ-Նովայի խաղերի ժանրային առանձնահատկությունը, արևելյան ընդունված չափերից նկատվող խոտորումը (օրինակ՝ մաջամայի ժամանում), այդ տարբերության պատճառների բացահայտումը։ Պետք է գեռես պարզել ինչ առնչություն կա Սայաթ-

Նովայի և նրա նախորդ պարսկահանդ բանաստեղծների եզ
գերի միջև՝ ժանրային-կատարողական առումով:

Է) Սայաթ-Նովայի և Բեսարիոն Գաբաշլիլու երգերի
որոշ ընդհանուրության սկզբնազբյուրի քննումը, աղղիցության
և տրադիցիայի տարբերակումը այս շրջանի (XVIII դար) բա-
նաստեղծական արվեստում՝ Սայաթ-Նովայի առնչմամբ:

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՏԵՂԸ ՎՐԱՅ ՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵջ

1

Սայաթ-Նովան համաշխարհային գրականության այն եղակի դեմքերից է, որոնք միաժամանակ երկու-երեք ժողովուրդների մշակույթի պատմություն են օղակում։ Սայաթ-Նովան ստեղծագործել է տարբեր լեզուներով։ Տարբեր են և այդ լեզուներով ստեղծված գրական ավանդույթները, գեղարվեստական ու ժամրային առանձնահատկությունները։

Հայ գրականագիտական մտքի գնահատմամբ Սայաթ-Նովան մեր միջնադարյան մշակույթի վերջին և արժանավոր եղանակառողն է։ Մինչդեռ այլ է Սայաթ-Նովայի դերը (և տեղը) վրաց գրականության պատմության մեջ։ XVIII դարում վրաց գրականության հիմնական դեմքերն են (նկատի ունենք աշխարհիկ գրականությունը) Սովորական-Սաբա Օրբելիանին, Վախտանգ ՎԻ-ը, Թեյմուրազ Ի-ը, Մամուկա Բարաթաշվիլին, Դավիթ Գուրամիշվիլին, Բեսարիոն Գաբրաշվիլին և ինքը՝ Սայաթ-Նովան։ Ժամանակագրական առումով նշված հեղինակներից երկուսը՝ Բեսիկին (Բեսարիոն Գաբրաշվիլի) և Դավիթ Գուրամիշվիլին Սայաթ-Նովայի հետ նույն շրջանի բանաստեղծներ են։ Վրաց հին գրականության վերջին և արժանավոր ներկայացուցիչը Դավիթ Գուրամիշվիլին է (1705—1792)։ Թեև վերջինս Սայաթ-Նովայից շուտ է մահացել, բայց առում ենք վերջինն է՝ երկու հանգամանք նկատի ունենալով։

ա) Գուրամիշվիլու պոեզիան ամփոփում է վրացական միջնադարյան բանաստեղծությունը թե՛ թեմայի, թե՛ լեզվի առումով: Նիկոլով Բարաթաշվիլին, վրաց նոր գրականության ամենատաղանդավոր առաջնեկը, գրական առումով հենց Գուրամիշվիլու աշակերտն է:

բ) Սայաթ-Նովան, երբ արեղա ձեռնադրվեց, ըստ էության գեռ 1765-ական թվականներին (եթի ոչ ավելի շուտ) գրեթե զրկվեց ստեղծագործելու հնարավորությունից: Միայն երկու խաղ է հայտնի («Իմ խեղճ զլուխ», «Արդար դատե»), հավանաբար հոգեկոր ժառայության շրջանում զրված:

Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը բավական շատ են տարբերվում մինչ այն եղած վրացական բանաստեղծությունից առհասարակ: Հանրահայտ է, որ նա ամենից առաջ աշուղ էր և միայն բացարձակ տաղանդի շնորհիվ դուրս եկավ աշուղական քնարերգության սահմանափակումից: Հայ գրականության պատմության մեջ մինչև Սայաթ-Նովան տասնյակ աշուղներ են վկայված, մինչդեռ վրաց գրականության պատմությունը շգփառ նախասայաթնովական որմէ աշուղի ամփոփ և դիտական ուշադրության արժանի գրական ժառանգություն:

Պատմական աղբյուրներում արժանահավատ վկայություններ կան, որ աշուղական պոեզիան զարթոնք ապրեց XVII դարի կեսերից սկսած: Բայց, ըստ էության, դա ոչ թե գրական մշակման ու գեղարվեստական կատարելության հասած պոեզիա էր, այլ՝ զուտ պալատական-ներբողագրական ծառայություն: Սայաթ-Նովայի վրաց գրականությանը մատուցած երախտիքներից մեկը հենց աշուղական արվեստը արքունական այդ կոչումից դուրս բերելն էր: Ճիշտ է, նա ևս բազմիցս ներբողել է Հերակլ II թագավորին, բայց երբ համեմատում ենք այս ներբողները զուտ արևելյան (այստեղից և վրացական) ներբողագրության ժանրի հետ, որոշակի է դառնում, որ ի վերջո «ներբողական» միտումը զիջում է Սայաթ-Նովայի խոր անհատականությանը, թագավորին ձոնված երգը դառնում է կյանքի, կենսափիլիսոփայության ու գեղարվեստական մտածողության լավագույն արտահայտու-

թյուն: Այլ կերպ՝ աշուղական խաղը դառնում է իր անհատականությամբ ընդհանրացնելու կարողություն ստացող ճըշմարիտ բանաստեղծություն: Սայաթ-Նովայի ստեղծագործությունները, վրաց իրականության մեջ գրական նախորդ չունենալով հանդերձ, իրենք ստեղծեցին բանաստեղծական մի նոր բնագավառ՝ տասնյակի հասնող հետևորդներով: Ակադեմիկոս Կ. Կեկելիձեն իր նշանավոր երկհատորյակում, պատճառաբանելով Սայաթ-Նովային վրաց գրականության պատմության մեջ պատշաճ տեղ հատկացնելու անհրաժեշտությունը, զրում է:

«Սայաթ-Նովան այսպես կոչված աշուղական պոեզիայի տիպիկ ներկայացուցիչ է, որը (աշուղական պոեզիան—Պ. Մ.) մեղ մոտ զարգացած պետք է լինի հատկապես XVII դարի կեսերից: Այս ինքնատիպ ծաղման պոեզիան այնպիսի հատուկ նպատակադրում ու ուրույն բնույթ ուներ, որ գրականության պատմաբանը կարող է նույնիսկ շրջանցել այն: Բայց Սայաթ-Նովան այնքան արտասովոր անձնավորություն է, այնքան մեծ էր նրա գերն ու աղղեցությունը վրաց գրական ու մտավորական շրջաններում, որ մենք անհրաժեշտ համարեցինք մի երկու խոսք էլ նրան նվիրել»¹:

Մեծավատակ գիտնականը արդարացի է պատճառաբանում: Ուշագրավ է, որ Կեկելիձեի համարմամբ աշուղական պոեզիան XVII դարում ոչ թե առաջին անգամ մուտք է գործում վրաց իրականություն, այլ՝ «զարգացավ հատկապես XVII դարի երկրորդ կեսին»: Այս հարցը կարևոր է մանավանդ Սայաթ-Նովայի գրական ժառանգությունը ճիշտ գնահատելու համար: Որոշ մասնագետներ հակված են կարծելու, որ աշուղությունն իբրև կովառուրա հատուկ չի եղիլ վրաց իրականությանը, մանավանդ որ Հովհան Արքայազնի՝ Սայաթ-Նովային վերաբերող տեղեկությունը ևս թույլ է տալիս այդպես կարծել: Գ. Լեռնիձեն ուղղակի նշում է, որ «աշուղական պոեզիան մեզանում XVII դարի երկրորդ կեսին

¹ „Ժառագործություններ”, Ը. II⁴, 1958, էջ 678:

սկզբնավորվեց»²: Ինչպես տեսնում ենք, վերջին կարծիքը տարբերվում է Կ. Կեկելիձեի վերոբերյալ դրույթից. Հատկապես զարգանալն ուրիշ է, սկզբելը՝ ուրիշ: Լեռնիձեն նկատունի «Նոր Քարթիս Ցխովրեայում» հաղորդվող այս վկայությունը³:

„...Ճա օցնեց ճռուտո-ճռու և մա-
սա ճա շանցերութասա Շոն, Եռոլու
և շուլուսաւուս արարաս Նրոնցուցքն:
Մշուցանա մշհանցեցն ճա մշշրունն,
ճա աշեցնեց յարտցալոն ճարծառ-
սելոն, ճա մատցա շշրուտց օցո-
լուցն մշշրունն ճա մհացալոն
մեցալոն, ճա արձարա օցու և ուրու-
թցունու և ուժուսա ճա մշմանն:⁴

...Եվ օր-օրի դինարութի ու խը-
րախմանքի մեջ էին, իսկ հսկու հա-
մար ուշնչ չէին հսկում. [Մոստոմ թա-
գավորը] շանգի վրա նվազողներ ու
մուտրիբներն բերեց, և ներբողվում
էին վրաց պալատականները: Նրանք
ևս ունեին մուտրիբներ ու բազում
հարձեր: Եվ չկար այլս շնությունից
ու ճականանությունից ամոթ:

Եթե Գ. Լեռնիձեի սկզբնաղբյուրը միայն այս տեղեկու-
թյունն է, ապա դժվար է համաձայնել նրա եղրակացությանը:
Այստեղ նշվում է, որ Մոստոմ թագավորը (1634—1658) ար-
քունիք է բերել նվազողներ, պահել տվել հարճեր և առհա-
սարակ մահմեդական թագավորին հատուկ կենցաղ վարել:
«Մեշանգիները» և «մուտրիբները» (իմա' շանգ նվազող տղա-
մարդիկ ու կանայք) դեռևս աշուլական պոեզիա չեն: Աշուլը՝
համար երեք պարտադիր պայման կա. ա) տեքստի հորի-
նում, բ) եղանակավորում, գ) երգեցիկ կատարում: Մինչդեռ
«Քարթիս Ցխովրեայում» շեշտվում է հատկապես նվազի-
ու պարի գաղափարը:

Հիմքեր կան պնդելու, որ աշուլական արվեստը բավա-
կան զարգացած էր դեռևս XII դարի Վրաստանում: Շոթա
Մուսթավելու մոտ կարդում ենք.

² „Ոցնեցնո յարտ. լուրջրածորուս օսტորուութան“, տօ., 1949, էջ 68,
ձան. 2:

³ Նշված հրատարակության մեջ աղբյուր չի վկայում:

⁴ Մշշրունն - շանգի վրա նվազող կին (ըստ Ս.-Ս. Օրբելիանիի բա-
ռարանի):

⁵ „Եյարտլուս ցեղացրեա“, Ծռմո II, տօ., 1959, էջ 424₂₀₋₂₃:

მესამე ლექსი კარგია სანადომოდ, სამღერელად,
საა ში კოდ, სალალობოდ, ამხანაგთა სათრეველად,—
ჩვენ მათიცა გვეამების, რაცა ღლენ თქვან ნათელად,—
მოშაირე არა ჰქვიან, ვერას იტყვის ვინცა გრძელად.

(cont'd 17)

Երբորդն ապա, լավ է երգը՝ խրախնանքի համար ասված,
Աշուղական, կատակախոս, զվարճակցի համար ասված,
Մեզ զար կզա հենց նրանով, որ անպանույն, պարզ է երդած,
Ու բանաստեղծ չեն համարի ճամարտակին երկարասաց:

250 տարվա պատմություն ունեցող ոռութավելագիտությունը երբեք կասկածի տակ չի առել բերված հատվածի ընազրային հավաստիությունը: «Վագրենավորի» այլ հատվածներում ևս ունենք ձնօյզ (աշուղ), ձնօշոծա (աշուղություն) բառերը: Ինչպես տեսնում ենք, նույն բառը (հետեւբար և նույն հասկացողությունը) մի քանի անգամ է կրկնված: Այն սերում է՝ عاشق—عشق—Չ—Չ համապատասխանությունը հուշում է, որ գործ ունենք արաբական հնչման հիտ: Հավանաբար, աշուղական արվեստը Վրաստանում տարածում է ստացել արաբական տիրապետության շրջանում: Հարցը ինչպես էլ լուծվի, մի բան անկասկած է, որ բանաստեղծական այդ ձևը հայտնի է եղել XII դարի Վրաստանում:

Հաղիկ թէ Հայաստանը մեկուսի մնար աշխարհիկ բռ-
վանդակության այդ հասկացողությունց:

Մուսթավելու «Վագրենավորի» բերված տողերից կարելի է կուհումներ անել աշուղական արվեստի բնույթի, կոչման մասին։ Նախորդ (6—17-րդ) տներում Ռուսթավելին խորհրդածում է բանաստեղծի ու բանաստեղծության, գեղարվեստականության սկզբունքների շուրջը։ «Աշուղական» երգ հասկացողությունը այստեղ որոշակի առնձնվում է կատակի ու զվարճության, «ընկերաց հաճողական» գաղափարին։ Իսկ այս նշանակում է, որ «աշուղական» կոչված երգը հիմնականում կապվել է քեֆի և ուրախության, զվարճական հանդեսների հետ, չբացառելով սիրային-աշխարհիկ երանգը։ Թամար թագուհու պատմիչի մոտ («Թագակըրաց պատմականն

ու ներբողեանը») հետաքրքիր տեղեկովյուն է պահպանվել: Թամարի ու Դավիթ Սուլանի հարսանիքի ժամանակ՝ «հանդես էր գուսանաց ու մարմնամարզաց» (ոչո՞ ծմծանուած թշնամութեան): «Գուսանաց հանդեսը», անկասկած, երգի ու նվագի հանդես է եղել: Գուցե Ռուսթավիելու «աշուղականն» ու այս «գուսանականը» հենց նույն նշանակությունն ունեն: Երկու դեպքում էլ այն կապվում է ուրախության ու հանդեսի գաղափարին⁶:

Այսպիսով, աշուղական արվեստը, մեր կարծիքով, դեռևս XII դարում Վրաստանում կապվել է քեֆի, կատակի, սիրո առիթներին և որոշակի տարբերվել այլ ժանրի ստեղծագործություններից:

Եթե աշուղական արվեստը օտար չէր նախասայաբնով-
յան վրաստանին, ապա, բնականաբար, Սայաթ-Նովան չէր
այն հեղինակը, որը սկիզբ դրեց բանաստեղծության այս
ժամանքին: Վերևում, երբ նշեցինք, որ Սայաթ-Նովան վրաց
իրականության մեջ չուներ իր գրական նախորդը, նկատի
ունեինք նրանից առաջ ապրած որևէ աշուղի ամփոփ ժառան-
գության, գրական նախորդի խնդիրը: Բայց Սայաթ-Նովան
մի այլ շնորհակալ ծառայություն մատուցեց վրաց գրակա-
նությանը. Վրաստանի երկարամյա ենթարկվածությունը
պարսկական, ու մասամբ էլ թուրքական, գերիշխանությանը
և վրաց մի քանի թագավորների մահմեդական նիստ ու կացը,
վարքը, հակվածությունը,—ժամանակի ընթացքում ստեղծել
էին զուտ արևելյան-աշուղական ներբողագրություն՝ պարս-
կակալեզու և թուրքերեն: Երբեմնի ազնիվ, խրախճական-սիրա-
յին աշուղական արվեստը դարձել էր պալատական մեծար-
ման, հաճույքի, քծնանքի ու սուս մեծության ներբողում: Այս-
պիսի «պոելիան» խսկապես որ ոչինչ ընդհանուր չուներ
վրաց գրականության դարերի պատմություն ունեցող ավան-
դույթների հետ: Սայաթ-Նովան առաջինն էր, որ պարսկա-
կակալեզու զուտ պայտատական աշուղությունը դարձրեց վրացա-

⁶ „ქართლის ცხოვრება“, ტ. II, էջ 471-25, հմ. էջ 661:

կան, ժողովրդական՝ իր սկզբունքներով ու բոլանդակությամբ: Մենք չենք Ժխտում պարսկական-թուրքական եղանակների, ընդունված միջոցների ու մանավանդ բառացանկի առկայությունը: Բայց Սայաթ-Նովայի մոտ «զուտ արևելյանը» էություն չէ, այլ՝ հնարանքի մի մաս, միջավայրից բխող անհրաժեշտություն: Սայաթ-Նովան ամենից առաջ երդման բանաստեղծ էր, իր արվեստին խորապես հավատացող (և նվիրված) բանաստեղծ, մի մարդ, որը իրավունք ուներ բացականչելու.

ՍուԾյած ՅօԾյազո,—ըամ յշեոլո ջանճյու!

[Խոսք կասեմ—Երկինքը ճքճքա]

Հովհան Արքայազնի «Կալմասոբայում» բավական մանրամասն տեղեկություններ կան այս «պարսկական հանգի» մասին: Պետք է կարածեի հետ երկախոսելիս Հովհանը պատասխանում է:

«Զկար պարսից որևէ երգ՝ նրանց խոկ լեզվով ու կատարմամբ, որ վրացիները վաղուց չճանաչեին: Բայց այդ մասին գրավոր աղբյուրները չեն վկայում: Խոկ երբ Ռոստով թագավորը ստացավ Քարթլին՝ հիմնովին պարսկական կարգ ու ծես սահմանեց: ...Հերակլ II-ի ժամանակ առավել ևս շատացան պարսից եղանակի գործիքներն ու երգերը... Մի քանի անձինք աշխատում էին և վրաց խոսքերին պարսից եղանակ հարմարեցրին: Նվազում էին չոնգուրի ու այլ գործիքների վրա և երգում: Այժմ էլ սա մեզ մոտ սովորական բան է:

Խոկ այս հանգի (իմա պարսկահանգ վրացերեն—Պ. Մ.)՝ վրացերեն խոսքերով առաջին ներմուծողը հայ երաժիշտներն էին՝ Սաաթլաման (resp: Սայաթ-Նովա) և այլոք, ապա՝ Բեսարիոն Գաբրաշվիլին՝ առաջնակարգ բանաստեղծ ու ստեղծագործող»⁷:

Հովհան Արքայազնը խոսում է պարսկահանգ աշուղական պոեզիայի մասին և ոչ աշուղական արվեստի մասին՝ առհասպարակ: Նա ուղղակի մատնանշում է, որ Սայաթ-Նովան ու

⁷ „Հալմասոնձա“, Ծ. I, էջ 295—96:

Հայազգի այլ ստեղծագործողներ պարսկական հանգի երգերը առաջինը կատարեցին վրացերեն: Ի դեպ, ինքը՝ Սայաթ-Նովան ևս, ինչպես կարելի է նույն Հովհանի խոսքերից եղրամացնել, շատ լավ է պատկերացրել այդ ծառայությունը: Իրեն ուղղված «ասացեք, ո՞վ եք եղել դուք» հարցին նա պատասխանում է:

«Ես լավ չոնցուր [նվազել] դիտեի և միաժականակ պարսկական հանգի վրացերեն խաղեր ստեղծեցի. դեռևս լայս վրացաբան խաղը ընդունված չեր, և երբ թագավոր Հերակլը մեջլիսում էր ու ներս տարան մեղ՝ նվազողներիս, այն ժամանակ ևս պարսկական հանգով վրացերեն երգեցի: Բատոնին շատ դուր եկավ, և ինձ խալաթ նվիրեց: Հետո ուրիշ շատերն էլ ասացին և ընդօրինակեցին ինձ»⁸:

Ուրեմն, Սայաթ-Նովան խկապես առաջինն է եղել: Գուցեառանձնապես մեծ նշանակություն չունենար այս նորամուծությունը, եթե ի գեմս Սայաթ-Նովայի ունենայինք մի սովորական և միջին կարողության տեր աշուղ: Բայց հարցի էությունն էլ հենց այն է, որ Սայաթ-Նովայի խաղերը բացառիկ գեղարվեստական գործեր են, մարդասիրական քնարերգության լավագույն նմուշներ: XVIII դարի երկրորդ կեսերի և XIX դարի առաջին տասնամյակների վրաց գրականության տեսաբանը շատ լավ կպատկերացնի, թե ինչ է նշանակում սայաթնույլան պոեզիա, որի վարպետությանը շատերը ձգտեցին:

Սայաթ-Նովայի խաղերը մի ուրիշ, և շատ կարևոր, նշանակություն ևս ունեցան: Ինչպես տեսանք, աշուղական պոեզիան վրացաբան դարձավ: Բայց Սայաթ-Նովայի գոյությունը արտակարգ մեծացրեց վերջինիս նկատմամբ ներկայացվող պահանջը: Աշուղական արվեստը, ըստ էության, վերաճեց գասական քերթության:

Բազմարժեք է Սայաթ-Նովայի նշանակությունը վրաց գրականության մեջ: Փեշանդ Փաշվիրերտղաձեն և Արշիլը ար-

⁸ Անդ, էջ 227:

դեն գրական նոր ուղղություն էին ստեղծել, այսպես կոչված «Ճշմարտասացություն», այն է՝ իրապատում թեմատիկա: Միջնադարյան տրադիցիոն թեմաները արդեն փոխարինվել էին (և դեռ փոխարինվում էին) վրաց ազգային կյանքից, պատմական կոնկրետ իրականությունից քաղվող նյութերով: Բայց այդ պոեզիան դեռևս բավական հեռու էր ժողովրդական, կենդանի բանահյուսական ակունքներից: Սայաթ-Նովայի ժառայություններից մեկն էլ կենդանի բառ ու բանի, ժողովրդական պատկերավոր մտքի ներդրումն էր գրականության մեջ: Բեսիկիի և Դ. Գուրամիշվիլու հետ միաժամանակ Սայաթ-Նովան դեմոկրատական բովանդակության, մատչելի ու անհատական քնարերգության առաջնեկներից մեկն էր ուշ միջնադարի վրաց մշակութիւնի պատմության մեջ:

Սայաթ-Նովայի վրացերեն գրած խաղերի մի մասն է միայն պահպանվել: Դժվար է կարծել, որ Վրաստանում տասնամյակներ ստեղծագործող բանաստեղծը ընդամենը 34—36 խաղ է վրացերեն հորինել: Վրաց գրականության տեսաբանը առ այսօր դժվարանում է ամփոփ և վերջնական խոսք տսել Սայաթ-Նովայի գրական ժառանգության շուրջը: Շատ խաղեր, ինչպես կարելի է ճշտել հայերեն պահպանված ժառանգության հետ համեմատելով, աղավաղ տարրերակներով են հասել մեզ, երբեմն նույնիսկ բանավոր աղբյուրից գրառված: Սայաթ-Նովայի վրացական խաղերը «սովորական մեղեղիներ» չեն, բայց եթե նրան հաջորդող «թափառական երդիները» երբեմն աշխատել են այդպիսին դարձնել՝ ապա դրանում Սայաթ-Նովան չէ մեղավորը:

Միանգամայն արդարացի էր Տ. Տարիձեն, երբ առաջարկում էր ուսումնասիրել աշուղական պոեզիայի ակունքները և Սայաթ-Նովայի ժառայությունը ամփոփել բազմակողմանի ուսումնասիրությունից հետո միայն: Սայաթ-Նովայի արվեստը լրիվ գնահատելու համար անհրաժեշտ է ուղեցույց ունենալ նաև նրա այլ լեզուներով գրված գործերը, այլապես գնահատականը միակողմանի կլինի:

Կ. Կեկելիձեն Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը երեք
խմբի է բաժանում. ա) ինքնակենսագրական (երկու խաղ),
բ) խրատական (չորս խաղ), գ) սիրո (մնացածը): Բաժանումը
կատարված է ըստ խաղերի բովանդակության: Բացառիկ ար-
ժեքավոր են առաջին խմբի երկու խաղերը, որոնք գրված են
պալատից հեռանալուց հետո:

Հաճախ ասում են, թե Սայաթ-Նովան գրել է Թիֆլիսի
բարբառով: Անհրաժեշտ է որոշ վերապահություն անել: XVIII
դարի Թիֆլիսի բարբառով գրված մի քանի վրացատառ աղ-
բյուրներ են պահպանվել: Եթե համեմատում ենք դրանք Սա-
յաթ-Նովայի խաղերի հետ, պարզորդ է դառնում, որ Թիֆլիսի
հայոց բարբառի հիմնական ձևաբանական-շարադրուսական
նորմերը պահպանված են, բայց բառագանձը լրիվ նույնը չէ.
Թիֆլիսի բարբառը չի ունիցել պարսկերենից, թուրքերենից
ու արաբերենից կատարված այնքան փոխառություն, որքան:
Սայաթ-Նովայի խաղերում ենք հանդիպում: Օտար բառերի
առատությունը անշուշտ նաև գեղարվեստական պատկերավոր-
ման հնարանք է, ավանդույթ՝ հանպատրաստի ասվող խաղի
համար, աշուղական պոելիայի բնույթին ու զարգացման այս
շրջանին հատուկ երեսույթ, ոչ միայն խոսակցական լեզվի
կիրառում: Վրացական խաղերում չունենք օտար բառերի
այնպիսի առատություն, ինչպես հայերենում է: Համեմատենք
երկու պատահական տուն՝ հայերեն և վրացերեն խաղերից.

Թամամ աշխար ովտուտ էկա, շը թողի Հաբաշ, նաղանի.

Զը տեսա քու դիգարի պիս՝ դուն դիփունէն բաշ, նաղանի.

Թե խամ հաբնիս, թե զար հաբնիս՝ կու շինիս դումաշ, նաղանի,
էնդու համա քու տեսնողն ուսում է վա՛շ, վա՛շ, նաղանի:

Ճօնճօնա նարո, ռյուռու լուլո, տաճա Շյնօա,

յրան տոյրանո, ագրության զանաՇյնօա,

մուգու նոյ մոմյլամ, նյլու ցոյքուրաց լաճա Շյնօա,

ծյլլծյլլո սըուրօս, ջացուրօս մաճա, Շյնօա,

մոչնյուրսա սեօնացե, Շյեմյենօա նաճա Շյնօա...

[Քի սաղ զու բա զարբար ու զար, օսկե կոճակ շարան-շարան-
կոսիս, ձևութ տակըն բլի Աղբբրիջան, իրան-Թուրան...]

Փոխառություններն են՝

Հ ա յ ե ր ե ն ո ւ մ

Վ ր ա ց ե ր ե ն ո ւ մ

1. թամամ— **تمام**—ամբողջ, ողջ, արար
2. դիղար— **دیدار**—տեսք
3. բաշ— **باش**—ավելի մեծ, զլխավոր
4. խամ— **خام**—հասարակ, սովորական
5. դար— **زر**—սոկի
6. դումաշ— **فماش**—քմաշ

1. նարո— **زر**—սոկի

2. թոշնորո— **مجنون**—սի-

բահար

Գրեթե նույն հարաբերությունն է նաև ամբողջական խաղեր համեմատելիս: Ստորև համադրվում են հայերեն «Յիս մի զարիբ բուլքուլի պես...» («Ինդ տուն») և վրացերեն „Թոջօ ևացահյոլո...“ ու „Տամոտեօդան զաթությոլո“ («Արի գողալ...», «Դրախտեն էլած մի աննման վարիթ իս դուն») երկու խաղերում (տաս տուն) հանդիպող օտար ծագում ունեցող բառերը.

Հ ա յ ե ր ե ն ո ւ մ

Վ ր ա ց ե ր ե ն ո ւ մ

1. զափազ— **قبص**
2. փիանդազ— **ازدار + پی**
3. իլթիմազ— **التماس**
4. աչայիբ— **عجایب**
5. սուբաթ— **صورت**
6. ուանդ— **رنگ**
7. սեյրան— **sejran**
8. հեյրան— **حیران**
9. բիրյան— **birjan** (համա)
10. դուլ— **قول**
11. հալս— **حق**
12. չրադ— **چراغ**
13. տուսազ— **دوزخ**
14. էշին— **عشق**
15. ուրգան— **عرقان**
16. ջունուն— **جنون**
17. բրուգ— **برقی**
18. ջուքամ— **جگن** (կամ) **جوکم**
19. չուն— **چیون**
20. լոխալ— **خیال**

1. սաղո— **ساقی**

2. մաօլո— **صایل**

II

3. մանա— **ماز** (?)

4. նունո— **زیان**

5. ոյօնճանո— **ازدار + پی**

6. օացունճո— **یاقوت**

7. սուրմա— **سورمه**

8. հացո— **جاپی**

9. ալո— **اعلی**

10. ջահի— **جرا**

21. դալ— قال
 22. բելլու— بلو
 23. շահանգաղ— شاهزاده
 24. զուսե— حصہ
 25. ահուզար— وزر— وزیر
 26. իլստիար— اختيار

Օտար բառերի գործածության այսքան նկատելի տարբերությունը հայերեն և վրացերեն խաղերում, թիրես հետևյալ երկու հանդամանքով բացատրվի:

ա) XVI—XVII դարերի հայ աշուղական պոեզիան (չի բացավում և դասական գրականությունը) հաճախ էր գործածում պարսկական-արաբական ծագում ունեցող և տվյալ բարբառում կիրառում ստացած բառեր: Սայաթ-Նովան ամենից առաջ աշուղ էր և, տվյալ դեպքում, արևելյան բառագանձր պատկերավորման հնարանք է: Հայ գրականության անցյալին դիտակ աշուղ Սայաթ-Նովան բանաստեղծական շափի ուժանքի հետ միաժամանակ իր հայազգի նախորդներից ժառանգել է և այս բառագանձը: Բայտ էության, օտար բառերի առկայությունը օգնում է ճշտելու Սայաթ-Նովայի աղերսը նախորդ շրջանի հայ աշուղական բանաստեղծությանը:

Սակայ չեն և այնպիսի բառերը, որոնք Սայաթ-Նովայի ստեղծագործությամբ են հայ բանաստեղծություն մտել:

բ) Բավական երկար ժամանակ վրացական արքունիքում և աղնառպական տներում տիրապետող էր պարսկալեզու աշուղական բանաստեղծությունը: Սայաթ-Նովան, ինչպես ինքն է նշում, պարսկերեն լեզուն փոխարինեց վրացերենով: Պիտք է կարծել, որ նման իրավիճակում պարսկերեն-արաբերեն բառերի շուայլ գործածումը (ինչպիսին հայերեն խաղերում է) կարող էր նորից ճանապարհ բացել պարսկերենի (նաև՝ թուրքերենի) համար, իսկ Սայաթ-Նովան իր վրացերեն խաղերով մերժում էր այդ հնարավորությունը: Այստեղից հետեւում է, որ Սայաթ-Նովան հայերեն և վրացերեն լեզուներով խաղեր հորինելիս հաշվի է առել իրավիճակի տարբերությունը: Անշուշտ նկատելի է եղել վրաց գրականության

մեջ և խոսակցական լեզվում օտարաբանությունների համեմատական պակասը: Վրաց աշուղական գրականության մեջ Սայաթ-Նովան չուներ այնպիսի նախորդներ, ինչպիսիք կային հայկականում:

Վերոնշյալ պարագաների հաշվառման դեպքում սայաթ-նովագետը հնարավորություն կունենա պատճառաբանել հայերեն և վրացերեն խաղերում նկատվող տարրերությունը, օտարաբանությունները համադրելիս չհակադրել մեկը մյուսին, այլ յուրաքանչյուրն իր միջավայրով մեկնել: Այս դեպքում կարելի է ավելի ճիշտ գնահատել Սայաթ-Նովայի գրական ժառանգությունը, նրա դերը հայ և վրաց գրականության պատմության մեջ:

2

Մամուկա Բարաթաշվիլու «Ճաշնիկի» («Գիրք բանու-սույց») աշխատությունը (գրված 1731 թվականին Վախտանգ VI-ի հանձնարարությամբ, Մոսկվայում)⁹ հնարավորություն-է տալիս ճշտելու նախասայաթնովյան շրջանի վրաց բանաս-տեղծության վիճակի ու հեռանկարների հետ առնչվող մի-շարք հարցեր: Այստեղ թվարկվում են վրաց քերթության-ավանդական ժանրերը, տաղաշափական ընդունված ձևերը¹⁰, քննարկվում են թեմատիկ հարցեր: Նշանավոր է, օրինակ, «Վատ պատմություններ շբանաստեղծելու» տեսությունը՝ Այստեղ, ըստ էության, դրվում է գրականության ճանաշողա-կան-դաստիարակչական նշանակության հարցը: Մամուկա Բարաթաշվիլին թերեւ առաջինը օգտագործեց ժողովրդական երգի (վրացական և ռուսական) հանգն ու շափը, պարզ ան-միջականությունը: Քեսիկին և Գուրամիշվիլիին որոշակի կի-բառել են Մ. Բարաթաշվիլու այս տեսությունը, հարկավ, ծա-

⁹ Վերջին հրատ. տե՛ս Ց. Թոյքարյան, մամուլի և պատմական առարկաների մասին, Երևան, 1950, էջ 125—144:

10 Թվարկում է 27 տեսակ՝ տաղաշափոթյամբ նրանք բաժանվում են
14 խմբին:

նոթ լինելով և վերջինիս բուն շափածո ստեղծագործություններին: Վրաց գրականագիտական մտքի առաջին տեսարանի՝ Մամուկա Բարաթավշվիլու համար (մահ. XVIII դարի 60-ական թվականներին), իհարկե, դժվար կլիներ պատկերացնել, որ իր տեսությունը շարադրելուց (1731) մի քանի տարի հետո Սայաթ-Նովայի ու Բեսիկիի արվեստը նոր ուղիներ պիտի բացեր: Դժվար էր, որովհետև չէր կարելի երևակայել, որ թուրքերին ու պարսկերեն երգվող ներբողական միտումներով օժաված աշուղական պոելիան կարող էր վրացարան դառնալ և վերաճել ճշմարիտ գրականության: Իր տեսությունները սահմանելիս նա ելնում էր վրացական դասական գրականության հնարավորություններից, բնականաբար, ուշադրություն ըդգարձնելով XVIII դարի Թիֆլիսի արհեստավորական խաղերին՝ ժողովրդական ինքնատիպ կոլորիտով ու բովանդակությամբ:

Սայաթ-Նովան իր դարի ամենահեղինակավոր բանաստեղծներից էր, մանավանդ եթե նկատի առնենք այն ժամանակի Թիֆլիսի սոցիալական խավերի ու նրանց զաղափարախոսության փոխարարակարությունը: Ժամանակի խոշորագույն բանաստեղծները չէին կարող չճանաչել հին Թիֆլիսի բոլոր անկյուններում, արքունիքում թե զարաշոխալիների քեֆերին երգվող, առած ու ասացվածք դարձած խաղերի հեղինակին՝ Սայաթ-Նովային: Եվ հիրավի, XVIII դարի ամենատաղանդավոր բանաստեղծներից մեկը՝ Բեսիկին, բավական երկար ժամանակ կրում էր Սայաթ-Նովայի անհերքելի ազդեցությունը (նա XVIII դարի նշանավոր գործիշ և գրող Զաքարիա Գաբաշվիլու որդին է)¹¹: Բեսիկին (1759—1791) շատ բաներով է բախտակից Սայաթ-Նովային: Բանասերներից շատերը նրա բանաստեղծություններում հանդիպող «թագուհի Աննան» նույնացնում են Հերակլ II քրոջ, ոմանք՝ Աննա Օրբելիանին հետ և այլն: Բոլոր դեպքերում Բեսիկիի ներշնչանքը ևս «Ան-

¹¹ Մահ. 1783 թվականին Գելաթում, տե՛ս Յ. Ֆազելովի, յա՞րությունը, 1958, էջ 663:

նա» է, եթե Հայլատանք, որ այդպես էր նաև Սայաթ-Նովայի մոտ: Բեսիկին ևս վտարվեց Հերակլի պալատից (1777): Կ. Կեկելիձեի կարծիքով վտարողը ոչ թե Հերակլ II էր, այլ Անտոն Ա.-ն: Այս դիպլածը գուցե կարելի է նկատի առնել Սայաթ-Նովայի ընդհարման պատճառները մեկնելիս, մանավանդ որ Անտոն Ա.-ին ծաղրող մի կալամբուր ունենք: Բեսիկին, բարեբախտաբար, Թիֆլիսից վտարվեց միայն, մինչդեռ Սայաթ-Նովան «սև սքեմ» հագալ:

Ինչ խոսք, ազգեցություն ասելիս կենսագրական այս ընդհանրությունը նկատի չունենք¹²: Ազբյուրների վկայությամբ Բեսիկին արտակարգ նվազող է եղել և շատ լավ ձայն է ունեցել: Այս ունակություններն ու ծանոթությունը Սայաթ-Նովայի գրական ժառանգությանը Բեսիկիին դրդել են հետեւել նրան, որել աշուղական խաղեր, կիրառել Սայաթ-Նովայի խաղերին բնորոշ տաղաշափություն ու խաղատեսակներ. ա) Բայաթի, բ) Ղափիա, զ) Մուստագադ (իմա Մուստաֆազադ), դ) Թախմիս, ե) Մուխամբազ և զ) Թեջլիս: Կ. Կեկելիձեն ափսոսում է որ «Բեսիկին իր փայլուն տաղանդը չխնայեց մեր մատենագրության մեջ աշուղական պոեզիայի տրադիցիաները ուժեղացնելուն», որ «դիտավորյալ պարսից հանգով գրում ու երգում է աշուղական պոեզիայի մուսամբազներ, մուստագազներ, և բայաթիներ, որոնք բնորոշ չեին վրացական պոեզիային»¹³: Այստեղից հետեւում է, որ զգալի է եղել Սայաթ-Նովայի ազգեցությունը իր ժամանակակիցների վրա, տվյալ դեպքում՝ Բեսիկիի, որովհետեւ նրանից առաջ վրացալեզու այսպիսի ոտանավորներ չկային: Սայաթ-Նովայի նմանողությամբ Բեսիկին ևս «պարսից հանգի վրացերեն խաղեր» էր զրում և մեծարվում ժամանակակիցների

12 Ոմանք այդպես են վարվում ն. Բարաթաշվիլու և ա. Արովյանի վերաբերմամբ, իրարից միանդամայն հեռու, անծանոթ ու այլախնդիր այս երկու մեծագույն հեղինակություններին աշխատում են «իրար ծանոթ դուրս բերել», բարեկամություն «ստեղծել». ճշմարիտ բարեկամությունը փառատերի անաշառ ու անկանխակալ մեկնությունն է:

13 Նշվ. աշխ., էջ 677:

կողմից: Բեսիկին հետեւ է Սայաթ-Նովային, որովհետև բառաստեղծական արվեստի այս բնագավառը հար ու ներդաշնակ էր իր ժամանակի պահանջներին, իր գրական միջավայրի արգասիք էր և իր գաղափարականությամբ ամենից ավելի դեմոկրատականն էր: Այս առումով շափաղանց հետաքրքիր է բանաստեղծ Վախտանգ Օրբելիանի (1812—1890) մի արտահայտությունը. «Ես չեմ սիրում մուխամբաղի ոճը,—կինտոների ոճը, շուկայական ոճը»: Այստեղ որոշակի արհամարհանք կա կինտոների (իսկ կինտոները ժողովրդական պարդ ու կենսուրախ մի զանգված էին) ու շուկայականների հանդեպ (այս գեղքում նկատի է առնվում առօրյա, ժողովրդական երգը): Բայց այդ արհամարհանքը ամենից առաջ Սայաթ-Նովայի ու Բեսիկի օգտին է, այդ մուխամբաղների հեղինակների օգտին: Բանաստեղծությունը ամենից առաջ ժողովրդական պետք է լինի, ժողովրդից բխող, նրան վերադարձլով: Բեսիկի բանաստեղծությունների մի նշանակալի մասը Սայաթ-Նովային է առնշակցվում ոչ միայն շափի ու ժանրի առումով, այլ նաև՝ ներքին բովանդակությամբ, ընդհանուր տրամադրությամբ: Բերենք մի երկու օրինակ.

Սայաթ-Նովա.

Իսօր իմ յարին տեսա բաղչի մեշքն ման դալով,
Գեղինքն զարթարվեցավ իմ յարի օսկե նալով.
Բըրբուլի պես պտուտ եկա վարթի վրա ձեն տալով,
Ջունուն լլատի խիլքսս դրվիսն, սիրաս ախուր, աշկս լալսվ.
Հույս ունիմ իմ ստիղծողիմեն՝ միր զուշմանն ըլի էս հալով:

Բեսիկի.

Ազցյ, ծյուլծյուլո, զարգօս և նուրբյոտ մյօնալց նաեց,—
ու պարագաներ ու տացու մոռագալ, գարև գայթաշեց,
զցցեն ծալնու Շեցուցանոս, նարցոն նաեց:
կը զարգօտ զարգօ առ մոցուցեց տացու նցօտա!¹⁴

[Վեր կաց, բլբուլ, վարդի սիրուն այգեստանին աղերսիր,—
թե բարկանա՝ զոհիր անձդ, այգու դուռը քեզ թաղիր,
գուցե դիմա, այգի թողնի, զու նարդիղի տեսքը նաշիր,
կոկոն վարդը, (թե ամաշես)՝ չի ընդունի քեզ իր կամքով:]

¹⁴ Բցենո Սայաթ-Նովա, 5, էջ 378:

Սայաթ-Նովա.

Էշխըտ վասից, նուր կըրակի տիղ չունիմ.
Աղաջում իմ, ուրիշ ճար ու դիղ չունիմ.
Սայաթ-Նովան կոսէ՝ վուշ մե միղ չունիմ,
Հերիք էրիս ու տաս էդքան ջաղա միզ:

Բեսիկի.

Եյ Ծբծոլու ցոլուտ Շեմօցպշո՞յծ, Շեն մյօմալցօծո—
ցօնօց հոմ մօչէկցօց Շեցպշո՞յլո, առ ցցծրալցօծո!
Համցենու հոցուտ ցըցէլուտ դամիցո, մօտ մցորս մալցօծո!
Շենսա մոջնշո՞յսա Շենո մօչէլացը ցըցէլուտ ալցօծո...
յիշտելու ալուրսց Շենո նոլցա Շենսա մնորցօծսա!¹⁵

[Բարի սրտով քնկ ևմ նայում՝ թագնվում ևս ինձանից,
Ուզում ևս որ անսեր մնամ, զութ չունենամ քեզանից,
Քանի անզամ կրակն ալրից՝ ուժ չմնաց քո սիրուց,
Քո մեջնունը սպանվում է քո խոկ վառած կրակից...
Կեց մի անզամ արժան արա արե-դեմքիւ տեսության:]

Բեսիկիի մոտ երեմն հանդիպում ենք այնպիսի արտա-
հայտությունների ու դարձկածքների, որոնց նմանակներն ու
տարբերակները հանդիպում են Սայաթ-Նովայի վրացերեն
խաղերում:

Սայաթ-Նովա

Բեսիկի

- | | |
|--|------------------------------|
| 1. հոմել յ՛րտուս..., հոմել յ՛րտել. | 1. համցենու հոցուտ... |
| (վուր մե...) (քանի անզամ) | (քանի անզամ) |
| 2. Լազգահղուս ծաղնու վկա ձամեյարցա | 2. Լեզգուս ծաղն Շեցըլ... |
| (սիրուհուս այզում խելքու կորցըի) | (սիրուս այդին մտա) |
| 3. յարո լու մյցոնա... | 3. Ծյ նանո վահցուս յարնո |
| (չինց իմացա զուսը բաց է...) | լունոն... |
| 4. հոմօւս մօծրմանցեծո, հյօմո | 4. հոմօւս ովնեծա Շեմօմեցօ... |
| ծածոնու | (կրք կլինի ուշ դարձնես) |
| 5. օնօւս ելլ միցուուսցան ոյմո մօշա..., | 5. Շեննո շնիցալու չոնցտ |
| (չնդկաց թագավորից հրաման կդա) | լունյահնո... |
| | (չնդկաց զորքի ունս) |

և այլն:

¹⁵ Անգ, էջ 380:

Բեսիկիի „համգոնօս հօցօտ“ («Քանի անգամ») արտա-
հայտության մեջ, ուշադիր լինելու դեպքում, կարելի է հայ-
կաբանության հնիաշեցառ որոնել՝ Սայաթ-Նովայի վերոբեր-
յալ դարձվածքի միջնորդավորմամբ։ Վրաց լեզվի համար այս
արտահայտությունը ոճաբանական քիչ արդարացում ունի,
մինչդեռ Սայաթ-Նովայի վկայված համազորը բացատրում է
այն։

Ուրիշ աշուղ-բանաստեղծներ կարելի է թվարկել, որոնք
կրել են Սայաթ-Նովայի ազդեցությունը։

Վրաց արքունիքի վերջին «ստղանդարը» Յարալի Շան-
շիաշվիլին էր։

Վրացական ձեռագրերում պահպանվել են այս աշուղի
խաղերը (Տ—3723, էջ 220—21)։ Ուշագրավ է «Սայաթ-Նո-
վայի հանգուլ, Յարալու ասած» „Տատլամաս ցյարծեց ոյթուլո
օճառօսացան“ խաղը¹⁶, ուր անկասկած վկայված է Սայաթ-
Նովայի որոշակի ազդեցությունը՝ ինչպես շափի ու ժանրի,
այնպես էլ՝ թեմայի ու կատարման առումով։

Անկասկած է XVIII—XIX դարագլխի աշուղներ Շամշի-
Մելքոնյի, Քիչիկ-Նովայի և Մաշտելայի երդերի նմանու-
թյունը Սայաթ-Նովայի խաղերին։

Վրացագետ Զաքարիա Ճիճինաձեն, օրինակ, Սայաթ-
Նովայի ազդեցությունը կրած աշուղներ է համարում Գարսե-
վան Դորդանովին, Մելքոնա Զանգիշվիլուն, Նիկողոս Զարի-
բաշվիլուն, Հովհան Օքուազվիլուն և այլոց¹⁷։ Այս ցուցակու-
կարելի է ավելացնել, եթե լրիւ ուսումնասիրվեն XVIII—
XIX դարերի վրաց ձեռագիր ժողովածուները։ Սայաթ-Նովայի
հետևորդներն են եղել նաև աշուղներ Բուղաղ-Օղլանը, Սեֆիլ-
Օղլանը, Լազաթ-Օղլանը, Գասպար Խոսրովը, մասամբ՝ Բե-
շչարա Զարի-Օղլին, Միրզաջանը, Ուստա Սաֆարը և ուրիշ-
ներ։ Սայաթ-Նովան թերևս Անդրկովկասի միակ բանաստեղծն

¹⁶ Տե՛ս ձեռ. Ա 2310։

¹⁷ „Ծրջոցօծա“, 1878, № 119.

է, որ Հետեւղների ու ազգվողների այսպիսի բանակ է ունեցել, անկախ նրանց ազգային պատկանելությունից:

Բեսիկից հետո Սայաթ-Նովայի ազգեցությունը կրած վրաց խոշորագույն բանաստեղծը Ալեքսանդր Ճավճավաձեն է (1786—1846): Վրացագետները Ա. Ճավճավաձեի ստեղծագործության մեջ ձեր և բովանդակության երկվություն են տեսնում: Նա օգտագործել է Սայաթ-Նովայի ու Բեսիկի բանաստեղծական նվաճումները, զուգադրել այն ֆրանսիական ռոմանտիզմի ու «անհատապաշտության» հետ, մի տեսակ նոր որակ ստեղծել: Բնորոշը, սակայն, նրա համար արևելյան քնարերգությունն է, Սայաթ-Նովայի ու Բեսիկի սահմանած նորությներով: Արևելյան պոեզիան Ճավճավաձեի ստեղծագործությամբ զարգացման նոր շրջան ապրեց:

Սայաթ-Նովայի ժառայություններից մեկն էլ, ինչպես արդեն նշվել է, անհատական քնարերգության զարգացումն է: Ա. Ճավճավաձեն ըստ արժանվույն ժառանգեց Սայաթ-Նովայի ու Բեսիկի վաստակը, չխուսափելով նոր ժամանակներում ստեղծված երանգավորումից:

Նոյզարովո, ծալսա Շենսա ցոշելո ցրծօնծն,—առևեծն հացա,
Նշովով Շենսա ցցելո ցրիու: ծյուր, ցուր, մեցու, ցմացա;
Եղլմի՞ոցյ եա՛ր տցոտ մձպրօնելո, Ծա՛թո մնա ցայցը, Ֆցոյց ևացա,
Ցշլյեծո ցցացը յցըշեցընմաց, ամաս մյու ցըրծօնծ լա տցոտ ևեցա...

[Անք ուժը ո՞վ չդիտե՞ ինչ որ կյանքում կա իրական,
Արեղան է քեզ հավատում, արքա, ծառա, աշխարհական,
Թագավոր ևս դու ինքնակալ ու դա՞ ունես ամենիքյան՝
Հպատակ են սրտերը քեզ, ևս այդ զիտեմ, զիտեն այնքան...^{18]}]

Արդարեւ նույն տրամադրությունն ու միտքն է արտահայտում նաև Սայաթ-Նովան, եթե նրա «գողալն» ու «յարը» ամփոփենք մի բառով՝ սեր.

18 Բանաստեղծությունը թարգմանված է Հայերեն («Վրաց գրակ. ընտիր էջեր», էջ 112), բայց բավական հեռու է բնագրից. ըստ երևությն՝ ռուսերենի միշնորդավորմամբ է: Բնագրի անմիջական տեսքը պահելու համար նորից ենք թարգմանում:

Քու թարիփըն ծովի շափ դավթար կուլի.
Քու տեսնողըն մերաշ սարեսար կուլի.
Աջա՞բ ամեն մարթ վոր ուզի, յար կուլի.
Տիսիտ կարոտ մեկը չէ՝ աշխար կուլի.
Աժբի տակեն դուս եկ արիվ, քու նազով:

Կամ'

Յարըս Հնդու Շահի իստիար ունե.
Ամեն հուքմը զըլուխ բերող ճար ունե.
Բրողե սինով անդին ակ ու քար ունե.
Սրբով, նիդով դուռը պահող ջար ունե...
Ո՞վ իս, Սայաթ-Նովա, մե շարքաշ իս դուն
(թարգմ. Մ. Հասրաթյանի)

Կամ'

Էշխըն վուր կա՞ հաղար բարաթ հանդ ունե.
Ուշկ ու միտկըն կու քնեցնե՞ բանդ ունե.
Բըռնածքն չի թողնի՞ զայիմ շանդ ունե.—
Էնդու համա՞ խան հիդ կեհամ, խան դու զամ:

Կարելի է այլ ընդհանրություններ էլ նշել:

Վերեռում նշեցինք, որ Մամուկա Բարաթաշվիլին տեսականորեն սահմանել էր վրաց զրականության մեջ գոյություն ունեցող բանաստեղծական շափիրը՝ 27 անուն, ըստ շափի՝ 14: Ալ. Ճավճավաձեն օգտագործեց, բացի ավանդականից, նաև Սայաթ-Նովայի, Բեսիկիի ու Դավիթ Գուրամիշվիլու շափական նորամուծությունները:

Ալ. Ճավճավաձեն հետեւում է Սայաթ-Նովայի կիրառած շափին, թեև նրա բանաստեղծության տրամաբանական շեշտր և վանկակարգը այլ է: Տարբերությունը մասսամբ Բեսիկիի ու Գուրամիշվիլու միջնորդավորման արդյունք է, իսկ հիմնականում՝ Ճավճավաձեի մուծած բարեփոխության:

Սայաթ-Նովայի ստեղծագործությանն առնչվող հաջորդ նշանավոր բանաստեղծը Գրիգոր Օրբելիանին է (1800—1883)¹⁹: Թեև պաշտոնով նույնիսկ փոխարքայության հա-

19 Վրացերենում, իրեւ օրինաշափություն, նույն բառում հանդիպող երկու «ըր»-երից երկրորդը «Ը-է դառնում, այստեղից էլ Գրիգոր>Գրիգոր (հմմ. Սոմեցիո—սոմիուրի, բայց Ճանուշլո—քարթուիկէ քարթուրի—վրացերեն):

սակ, բայց բնավորությամբ այս ուրախ մարդը մինչև վերջ էլ պապական Թիֆլիսի ու նրա ինքնատիպ գրականության լավագույն երկրպագուն մնաց, ինքը ևս ստեղծեց նշանավոր մուխամբաղներ: Օրբելիանիին հուզարկավորելիս «ղարաշոխալիները» այսպիսի մակագրություն՝ ունեցող պսակ էին տանում. «Դու ընկած եղբորդ ձեռ մեկնեցիր, բարձրացրիր»: Ժամանակին նրան «Երգի արքա» անվանեցին: Եվ ահա «Երգի արքա» Գր. Օրբելիանին արտակարգ սիրով ու արժանավորությամբ է ժառանգում Սայաթ-Նովայի տրադիցիան: Նրա նմանողությամբ խաղեր է գրում: Բանաստեղծություններից մեկը ուղղակի կոչվում է «Սայաթ-Նովայի նմանողությամբ»²⁰, որ իրեն բնաբան է բերվում մեծ երգի նշանավոր խոսքերը.

„Անձանա զուր, Տօնցութ Շոնա զա՞ն,
Տաօտա-Նոզա ծյցօն, Արշուտոնա զա՞ն“,
[Այրենը գիտեմ, խորով Հաջող եմ
Սայաթ-Նովա՝ Հարությունը ես եմ:]

Իսկ մի այլ բանաստեղծության բնաբանում նորից կարգում հնք

„Իռօգու ծոճ՛րմանցցեծո, հյօթո ծածռոն,
Ծյեշշեց ցացշալու ցուանցանատա“.

[Երբ ես գալու, դու իմ բատոն՝
Ոտքիդ տակ փուլեմ փիանդաղի պես:]

Զենք տառմ, թե բանաստեղծի ընարած յուրաքանչյուր բնաբան միայն աղքեցության արդյունք է: Բայց այստեղ իսկապես աղքեցության հետ գործ ունենք, մանավանդ որ հեղինակը մի այլ առիթով առկոչում է Շամշի-Մելքոյի «Մուխամբաղ», ինչ քաղցր ձայն ես» խոսքերը, իսկ մուխամբաղը «քաղցր ձայնի» իրավունք ստացավ հենց Սայաթ-Նովայի ստեղծագործությամբ: Եթենք մի փոքրիկ հատված Գր. Օրբելիանիի մուխամբաղից՝ համոզվելու համար, որ Սայաթ-Նովայի աղքեցությունը տակա է.

²⁰ Տե՛ս „Տալճնոն Տանցա՛րո“, 1875, էջ 150—58, զրված է Հավլաքարի «Կապարմայում», բանատարկության ժամանակ 1833 թ., հմմ. „ՅՈՒՆԵՐՈՒՄ“, 1863, № 9, էջ 147—148:

„ო՛րտակալուս ծալֆո մնաեց զօնա զար,
ջարդումանգուս լղինֆո մնաեց զօնա զար,
ջամուտ Ծռլլշմձա՛ֆո մնաեց զօնա զար,
ածա թշթէրու-կըրուցի մնաեց զօնա զար.
մաժոն Շեցոյպարճք, Ֆեռյազա: Ժվորդասո նան.
զօնդ մեծոնաս, մանց Սշլլֆո մոնիօնար,
ուզալս ազանցլ, նեզ Բամբամնց մոնիօնար...“

[Օրթաճակի այլում տես թե ով ևմ ևս,
Դարդիմանդի քեֆում տես թե ով ևմ ևս,
Դինու լեցուն թասով տես թե ով ևմ ևս,
Բունցքամարտ տալիս տես թե ով ևմ ևս
եթե սիրես «զու իմ լավն ևս» ինձ կասես...
Թե քնած ևմ՝ հոգուս մեջ ևս դու նստած,
Աչքս բացեմ՝ թարթիշներիս ևս նստած...]²¹

Հմմ. Սայաթ-Նովա.

Ինչ զարբար իմ, ինչ ատլաս իմ, յիս ի՞նչ զար իմ, դի՞զիս, աչար.
Մանիշակի, վարթի կարոտ ի՞նչ զեփյուռ իմ, դի՞զիս, աչար.
Գիշեր-ցերեկ սազը ձեռիս մեն նոքար իմ, դի՞զիս, աչար.
Բա ի՞նչպիս է՝ դուն չիմացար. խելազար իմ, դի՞զիս, աչար:

Դուն չասիս թե էս խիղճ սաղանդարն ո՞վ ա,
Խոսկիս տերն իմ, հունարըս էլ զըրով ա,
Արութինն իմ, ինձ կոսին Սայաթ-Նովա.
Հենց բան կոսիմ, վուր ամբերում ձեն հանի:

Այսպիսով, XVIII դարի և XIX դարի առաջին կեսի վերոհիշյալ վրաց մի քանի բանաստեղծները, բացի Հայտնի ու անհայտ աշուղներից, կրել են Սայաթ-Նովայի խաղերի ազգեցությունը: Ինքնին հասկանալի է, որ միայն խոշոր բանաստեղծի երգերը, միայն միջավայրին ու իր ժամանակի ժողովրդական գաղափարներին հարազատ երգերը կարող էին այսպիսի տարածում ունենալ:

Զի կարելի ասել, թե XIX դարի առաջին կեսից հետո չեղան Սայաթ-Նովայի ազդեցությունը կրող վրաց բանաստեղծ-

21 Թարգմ. Պ. Սևակի, տե՛ս «Վրաց գրակ. ընտիր էջեր», էջ 116, «Տեսարարով և ևս»-ը փոխարինում ենք «տես թե ով ևմ ևս»-ով՝ ինչպիս վրացերին բնագրում է:

ներ: Ուշագրալ է, որ Անտ. Փուրցեալաձեն, իբրև բնաբան վկայակուել է Սայաթ-Նովայի դեռևս անհայտ խաղի մի քառատողը.

Ըստ առաջինության աշխատավայրի պատճենագիրը կազմված է առաջին աշխատավայրի վեհական մասին՝ առաջին աշխատավայրի պատճենագիրը կազմված է առաջին աշխատավայրի վեհական մասին՝ առաջին աշխատավայրի պատճենագիրը:

Մի որոշ շրջանում Սայաթ-Նովայի (այս դեպքում՝ Հին Թիֆլիսի բառ ու բանի) ազգեցության կնիքն են կրել ի. Գրիշաշվիլու բանաստեղծությունները, մանավանդ ստեղծագործության առաջին շրջանում: Թիֆլիսի հատ ու կենտ մնացած «զարաշուալիները» իրենց երգացանկում ունեին նաև մի երկու երգ Գրիշաշվիլու տեքստերով²²:

²² Տե՛ս „Յուղածովունություն“ էջ 61, հմմ. ցը օ՛Շա Ց օ լլ ո, Տաօտնօցա 1918, էջ 52: Առաջին առդի աշխատավանությամբ ենք «թագ» թարգմանում, բառացի այն «թասակ» է նշանակում: Կարելի է շկսնկածել, որ Սայաթ-Նովայի վրացական խաղերի մի մասը դեռևս անհայտ է բանասիրությանը: Վերորեցալ քառատողը այդ է վկայում:

²³ Ենթանազարդ բանաստեղծը Հին Թիֆլիսով հետաքրքրվող իր հյուրերին այսօր էլ այդ երգերի տնկնդրմամբ է հիացնում, պտտելով հնամենի «Արդանի» բռնակը:

ՍՏԵՓԱՆՈՍԻ ԱՆՌՈՒՌՈՎ ՀԱՅՏՆԻ ԽՆԾ ԽԱՂԵՐԻ
ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԸ

(Սայաթ-Նովա-Ստեփանոս և Ստեփանոս Դերձակ-Մաշնուն)

Սայաթնովագիտության արդի վիճակում դեռևս կան վիճելի ու դիտական մանրազնին քննություն պահանջող հարցեր կամ հարցադրումներ: Դրանցից մեկը Սայաթ-Նովա-Ստեփանոսի և Ստեփանոս Դերձակ-Մաշնունի նույնանձնության կամ տարբեր հեղինակներ լինելու հարցն է:

1930 թվականին Թբիլիսիում լույս տեսան Սայաթ-Նովային վերաբերող երկու մենագրություններ. կ. Մելիքսեթ-Բեկի «Սայաթ-Նովա» քննական-կենսագրական ակնարկը¹ և գ. Առոնիձեի «Երդիչ Սայաթ-Նովա» կենսագրական ակնարկը²: Մենագրությունները գրված են միաժամանակ, բայց իրարից անկախ³: Սայաթնովագիտության մեջ առաջին անգամ Ստեփանոս Դերձակի և Սայաթ-Նովայի նույնանձնության կամ տարբեր հեղինակներ լինելու հարցադրում կատարվեց: կ. Մելիքսեթ-Բեկը առաջինը արտահայտվեց հօգուտ նույնանձնության՝ աշխատության հավելվածում հրապարակելով՝ մինչ

¹ լո. Թ յ լ ո յ ե տ - ծ յ զ ո, Սաօտնօվա (ՀՀՌԾՈՅՄԼ-ԾՈՎՃՐԱԳՐԱԳՈՒՅՆ ՅՑՈՒՑՈ), յահուղու Ֆոքն, 1930.

² գ. Ը յ ո ն ո յ ե, մցուան Սաօտնօվա (ԾՈՎՃՐԱԳՐԱԳՈՒՅՆ յՍԺՈՒՅ), 1930 ամ հրատ. ժոյնուանու., 1949, էջ 262—303: Վկայակոչում ենք վերջին հրատարակությունը:

³ Իրար չեն վկայականում:

այդ անհայտ Ստեփանոս Դերձակի խաղերը (9—1): Գ. Լեռ-նիձեն մերժեց նույնանձնությունը՝ Ստեփանոս Դերձակին Ստ-յաթ-Նովայի թույլ հետևորդ հայտաբարեկով:

Կ. Կհկելիձեն, ըստ էության, համաձայնեց և. Մհլիքսիլ-
Բեկի վարկածին⁴:

Մինչև այսօր խնդիրը լուծված չէ: Լ. Մելքոնեթ-Բեկը շարում է պնդել նույնանձնությունը (Հարակից մի շաբթ այլ հարցազրություներով), իսկ մյուտաները՝ հակառակ փաստարկներ չունենալով, լոելլայն կամ հայտարարությամբ մերժում են:

Գուցե հնարավոր կլիներ կարեռություն շտալ սայաթ-նովագիտության այս խնդրին, եթե այն չվերաբերեր Սայաթ-նովայի զբական ժառանգությանը (նաև՝ մասնագիտությանը, կենսագրական մանրամասներին, բանաստեղծական արվեստին):

Վրաց S-1543 ձեռագրում „ցշլութամ օրա ՑՇՇՐԸ“ խաղը «Սայաթ-Նովայի; ասած մովսամբազ» խորագիրն ունի (էջ 33), այսինքն՝ Սայաթ-Նովայի խաղն է⁵, իսկ մի այլ գրչագրում (S-3686) Ստեփանոս Դերձակի հեղինակությամբ է հայտնի (էջ 49): Նույն վիճակում է նաև „ուզալած լամածո, დամանած Ցյենո ծոհո թյ“ խաղը՝ նշված երկու ձեռագրերում⁶: Բայց հարցը սրանով չի վերջանում: Եթե ընդունենք, որ խաղը Ստեփանոս Դերձակինն է, (հետեւաբար սխալվում է S-3686 դրիշը), ապա Սայաթ-Նովայի գրական ժառանգությունից պիտի հանենք մեկ-երկու խաղ, իսկ եթե ընդունենք, որ սխալվում է S-1543 գրչագրի կազմողը, այսինքն Դերձակի անու-

⁵ Հրատարակված է. „յարտ. յշուսից“, Տաճար-Արքայի ծննդարձ, 1863, հատ. 2, էջ 120—21, Տյանդար-Եղանակ, „Տալիսին Տաճարակություն“, 1875, էջ 66—67, Առաջնը 1895, 1912, ո. Ց Ռ Ո Շ Ա Ց Ո Լ Ո, Տաճար, 1918, էջ 106:

⁶ Խաղը հայտնաբերել ու առաջին անգամ հրապարակել է Կ. Կեկելիձեն, տե՛ս նրա „Ժա՛րու. Ընթ. օսტ.“, հ. 2, 1924, էջ 685—86, ապա՝ 1941, 1952, 1958 թթ., նույն խաղը տե՛ս լ. մշտով օժանդակություն ծագութեան մասին պատճեան, էջ 152:

նով հայտնի երկու խաղը Սայաթ-Նովայինն է, ապա ստիպված ենք հետևողական լինել և Սայաթ-Նովային վերաբրու Դերձակի մյուս յոթ խաղերը, ուրիմն՝ նույնացնել Սայաթ-Նովային և Ստեփանոս Դերձակին: Այսպիսին է հարցը ըստ էռթյան⁷:

* * *

Մատենագարանի № 4270 ձեռագրի հիշատակարանների (էջ 1ա, 37բ, 100բ, 170բ, 276բ) ուսումնասիրությամբ Սայաթ-Նովայի քահանա ձեռնադրվելուց հետո ակը Ստեփանոս կոչվելը այլևս անառարկելի է: Հիշատակարաններից մեկը ուղղակի անում է.

«Թուին Հայոց ՌՄՁԵ (1215+551=1766)... Գրեցու ի Կախոյ Քարվանսարէն. ով բնթերցող, յիշեայ զգծող պրոյս [զ]մեղապարտ Ստեփանոս քահանայս, որ Սահագ Նովայ կոչեն և [զ]հայրն իմ մահակու Կարապետն և [զ]մայրն իմ Սարրայ և դուք յիշեալ (resp: յիշեալ) լինիք յառաջի Աստուծոյ» (էջ 276բ):

Ուրիմն՝ Արութին (resp: Հարություն) — Սայաթ-Նովա-Ստեփանոս⁸: Մի հիշատակարանում (էջ 170բ) Ստեփանոսին հարադիր է «թլիսցի<թվացցի resp: թվիսացցի» վերդիբը: Կասկած չկա, որ «ի Կախոյ Քարվանսարէն» դրչագրող Ստեփանոս թվիսացցի քահանան նույն Սայաթ-Նովան է⁹: Այժմ

⁷ Հմմ. օլ. թ ց լ ո յ ն ց ո - ծ ց ո, անդ, էջ 94:

⁸ Սահագ ձեւ, ինքնազիր լինելով հանդերձ, պետք է ուղղել՝ Սայաթ-Նախ՝ այսպիս է զրված բոլոր բանաստեղծություններում (վրացերենում երբեմն՝ Խատճաշ, Խատլամա և ալլն, բայց միշտ „տ“ — «թ»), այդ թվում նաև նշանավոր դավթարում, զրված 1765 թվականին և ապա՝ նույնի № 4270 ձեռագրի այլ հիշատակարանում ունենք «Սայիադնով» (տես էջ 37բ), որ նույնպիս ինքնազիր է: Առհասարակ Սայաթ-Նովայի ինքնազիր հիշատակարանները խիստ հակասական ուղղագրություն ունեն (հմմ. Ստեփանոս]] Ստեփանոս, Սարրայ]] Սառայ և ալլն):

⁹ Հայոց եկեղեցին, ի տարրերություն երկարնակ և կաթոլիկ եկեղեցիների, արեգա կամ վարդապետ ձեռնադրելիս չի փոխում օծվողի անունը՝ եթե վերջինս քահանայություն ընդունելիս արդին փոխել է իր աշխարհական անունը:

Հետաքրքիր է անդրադառնալ Սայաթ-Նովայի դավթարի երկու վրացերեն հիշատակագրություններին (էջ 24, 84), որոնք, որքանով մեղ հայտնի է, դեռևս հայերեն թարգմանված ու ուսումնասիրված չեն: Ահա նրանք.

“) ქ. ნეტ[ა]ი ღმერთმა ტერ
სტეფანას შავიღობით მოიღვნოს,
მე ეს დავთარი წამიკითხონოს
მე (!), ამისი აზრი არ დარჩეს, და
ჩემი თავი იმას ეძღახუროს.

Երանի աստված Տեր-Մուսիանին
խաղաղությամբ վերադարձնի (բառացի՝ բերի), [որ] այս գալիքարը ինձ
կարգալ տա, սրա (զավթարի) իմաստն
[անկատար] շմնա և իմ զլուխը նրան:
Ճառաւի:

۱۰) ქ. ნეტ[ა]ი ტერ სტეფანი შავიდობით მოვიდეს, მე ეს წიგნი წამიკითხოს თავის შავილების საღლვებრძელოთ, და ჩემი აზრი არ დარჩეს, და ჩემი ცოდვილი თავი იმას ემსახუროს, ამინ.¹⁰

Երանի Տեր-Ստեփանը խաղաղությամբ զա, ինձ [Համար] կարգա այս գիրքը՝ ի ողջություն իր որդոց, և իմ նպատակը (բառացի՝ միտքը) [անկատարը] շման, և ու մեղավոր զլուխը նրան ծառայի:

Հիշատակագրության Տեր-Ստեփանը (հ.՝ Ստեփանոս) նույն Սալաթ-Նովան է, որովհետեւ

ա) Հիշատակագրողը «դավթարի» կամ «գրքի» (ինչպես ժողովածուի) հեղինակի գալուն է երանի ասում, իսկ դավթարը Սայաթ-Նովայի ժողովածուն է՝ հայերեն և աղբքեցաներեն՝ խաղերի (հայերենը՝ վրացատառ, աղբքեցաներեն՝ հայատառ):

բ) Մատենադարանի № 4270 ձեռագրի վերոնշյալ հիշատակարաններից Տեր-Մտեփաննոսի և Սայաթ-Նովայի նույն անձնավորությունը լինելը վաղուց ընդունված ճշմարտություն է:

Իսկ ե՞րբ է զրոյիլ այս հիշատակագրությունը: Ամենայն հավանականությամբ 1768—1770 թվականների միջև, որովհետո,

ա) Հովհան Պենտելաշվիլին (դավթարում՝ Պենտելանց) դավթարի գրչագրումն ավարտել է 1765 թվականին, իսկ հիշատակագրողի ձեռագիրը նկատելի տարբերվում է դավթա-

¹⁰ Հմ. Թեղոյնիստ - Յաջո, Խշկ. աշխ., էջ 88-89,

րի գրչությունից: Ուրեմն, գրված է դավթարք կազմելուց հետո այլ անձնավորության կողմից¹¹: Սայաթ-Նովան, ինչպես Հայտնի է, արեղա կարող էր ձեռնադրվել կնոջ մահից հետո (1768), ընդունված է ասել 70-ական թվականներին: Իսկ հիշատակագրովը դեռ հույս ունի, որ Սայաթ-Նովան կվերադառնա, այսինքն՝ կթողնի բահանայությունն ու իր դավթարով (իմա աշշուղությամբ) կզրադվի: Այսպիսի հույս կարող էր լինել միայն արեղա ձեռնադրվելուց առաջ, ճիշտ այն շըրջանում, երբ Սայաթ-Նովան ինքն էլ վերադառնալու ակնկալություն ուներ (Հմմ. «Երդար դատե, չե որ թագավոր հս դու» խաղը):

բ) Երկրորդ հիշատակագրությունում որոշակի տաված է. «ի ողջություն իր որդոց»: Մեր կարծիքով այստեղ նկատի է առնված կնոջ մահից հետո Սայաթ-Նովայի ընտանեկան վիճակը, մանավանդ որ, մասնագետների հաշվումներով, դեռ անշափահաս երեխաններ ուներ:

Եթե մեր նկատառումները թյուր չեն, ապա կարելի է եղբակացնել, որ Կախո Քարվանսարայից վերադառնալու հույսը բավական ամուր է եղել Սայաթ-Նովային ճանաշող շրջաններում: Սա արդեն կենսազրական կարեսը տեղիկություն է:

Թե ով է հիշատակագրովը՝ չդիտենք: «Ինձ կարդալ տա», «Ինձ համար կարդա», «Իմ զլուխը նրան ծառայի», «Իմ նըսպատակն անկատար չմնա» արտահայտությունները հուզում են, որ գրովը Սայաթ-Նովայի արկեստի երկրպագուն է և, որ զլխալսրն է, գուցե նրա երաժշտական խմբակիցը: Պարզ է նաև, որ այս անծանօթ երկրպագուն հայ է. գրում է թօոլզանուն միևնույն թօոլզանուն (ց և լ հնչյունների տարբերությունը հա-

11 Պենտեաշվիլին Քարթիի ու Կախքի թագավորի ատենագվիրն էր, Հայազգի: Նա է «Աղուէսազրբի» հայերենից վրացերեն թարգմանողը, տես Թբ. Զեռ. ինստ. Ա-1786 (ինքնազիրը), իսկ նրա գրած հրովարտակներն ու իրեն վերաբերող նյութերը տես Զեռ. ինստ. Խd-4854 Վրաստանի կենտ. պատմ. արխիվ. ֆ. 1448, փաստ. № 4969, 974, 1010, 5645, ֆ. 226, փաստ. 5728:

յախոսը չի զգում) և ապա՝ առաջին Հիշատակագրության
վաճառքութեօնու (նաև՝ վաճառքութեօն) բառը ինքնին նշանակում
է «նա ինձ կարդալ տա», այլևս ավելորդ էր „թյ“ («ինձ»)
հատկացուցիչը, այն էլ երկու անգամ կրկնված: Հայազգին
դժվար է տարբերում վրաց բայց բազմազիմությունը:

Այսպիսով, մի նոր աղբյուրով ևս հաստատվում է, որ
Տեր-Ստեփանոսը նույն Սայաթ-Նովան է:

Բայց, ինչպես նկատել է Լ. Մելիքսեթ-Բեկը¹², XVIII դա-
րում թիֆլիսեցի մի քանի Տեր-Ստեփանոսներ են հայտնի.

1. Տեր-Ստեփանոս, եղբայրը՝ Օհան քահանա, կինը՝
Մարիամ: Հիշատակված է «բերդի փոքր» կամ Հրեշտակա-
պետաց հեղեղցու մուտքի 1781 թվականի արձանագրության
մեջ¹³: Սայաթ-Նովայի կինը մահացել է 1768 թվականին,
իսկ այս Մարիամը կենդանի է Հիշվում 1781 թվականին:
Ուրեմն՝ այլ Ստեփանոս է:

2. Տեր-Ստեփանոս, եղբայրը՝ Տեր-Աբրահամ, ազգա-
նունը՝ Տեր-Հարությունյան¹⁴, կենդանի 1805 թվականին:

Ուրեմն այլ Ստեփանոս է:

3. Ստեփանոս թիֆլիսեցի, «մուլքանաճի» էջմիածնում
1788 թվականին¹⁵: Սայաթ-Նովա-Ստեփանոսը էջմիածնում
չի «հովվել», ուրեմն՝ այլ Ստեփանոս է:

12 Նշվ. աշխ., էջ 89:

13 Տեքստը՝ անդ. էջ 76: Եկեղեցին այժմ քանդված է, որոշ տվյալների
համաձայն «նազշված» է եղել Հովինաթանաների կողմից, 1792 թվակա-
նին: Անանուն հնագետի 1837 թվականի հիշատակած 22 հայկական եկե-
ղեցիներից իններորդն է: (Զեռ, Տ-3034, հրատ. սիցին Ցըցնօցինչաւ,
№ 1, էջ 81—96, քաղվածարար հայ. թարգմ. տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրայ
աղբյուրները... հատ. 9, էջ 264—271, համառոտ մատնագիտությունը՝
անդ, էջ 273, ծան. 11):

14 Գիտ. ա. ք. Աղանեանց, Գիտան.., Հ. 3, էջ 688, Հ. 5, էջ 199, 202,
236 և այլն: Հմմ. Ը. ծըլով օյլ տ-ծըլո, նշվ. աշխ., էջ 89—90:

15 Գիտ. ա. ք. Աղանեանց, նշվ. աշխ., հատ. 9, էջ 83 և 87 (Ղուկաս
Կաթ-ի նամակը առ Յովսեփ Արդութեանցին): «Ստեփանոս անուն սեազդուին
մուլքանաճի» արտահայտության «սեազդուիը» ու թե «սեահեր, սեամազ»
և նշանակում, ինչպես թարգմանել է Լ. Մելիքսեթ-Բեկը (նշվ. աշխ., էջ 91,—

4. Ստեփան վարդապետ, Հիշատակված է Մատենադարանի № 7174 ձեռագրի Հիշատակագրության մեջ (էջ 213բ) «...Հոգիազարդ և հոգեոր հայրս իմու աստվածաբան և քաջ քարող Ստեփան վարդապետին»¹⁶: Ձեռագիրը բովանդակությամբ հայ-վրացերեն բառարան է, Հիտեաբար այս Ստեփանը նույնպես առնչվում է վրաց միջավայրի հետ (Հիշատակագրողը ձեռագրի ընդօրինակողը կամ հեղինակն է):

5. Տեր-Ստեփան, Կ. Կեկելիձեի անվան Ձեռագրերի ինստիտուտի (Թբիլիսի) հայկական համաքաժողովի № 22 ձեռագրի վրացերեն Հիշատակագրություններից մեկում կարդում ենք.

յառանույոննա յնձգ (=264) հաց
մուցալցածոցո արահենցը ճացոտ
ցարտացեցիս ազբյալոց ան Ծա-
նօսամօսո ան քշորշեցո սեոլցեց-
լո, ցայլա ամու յ ցամոտ նոնցուցա-
գանցը մը, Ծյոր-սԾյոցանս Շոմ-
ծարցա.

հաց Սոմնուրո ցոյշեծո ան ֆյորո-
լո ֆոցնցեր մայքս, ամու յ ցամոտ
մոնցը ճա սալցարշո Մեցոնանցետ.

Քրոնիկանի 264 (=1796) ինձ
Տեր-Ստեփանիս, հանձնաբարվեց հաշ-
վելու հանգույցալ առաջնորդ Դավիթ
վարդապետի (իմա' ս. Գևորգ Ակելե-
ցու) գուլքը, հանդերձանքը, պղնձա-
մանները, ամենը ստորև նկարագր-
ված են:

Հայոց ինչ զբքեր ու զրբուկներ ու
ունիմ (պետք է լինի՝ կա—Պ. Մ.)
ստորև եմ զրանցել, և պահեցինք տա-
ճաբում:

Այս Ստեփանը ևս թիֆլիսիցի է: Վրացերենի «առաջնուրդ»,
«վարրապետ», «Գիքերի» և այլ բառեր, որ նույնությամբ են
պահած, կրում են Թիֆլիսի հայոց բարրափին հատուկ հրն-

«Յացունցալ») այլ «սկսումութ, անիծյալ, ոչ բարով», որովհետեւ՝ «որոյ
աղաքաւ ոչ կարացաք շուտով զգլուխ թափել ի վշտալի հոգոց...» (Դիան...
Հ. 9, էջ 83):

16 Պ. Մուրագյան, Մի էջ հայ-վրացական բառարանագրությունից
«Բանբեր Ստեփանաղարանի», 1960, № 5, էջ 325:

Վրացական աղբյուրներում նշվող «Ստեփան» ձեր հյ. նույն Ստեփա-
նոսն է: Սովորաբար հունական „օչ“ վերջավորություն ունեցող անձնա-
նունները վրացերեն են փոխադրվում կամ նշված վերջավորության օտար-
մամբ, կամ փոխարինվում „թ“-ով (ՆԾԵցանց): „Ճահուլուս Ծննդյան“-ում
կան մի երկու բացառություններ, իսկ „օչ“-ը պահելիս վերջին „օչ“
տառադրածում են „թ“-ով (Հմմ. Գայող, Նիկոլով, Կաթողիկող):

շանափոխություն, մանավանդ «առաջնուրդ»-ը (նաև՝ մաշտուցի, նարիկի, միկնիչ):

Մեր կարծիքով սա ևս Սայաթ-Նովա-Ստեփանոսը չէ, որովհետեւ՝

ա. Սայաթ-Նովան իրեն այլևս Տեր-Ստեփան չէր կոչի, վաղուց արդեն աբեղա էր ձեռնադրուել, իսկ ինսունական թվականներին արդեն վարդապետ էր, ինչպես վկայում է վրաց Հովհան Արքայազնը¹⁷: Եթե դուքքազրողը Սայաթ-Նովան լիներ, ապա Տեր-Ստեփանի փոխարեն կունենայինք Ստեփան[ոս] վարդապետ:

բ. Դեռևս վերջնականապես ապացուցված չէ, որ Սայաթ-Նովան 1795 թվականի աղետից հետո կենդանի է եղել: Գույքազրումը հասարակ բան է և բարձրաստիճան հոգեորականի հանձնարարելու անհրաժեշտություն հազիվ թե լիներ:

դ. Անկարեիի է, որ 20—25 տարի Հաղպատի նշանավոր վանքում ծառայելուց հետո Սայաթ-Նովան վերջնականապես շնչմտահար գրաբարի իմացությանը՝ և դուքքազրելիս վրացերենի այսպիսի ազդեցություն նկատվեր. «Մաշտուցի» (Մաշտոց), «Նարիկի» (Նարեկ), «Մաթեուլ Միկնիչի» (Մաթեոս Միկնիչ), «Իգնիկ» (Եղնիկ), «Արարշութիանցի» Իվախիսի (Արարշություն Եվայի), «Բոսարանի» (Զբոսարան), «Պարակիսի» (Աստվածապերս), «Տոնացուցի» (Տոնացուց) և այլն:

դ. «Զեռազիր շարակնոց»-ը ցուցակազրելիս ավելացում է. „Ծյո՛ օրոյելուստան օրուս“ («Տեր-Առաքելի մոտ է»): Պարզ երեսում է, որ դուքքազրողը լավ ծանոթ է Թիֆլիսի հայ հոգեորականներին, ճանաչում է քահանա Տեր-Առաքելին: Իսկ 20—25 տարի Հաղպատում գտնվող Սայաթ-Նովան հազիվ առիթ ունենար մոռիկից ճանաչելու: Զպիտի մոռանալ, որ Սայաթ-Նովայի մզումնեոր ճանաչող Հաղպատի հոգեորականները հազիվ լին թույլ տային նրան հաճախակի երթեկել ունենալ Թիֆլիս:

ե. Այս Տեր-Ստեփանը, մեր կարծիքով, «Բերդի փոքր ժամի» 1781 թվականի արձանագրության մեջ հիշատակված

¹⁷ ոճալուսածա», հ. I, 1936, էջ 226—227:

Տեր-Ստեփանն է, մանավանդ որ, ինչպես կարելի է կռա՞նել արձանագրությունից, մոտիկից է ճանաշել հանգույցալ առաջնորդին՝ Դաւիթ եպիսկոպոսին։ Իբրև այդպիսի մարդու գույքագրումը կարող էին նրան հանձնարարել։ Արձանագրությունն այս է։

«Շնորհիւն աստուծոյ նորոգեցաւ սուրբ եկեղեցիս իբր ի հրամանէ ի ժամանակս Պուկաս կաթողիկոսին եւ Հաղպատու առաջնորդ Դաւիթ եպիսկոպոսին եւ Հերակլ արքային վրաց եւ Դավիթ սարդարին, արքեամբք և աշխատութեամբ տեր Օհան քահանային, կողակից Նաթէլին, եւ իմ եղբայր տէր Ստեփանին, կողակից Մարիամին, գանձապետ Դանիէլին, կողակից Շուշանին, գոնապան Փարսաղանին, կողակից Շուշանին, սպասաւոր Ազրպին, թվին ՌՄԼ (=1230=1781)»։

6. Տեր Ստեփան, հիշատակված է 1784 թվականի վրացերեն լեզվով գրված մի վավերագրում¹⁸։ Հովվել է Գորու շրջակայքում նաև Սամձերիս գոմ, Քարէլ և Խվեցուրեթ գյուղերում, վեճ է ունեցել Տեր-Սամվելի հետ՝ Ռուփսի վիճակի պատկանելության շուրջը։ Ինքնին հասկանալի է, որ այս Ստեփանը ևս այլ անձնավորություն է։

7. Տեր-Ստեփան, հիշատակված է 1773 թվականի հայերեն մի վավերագրում¹⁹։ Բերում ենք ինքնագիր վավերագրի կհնասագրական հետարրերություն ներկայացնող մասը։

«Արդ և իմ յուսեալ զաւագագոյն քահանայիցն և յայնց պարտուրաց և ես մի եմ նուաստ ծառայ սր Աթոռոյս տեառն իմոյ [Սիմէոն սրբադան կաթողիկոսին] Ստեփան քահանայս, որ եմ ի թեմէ Հախոպատու և միաբան նորաշենու սր եկեղեցւոյն, որ զայս ձեռագիրս յատուկ իմոյ բերանոյ գրեա; և կնքեալ է իմ ընկերակից երիցանցն և կնքեցուցեալ ետու վեհափառ տեառն իմոյ զՍիմէօն կաթողիկոսին և ուխտեցի, զի զայն ամեն, զորս գրեալը կան ի հասարակ մեք ձեռագրոջն, զոր և ես կնքեալ եմ, յօժարութեամբ պահեցից և կատարեցից».

18 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. № 5, վակ. № 60:

19 Նույն տեղ, թղթ. № 4, վակ. № 41:

իսկ թե շեղիցէմ ևս յայն կանոնաց, ապա որպէս հասարակ ձեռագրողն զրեալ է՝ յիսուն թուման տուգանս Արքայի տաց և ի սրբազն կաթողիկոսէն ևս բանագրեցայց ըստ արժանոյս: Այլի որովհետեւ Հախաղատու թէմի քահանայից էի ևս վասն որոյ յատկապէս դայս ևս ովատեցի ևւ պատմեցի զարս տեառն իմ կաթողիկոսին, զի թէ Սանահնու թէմի ժողովուրդ, կամ այլ վիճակաց եկամուտ ժողովուրդ՝ ևս ոչ հովեցից և ոչ արարից ինձ ծուխ որպէսպի Հախաղատու ժողովուրդ լինել շնամարիցին այն պատճառաւ և թէ յանդգնեցայց առնել զայտ նախ հոգէւորապէս շնչովս ընկալաց յԱ-յ և իրաքանչիւր տանց-տանց ի դիւանն Արքային տաս-տասն թուման դրամբս...»:

Այս Ստեփանի առնչությունը ևս վիճելի է, քանի զեռ լրացուցիչ այլ աղբյուրներ չունենք: Գրշությունը խստիվ տարբերվում է Սայաթ-Նովայի ինքնագրից: Բայց մի երկու հանգամանք կարծեք մոտեցնում են Սայաթ-Նովային.

ա) Նույն Հաղպատի թիմին պատկանելը և, հավանաբար, այնտեղից ուղարկված լինելը Թիֆլիս:

բ) Անձնական կնիքը թվագրված է. 1216 (=1767), իսկ դրանից մի տարի առաջ Սայաթ-Նովան իրոք քահանա էր:

գ) Նորաշենի եկեղեցում հովվելը բալական մերձ է Սկանդար-Նովայի վկայած այն ավանդությանը, թե Սայաթ-Նովան «ուներ մէ սրառվ սիրած աղջիկ». Նորաշնի թաղումը կենում է էլի, ...անումով Տալիթայ»²⁰: Եթե ընդունենք, որ ոս նույն Սայաթ-Նովան է, ապա պիտի եղբակացնենք, որ վերջինս նորից Թիֆլիս է եկել՝ «մեր քաղաք», ապա՝ նորից կանչվել Հաղպատ ու նոր աբեղա կամ վարդապետ ձեռնադրվել: Բայց քանի զեռ ուրիշ աղբյուրներ չունենք, վերա-

20 «Սայաթ-Նովայի շարքը», «Հովիտ», 1913, № 15, էջ 231: Նորաշենի (վր. Ախալշենի) եկեղեցու նկարագրությունը տրված է Անանուն հնագետի 1837 թվականին զրած Տփլիսի և Սոմխիթի հնությունների նկարագրությունը» աշխատության մեջ: Հյ. թբգմ. տե՛ս լ. Մելիքսեբ-Բեկ, Վրաց աղբյուրները..., հատ. 9, էջ 266, 270:

պահում ենք մեր եզրակացությունը և նոր վկայությունների լրացմանը թողնում:

8. Տեր Ստեփան, Հիշատակված է լրացական մի փաստաթղթի (Վր. կենտ. պատմ. արխիվ, ֆ. 226, № 2987) հավելագրության մեջ (քրոնիկ. 450 թ.=1762 թ.) «Ես սուրբ Նը. շանի տեր Ստեփանս ասեմ այս բանքս, վկայեմ»: Որևէ հիմք չունենք այս Ստեփանին Սայաթ-Նովայի հետ նույնացնելու:

9. Տեր-Ստեփան, Փեթխայինի սարկավագ, Հիշված է Վրաստանի Զեռ. ինստ. Hd—13073 վավերագրում, հայերեն ստորագրությամբ «Տեր Ստեփան, 1798 թ.»: Սայաթ-Նովան մինել չէր կարող:

Այսպիսով, վերոհիշյալ ինն Ստեփան-Ստեփանոսներից ութը Սայաթ-Նովան չեն, իսկ Մատենադարանի № 7174 ձեռագրի «Ստեփան վարդապետի» մասին ոշինչ ասել չենք կարող, որովհետև ձեռագրի գրչության ստույգ ժամանակն ու տեղը դեռ հայտնի չէ:

* * *

Մինչև Սայաթ-Նովա-Ստեփանոսի և Ստեփանոս Դերձակի նույնանձնության հարցի քննությունը, անհրաժեշտ է անդրադառնալ Սայաթ-Նովայի «արհեստավոր-դերձակ» լինելու տեսությանը: Լ. Մելիքսեթ-Բեկը մերժում է Գ. Ախվերդյանի վկայությունը Սայաթ-Նովայի ջուզհակության մասին և նոր մասնագիտություն վերագրում՝ դերձակություն: Այժմ տեսնենք, թե ինչպես է այդ փաստարկվում:

Աղբեջաներեն մի խաղում Սայաթ-Նովան ասում է. «Օ՞ս դորթ իլում թամամ օլդի,—ուստամա յեթուրդում խալաթ» (Տասնշորս տարիս լրացավ,—վարպետին մատուցեցի խալաթ): Լ. Մելիքսեթ-Բեկը այստեղ «խալաթի» տակ ուզում է «դերձակություն» տեսնել, մինչդեռ Թիֆլիսի համբարների պատմությունից շատ լավ հայտնի է, որ «при посвящении, всякий ученик обязан сделать учителю своему подарок, называемый у них халат. В то время, когда в амкаре учились мастерству дети достаточных мокалалаков, то

последние, при посвящении их, дарили учителю шаль или сукно на платье, ценою 30 и 40 рублей серебра»²¹.

Երկրորդ փաստարկումն այն է, որ Սայաթ-Նովայի «Ի կախոյ Քարավանսարէն» ընդօրինակած ձեռագիրը մի ժամանակ թավրիդաբնակ դերձակ Սողոմոն Մելիք-Աբրահամյանի մոտ է գտնվել, ուրեմն՝ «Դերձակների շրջան է անցել»²²:

Երրորդ հիմնավորումը վերաբերում է „Ճաճա թյ Թթոցրօ ՅօյաՅ“ («Հենց իմացար սոված էի...») խաղի երրորդ տան 3—4 տողերի մեկնությանը.

Մատուց յեցնու Յաշարո Յա՛ր, Յեն մարանցու ծանարո,
Եարծածու Ծանո արա մայզն, Եամուսացուն Եամոցըդո!

[բառացի՝ Հեռու երկրի վաճառական եմ, գու՞ բազար ևս Մարանդի,
Զարբարի գին չունեմ—խամ առնելու համար եկա]

Այստեղից հետևություն է արվում, թե «բազար» Սայաթ-Նովան «սերտորեն կապված է դերձակների հետ»²³: Բայց խաղի բովանդակությունն այդ բնավ չի թելադրում: Սայաթ-Նովայի փոխարերած-պատկերավոր միտքն այս է, «ինչպես որ վաճառականները ձգտում են Մարանդի բազար գնալ, այնպես էլ ես՝ ի քեզ, բայց քեզ արժանանալու հնար չունեմ, ինչպես որ Մարանդ գնացած փող չունեցող վաճառականը՝ զարբարի»:

Հաջորդ վկայությունը Սայաթ-Նովայի խաղերում հանդիպող «փարչա», «քիշմիր», «զար», «զարբար», «ատլաս», «քիրմանշալ» և այլ բառերն են՝ «կտորեղինի քաջագիտակ է»²⁴: Հարգելի դիտնականը մոռանում է, որ նշված բառերը հիմնականում ածականաբար են գործածված, այսինքն՝ համեմատություններ ու պատկերավոր արտահայտություններ են: Նրանց մեծ մասը XVIII դարի աշուղների կողմից կրկնվող բառեր են, վարպետորեն օգտագործված Սայաթ-Նովայի մոտ:

²¹ Ю. Ахвердов, Тифлисские амкары, Тифлис, 1883, стр. 21.

²² Նշվ. աշխ., էջ 39:

²³ Անդ:

²⁴ Անդ:

Վերջին փաստարկն այս է. S—3686 «Ճեռագրում Սայաթ-Նովայի խաղերի կողքին բերված են Դերձակ կոչվող այլ հեղինակի մի քանի ուրիշ երգեր, որ S—1543 ճեռագրում որպես Սայաթ-Նովա է հիշատակված»²⁵: Այստեղ որոշակի հակասություն կա, եթե «այլ հեղինակի» երգերն են, ապա ինչ առնչություն ունի այդ հեղինակի «դերձակ» վերադիրը Սայաթ-Նովայի մասնագիտության հետ: Ապա՝ մի՞թե կարելի է աշխատության այս բաժնում (վլուս 8) շապացուցել Սայաթ-Նովայի ու Դերձակի նույնանձնությունը և հղում կատարել դեպի գլ. 16 (էջ 39), իսկ 16 զլխում՝ Սայաթ-Նովայի դերձակ լինելը արդեն ապացուցված համարել և հղել 8 վլուս (էջ 96): Աշխատասիրողն իր հղումն իրրե ապացուց է ընդունել և ի վիճակի շի եղել Սայաթ-Նովայի դերձակությունն ապացուցել, որպեսզի հետո էլ Սայաթ-Նովա-Ստեփանոսի և Ստեփան-Դերձակի նույնանձնությունը հաստատեր:

Քանի դեռ ուրիշ վկայություններ չկան՝ Գ. Ախմերդյանի հաղորդումը միակն է և ճշմարտամուրը²⁶:

* * *

Ստեփանոս Դերձակի մասին առ այսօր կենսագրական որևէ տեղեկություն չունենք: Մասնակի կուհումներ կարելի է անել S—3686 և S—1543 ճեռագրերում նրա խաղերի վերնագրերին հարադիր կարճառոտ բացատրություններից: Սայաթ-Նովայի խաղերին հաջորդում է այս վերնագրը. «Եջօնցանց թշրիվություն» («Ստեփանոս դերձակի ասած») և հենց նույն տեղում գրիչն ավելացնում է (վրաց). «կասկածում եմ, ասում են թի Պաճուայի ասածն է: Մի մասը սրա ասածն

25 Անդ:

26 Յակոբ Բալախաչվիլին իր «Սայաթ-Նովայի կենսագրության երկու հարց» հոդվածում («Բայեն տառօձ», 1939, № 7, էջ 59—64) ավելի հետև դնաց. առանց Սայաթ-Նովայի խաղի իմաստը հաշվի առնելու «գործար Սայաթ-Նովա» արտահայտությանը տառացի մեկնություն տվեց, դրանով իսկ՝ խաղի հեղինակին «դուրդար» հայտարարեց:

է, մյուսը՝ թարգմանված թուրքերենից» (էջ 49): Ինքնին հասկանալի է, որ ձեռագրի կազմողը կամ գրիչը աշուղական միշտավայրին ծանոթ մարդ է: Նա կասկածում է, որ Ստեփանոս Դերձակի «մուխամբազլը» Պաճուալիինն է. (Հավանաբար Պաճուա անոնք ևս շփոթված է XVII դարում հայտնի սրախոս և Հերակլի մտերիմ Ճարուայի հետ, տես ձեռ. H—2130, էջ 24ր—25ն, 130ր—132ն), իսկ նրան Սայաթ-Նովայի հետ նույնացնելու ակնարկ անգամ չկա: Եթե նա այդպիսի կասկած ունենար, ապա կնշեր անշուշտ, որովհետև Սայաթ-Նովան շատ ավելի հանրահայտ աշուղ էր և քաջածանոթ:

Այլ պատկեր է S—1543 ձեռագրում: Սայաթ-Նովայի խաղերից հետո զետեղված են «Պաճուա Ստեփանի ասած» խաղերը (էջ 37): Սյստեղ որոշակի ասված է, որ Ստեփան(ոս) Դերձակն ու Պաճուան նույն աշուղն է: Մեր նպատակը Պաճուայի կամ Ստեփանոսի նույնանձնությունը հավաստելը կամ գրական ժառանգությունը գնահատելը չէ, այլ միայն պարզել Սայաթ-Նովայի հետ ունեցած նրա աղերսը: Երկրորդ ձեռագրում ևս հիշյալ աշուղը ուշ մի առնշություն չունի Սայաթ-Նովայի հետ: Ավելին, այս Ստեփանոսը զբաղվել է և թարգմանությամբ: S—3686 ձեռագրում որոշակի ասլած է. „Ձօսօց ԵՇՅՈՒՆԵՑԳԱՆ ԾԱՐԺԹՈՂՈ, ՕՃՐԵՈԹ ԵԱՆՈՅ ԾՕՅ ԵԱՏԺՈՂՈ“ («Նույն Ստեփանոսի կողմից թարգմանված, իբրահիմ խանի քրոջ ասած խաղ»)²⁷: Ինչպես տեսանք, նախորդ խորագրում ևս շեշտվում է «թուրքերենից թարգմանված» լինելը: Ուրեմն Ստեփանոս դերձակը կամ Պաճուան ստեղծագործել է վրացերեն, թարգմանել՝ թուրքերենից: Նշվող ծանոթագրումներից ուշ մեկը Սայաթ-Նովային չի առնշվում: Բնդհակառակը, երկու գրիշների (թե կազմողների) համար էլ նրանք (Սայաթ-Նովան ու Ստեփանոս Դերձակ-Պաճուան) տարրեր հեղինակներ են:

27 Զեռ. S—3686, էջ 60: Իբրահիմ խանի (1763—1805) քրոջ ինքնությունը մեղ չհաշողվեց պարզել:

լ. Մելիքսեթ-Բեկը «թուրքերենից թարգմանված» ծանութագրումը հակված է Սայաթ-Նովային վերագրել և դրանով իսկ՝ հավատել վերջինիս նույնանձնությունը Դերձակի հետ: Բայց պատճառաբանությունը նորից թվացական է: Սայաթ-Նովան, ինչպես ապացուցել են Գ. Ասատուրը և Գ. Լեռնիձեն, դեսպանական ծառայություն չի վարել և այդ թյուրիմացության պատճառը նրա խաղերի բանաստեղծական բուն տեքստից կտրված մեկնությունն է, որ, ցավոք, կատարվում է նաև լ. Մելիքսեթ-Բեկի գրքում²⁸: Իբրև թե Սայաթ-Նովան «կապ է հաստատել Զարաբաղի խանության հետ, որպես Անդրկովկասում խալիչայի արտադրության հիմնական տեղի»²⁹: Սայաթ-Նովայի խաղերը կարող էին ծանոթ լինել Զարաբաղի հայ ու աղբքշանցի բնակիչներին, բայց վերոնշյալ հատվածի աղբյուրն ուրիշ է. այն սերում է Սայաթ-Նովայի «բազազության» տեսությունից: Ուրեմն մի սխալի վրա խարսխվում է երկրորդի կովանը: Սայաթ-Նովան այստեղ արդեն «գորգավաճառ» է հայտարարվում՝ իբրահիմ խանի քրոջ բանաստեղծության թարգմանության նրան վերագրելու միտումով: Մինչդեռ ձեսագրական ծանոթագրություններում պարզիպարզո ասվում է, որ թարգմանել է Ստեփանոս Դերձակը:

Սայաթ-Նովային և Դերձակին նույնացնելու հաջորդ կովանը մասնագիտությունն է՝ դերձակությունը: Ստեփանոսի դերձակ լինելը (կամ իբրև վերդիբ կրելը) հաստատվում է նշված ձեռագրերի վկայությամբ, իսկ Սայաթ-Նովային մասնագիտությամբ «բազաղ» կամ «դերձակ» համարելը, ինչպես տեսանք, պարզապես սխալ է: Ուստի այս կետը ևս սպառված ենք համարում:

«Սայաթ-Նովայի և Ստեփանոս դերձակի նույնանձնությունը որոշակի հիմնավորվում է հատկապես տեքստաբանական նյութերի համեմատությամբ», — գրում է լ. Մելիքսեթ-

28 Գլուխ 20:

29 Անդ, էջ 97:

Բեկը՝, բայց ինքը այդպիսի համեմատություն չի կատարում։ Մենք շենք ժխտում ընդհանրությունները, բայց կան որոշակի տարբերություններ, որոնք բացառում են այդ նույնանձնությունը։

ա) Սայաթ-Նովայի համար բնորոշ չէ բնաձայնական կոշականների կրկնվող գործածումը, իսկ Ստեփանոս Դերձակի մոտ այն հնարանք է. զար, զար, հա ճեղլո ցողօլծ և յշրոօծօս ջահճօ... (վար, վար, ինչ գժվար է եղել այրիսամյան գարզը), մեցօնձ ցըցելեցօ (?) ձար, ձար, ձար, օֆ ջօցցեցօ («լրակն է իշխում (?) հար, հար, հար, ...»):

բ) Քերականական որոշ ձևեր Սայաթ-Նովայի մոտ այլ տեսք ունեն, Ստեփանոս Դերձակի մոտ՝ այլ. հմմ. Սայաթ-Նովա—յս սայմենո հեթու քշշո սացան օրո! Դերձակ—հաց հոմ մոցու, —օցոլուսա ցայցե, քշշուսա հեթցնուտ օրուս, Ստեփանոս Դերձակի մոտ հաճախակի են „թ“ (1 դեմք) ցուցիչի և գերբարակատեղծ մասնիկի գործածումները. մոցու, մշտօնե, թնջացո, մղցուուս (վիու. ღցուուս կամ ღմհուուս) և այլն։

գ) Ստեփանոս Դերձակի մոտ հաճախակի են վրաց լեզվի բուն շարադասությանն ու արամարանական շեշտին անհարիր արտահայտությունները. Ցյօն թյ մաժրօօալցօ հոցոհոց հոմ հարեօ (հյ. ինչպես որ), հաց հոմ մոցու, օցցոլո ցայցե (հյ. անդ ունես, կրտսկացի ես), ցւետու օցցոլո ուրիշ անդ) և այլն։

դ) Ստեփանոսի խաղերում կրկնությունները շատ ավելի հաճախակի են, քան Սայաթ-Նովայի մոտ, թեև վերջինիս վրացերեն խաղերը 3—4 անգամ ավելի են նախորդի ունեցածից։ Այդպիսի բառեր են օլցուս եց, ոյժուս սատո, մոջնոշրո, եցլուս օլցեա, թան օլցուսա, եռհճալու և այլն։

ե) Ստեփանոսի խաղերը որոշակի վիշտում են իրենց գհղարվեսականությամբ, նույնիսկ ամենահաջող հատվածները։

զ) Ստեփանոսի մոտ կան սիրություն ուղղված այնպիսի՝ արտահայտություններ, որոնք զուրկ են Սայաթ-Նովայի խաղերին հատուկ բանաստեղծական վեհությունից. «Պետք է ինձ պահես՝ լավ լինեմ թի վատ», «Դու ինձ պտտացնում ես՝ ինչպես որ շարիխն», «Եթե ուրիշին էլ ես այդպես նազ ծախում՝ լավիկն ես դու», «Ուրիշը մի արասի կծախսի, ինքը՝ մի թուման», «Գիշեր ցերեկ մարմինս ծակծկվում է ճանկերով» և այլն:

է) Սայաթ-Նովան խաղի վերջին տան մեջ սովորաբար հիշում է իր անունը, որ աշուղական արվեստին հատուկ եղան է: Մինչդեռ Ստեփանոս Դերձակի անունով հայտնի խաղերում հիշվում է «Մաջնուն»: Ստեփանոս Դերձակը բանաստեղծություններում հայտնի է, ուրիմն, «Մաջնուն» անունով. ի՞նչը կարող էր ստիպել Սայաթ-Նովային իր հեղինակավոր անունը փոխարինել նոր «Մաջնունով»: Լ. Մելիքսեթ-Բեկը մեծ վստահությամբ է վերաբերվում Հովհան Արքայազնի վկայություններին՝ Սայաթ-Նովայի մահվան տարիթիվը ճշշտելիս: Բայց ինչո՞ւ է մոռանում, որ վարդապետ Ստեփանոսը Արքայազնին հիշեցնում է... «Ես խեղճ Սայաթ-Նովան եմ, եթե լսել եք»³¹: Այսինքն իր աշուղական անունը նորից Սայաթ-Նովա է:

Առավել զարմանալի է, եթե կարդում ենք. «Ավելին կանենք, հնարավոր է, որ բացի այս երկու կեղծանուններից (Սայաթ-Նովա և Մաջնուն—Պ. Մ.) մեր երգիչը ուրիշ կեղծանունով էլ է երդեր հորինել, որի բացահայտումը գալիք ուսումնասիրության առարկա պիտի դառնա»³²: Ուրիմն՝ «Հարություն—Սայաթ-Նովա-Ստեփանոս-Մաջնուն-Փաճուա» հորցորդումները քիչ են, դեռ ուրիշ էլ պիտի փնտրել:

Եթե Սայաթ-Նովան նպատակ ունենար թաքցնել իր հնդինակությունը, ապա ինչու պիտի նրա խաղերը նորից ճանաշվեին «Ստեփանոս» անունով, «Դերձակ» վերադրությամբ.

³¹ „Յաղթածօծա“, Ծ. I, էջ 227:

³² Նշվ. աշխ., էջ 99:

Ստեփանոսը Սայաթ-Նովայի արեղայական անունն է, ինչպես կարող էր այդ իսկ անվան տակ «թաքնված» համարվել, մասնավանդ որ երկու տասնամյակից ավելի նույն վանքում էր: Ոչ մի սայաթնովագետ չի կասկածում, որ «Իմ խեղճ գլուխ» խաղը Սայաթ-Նովայի վերջին ստեղծագործություններից է, գուցե և խկապես ամենավերջինը, բայց հեղինակը իրեն նարից «Սայաթ-Նովա» է կոչում և «Մազնունի» մասին խոսք չկա: Միթե Արքայադնին ուղղված Սայաթ-Նովայի այն խոսքերը, թե «օծվելիս լարերը ծոցում են՝ մնացել և նույնպես օծյալ են» և ափսոսանքը՝ երիտասարդ Խելաշվիլու հոգեորական ձեռնադրվելու համար, չեն ապացուցում, որ Սայաթ-Նովան չի թաքնվել, չի մոռացել իր ով լինելը և, բնականաբար, նոր կեղծանուն ստանձնելու անհրաժեշտություն էլ չկա:

Ստեփանոս Դերձակ-Մաշնունը, ուրիմն, Սայաթ-Նովանչէ:
Այժմ անդրադառնանք խնդրո առարկա այն երկու խաղերին, որոնք S-3686 ձեռագրում („ջլուօճած օր թթվին...“ և
„Եցալու լամածու“) Ստեփանոս Դերձակի հեղինակությունն են
կրում³³, իսկ S-1543-ում՝ Սայաթ-Նովայի: „Եցալու լամածու“
(*«Իմ բարեկաս»*) խաղը հայտնաբերեց ու հրատարակեց
Կ. Կեկելիձեն՝ զետեղելով «Վրաց գրականության պատմություն» աշխատության երկրորդ հատորում, որը չորս անգամ
վերահրատարակվել է: Կ. Կեկելիձեի սկզբնավեյուրը ևս նույն
S-1543 ձեռագիրն է, ուր «Սայաթ-Նովայի ասած» է խորագրվում:
Նշված աշխատության Սայաթ-Նովային վերաբերող
բաժինը ուշադիր ընթերցելիս կարելի է նկատել, որ բազմա-
հմուտ վրացագետը առանձնապես համոզված շէ խաղի պատ-
կանելիությունը ճշտելիս, ինքը ևս առիթ չի ունեցել այն ըստ
էության քննելու: Նա գուցե և վերջին հրատարակությունից
հաներ այդ խաղը (մանավանդ Գ. Լոռնիձեի դիտողություն-
ներից հետո), եթե զիներ Սայաթ-Նովային և Ստեփանոս
Դերձակին նույնացնող վերոքննյալ վարկածը: Կ. Կեկե-
լիձեն անվերապահ համոզված էր, որ „ջլուօճած օր թթվին“

33 Զեռագիրն արտագրված է Պետքը բուրգում, թեյմուրադ Արքայազնի կողմէից՝ Գրիգոր Պաղյանի խնդրանոր:

(«Ես քեզ սրտով չեմ նախանձում») խաղը Սայաթ-Նովայիննէ է (նա հենց այդպես էլ ասում է), իսկ քանի որ իր հրապարակածը ևս ձեռադրում հարակից է նրան՝ շպնդելով հանդերձ, վերահրատարակեց այն: Մտորե կտեսնենք, որ Կ. Կեկելիձեն իրավացիորեն էր «Ես քեզ սրտով չեմ նախանձում» խաղը Սայաթ-Նովայինը համարում (հակառակ Գ. Լեռնիձեի ժըխտական հայտարարության), մինչդեռ իր հրատարակածը Սայաթ-Նովայի խաղը չէ:

„ՑՍԼՈԾԱՅԻ ՕՐԱ ՑՑՂՐԸՆ-Ը Սայաթ-Նովային հատկացնելու մենք մի քանի նկատառում ունենք.

Առաջին. S—1543 ձեռագրում խաղը «Սայաթ-Նովայի ասած է», բայց քանի որ մյուս խաղը ևս նույն խորագիրն ունի, այս կովանը անհրաժեշտ է լրացնել այլ աղբյուրներով: Խաղը առաջին անգամ հրատարակել է Պ. Չուբինաշվիլին՝ Սայաթ-Նովայի անունով³⁴: Իսկ այս անդրանիկ վրացագետը իր «Վրաց քրեստոմատիան» կազմել է ձեռագիր հավաքածոների հիման վրա: Հայտնի է նաև, որ նշանավոր աշուղ-աշուղագիտ Սկանդար-Նովան այս խաղը Սայաթ-Նովայի անունով հրապարակելիս ձեռքին ունեցել է մի այլ ձեռագիր³⁵: Իսկ այնտեղ վերջին հնայակի չորրորդ տողում հիշվում է Սայաթ-Նովայի անունը: Փորձված աշուղը սխալմամբ այդպես սրբազրել չէր կարող, առավել ևս՝ կեղծել: Պարզ է, որ այդպես է կարդացվել և սկզբնաղբյուրում: Մեղ հայտնի չէ խաղը ինչ օրինակից է հրատարակել ի. Գրիշաշվիլին (այդ մասին չի ծանոթագրված և հեղինակն այժմ չի հիշում), բայց Սայաթ-Նովայի անունը կրող տողը այստեղ ևս պահպանված է³⁶: Ուրեմն երեք ձեռագիր խաղը Սայաթ-Նովային է հատկացնում (Չուբինաշվիլի³⁷, Սկանդար-Նովա և Չիռ-Տ—1543, Հաշված Գրիշաշվիլու աղբյուրը):

³⁴ „Ժա՛րու. Ժ՛րուԾ.“, 1863, Ը. 2, էջ 120—121:

³⁵ „Սալթօնօ Սանճօրո“, 1875, էջ 66—67: 1895, էջ 80: 1912, էջ 90:

³⁶ „Սաօօտնօցա“, 1918, էջ 106, հնարավոր է, որ ի. Գրիշաշվիլին արտապակել է Սկանդար-Նովայի հրատարակությունից:

³⁷ Չուբինաշվիլու սկզբնաղբյուրը S—3724 ձեռագիրն է:

Դ. Լեռնիձեն «Ալիճելի ու անիմաստ» է համարում Սայաթ-Նովայի անունը հիշատակող տողը

զար Շեն հյօթու ռջորու և առաջու մռացնոլինա՛՛,
Տաօտնոցասատցու զարդար գանձոլինա՛՛.

Բառացի՝ [Վայ, դու իմ սոկի սաթ՝ շվարել իս,
Սայաթ-Նովայի համար՝ վարդի պես բացվել.]

Աշուղական տողը, բնագրից այսպես հատվածելու դեպքում, իրոք անիմաստ կարող է դառնալ: Բայց վկայակոչենք ողջ տունը.

Տապահան, մոջնոյն ռաժոմ անձու մռացնոլինա՛՛?
Վոն մոցիմալու, զյուղամա Շենձոլինա՛՛?
Վար Շեն հյօթու ռջորու և առաջու մռացնոլինա՛՛,
Տաօտնոցասատցու զարդար գանձոլինա՛՛,
Մտօդամ համոցա ծյուլծյուլու Շենտցոնա.

[Իմ սիրեկան, միջնորից դուր խռովիլ իս,
Ով քիզ թույնեց՝ խելքու զիմիտ շվարել իս,
Իմ սոկի սաթ, ասք ինչու խանգարվիլ իս,
Սայաթ-Նովու ամա վարդ իս, բացվիլ իս
Կուկա սարէն՝ բլուլ-խաղը քիզ ամա է:]

Ինչպես տեսնում ենք «անիմաստ» չէ և Սայաթ-Նովայի անվան առկայությունը բնագրային է:

Երկրորդ կամ առարկա խաղը գրիշների կողմից: Բավական աղճատված է, այդ է վկայում „Ձուցա՛՛ եա՛՛ նացու Տաօտնալամուսո“ («Լուսին և լուսավոր երևկոլի»): Ոչ միայն Սայաթ-Նովայի, այլև Ստեփանոս Դերձակի 8 խաղերում ևս այսպիսի աղավաղված տող չկա: Մեր ասածն է վկայում մի ուրիշ հանգամանք ևս. խաղը 11 վանկանի է, բայց որոշ տարրերակներում կազում է երկրորդ տան առաջին տողը (մեկ վանկ պակաս է)³⁸, իսկ Չուբինաշվիլու տարրերակում (այստեղից էլ Պ. Լեռնիձեի մեջբերումում) նույն տան մյուս տողերն են 12 վանկանի: Ինքնին պարզ է, որ վանկապակասը կամ ավելը դրչական աղավաղման հետեանք է: Կան նաև այլ

³⁸ Տ-1543, նահ՝ 1. Մելիքսեթ-Բեկի հրատարակությունը, նշվածին, էջ 150:

տարբնթերցումներ. շօճօხար-և շօճօխար, ամ ըամոտ-մյօլ ըա-
թօտ, զաօ-զած, ցյրագ-ցարճատ և ալլն:

Ե ր բ ո ր դ. «Մաշնուն» անվան առկայությունը S—1543
ձեռագրի օրինակում անկասկած հետագա աղավաղում է:
Գրառողը չի տարբերակել «Մաշնունը» և «միջնուրը», որոնք
նույն բառը լինելով հանդերձ տարբեր կիրառում ունեն: Սա-
յաթ-նովայի «միջնուրը» սիրահար է նշանակում, սիրելի,
մտերիմ, իսկ «մաշնուն» ձեզ Ստեփանոս Դերձակի մոտ հա-
տուկ անվան, բանաստեղծի կեղծանվան առում ունի: Բնագրի
«մաշնոյն»-ը («մաշնուն») պետք է ուղղել „մօջնոյն“-ով («միջ-
նուր»): Եվ իրոք, Չուրինաշվիլու սկզբնաղբյուրում (S—3724)
ունենք հենց մեր ուղղած ձեզ՝ «միջնուր»: Գ. Լիոնիձեն այս
հարցում հետեղական չէ. Սայաթ-նովայի խաղերից մեկը,
որ մեծարգո զիտնականն ինքն է հայտնաբերել³⁹, Գ. Թումա-
նիշվիլու գրչադրում (1807—1808) վերագրված է Սեֆիլ-Օղ-
յանին: Ուղղակի բնագրի «Սայաթ-նովան» փոխարինված է
«Սեֆիլ-Օղանով»: Մի այլ տարբերակում (Սօժ. թղ. 3 ձեռ.
N 5190) այն նորից Սայաթ-նովայինն է՝ բացահայտ աղա-
վաղումներով: Եթե նույն սկզբունքով վերաբերվենք, ապա
առաջնությունը Սեֆիլ-Օղանի պատկանելությանը պիտի
տալ: Մինչդեռ խաղը անկասկած Սայաթ-նովայինն է: Եթե
«Սայաթ-նովայի կրտսեր ժամանակակից» Գ. Թումանիշվիլու
ոգրառումներում այսպիսի աղավաղում կա, ապա այն առավել
կա հնարավոր է ավելի ուշ շրջանում: Սայաթ-նովային հետեղող
աշուղները (մանավանդ կատարող աշուղները), իրենց գրա-
կան ուսուցչին երգելիս, հաճախ հիշատակել են կատարողի
անունը: Իսկ բանավոր ճանապարհով տարածվող երգը հեշ-
տությամբ կարող է այլ հեղինակություն ստանալ՝ ապա
գրառվել այդ նոր պատկանելությամբ: Այդպես է կատարվել
«Ինձ ապանիր պրծնիմ, այ սիկ ծամավոր» (բնագրում՝ «այ ս'
ու մորու աշքերով») և «Ես քեզ սրտով չեմ նախանձում» խա-
չերի հետ:

³⁹ Ծ. Ը շ ռ ն օ ժ յ, մոյեանո..., տօնուսո, 1949, էջ 301—302:

Վերոնշյալ լեզվա-ոճական վկայակոչումներն ու այս
կարգի ձեռագրական տվյալների քննությունը, կարծում ենք,
բավարար են, որպեսզի «Ես քեզ սրտով չեմ նախանձում շ-
իաղը Սայաթ-Նովայի հեղինակությունը կրի:

Այսպիսով, „ցշլութամ օհա ՑՇՐԻԾ“ խաղը պատկանում
է Սայաթ-Նովային:

Բայց „օգաղաց լութուն“ խաղի մասին նույնն ասել չենք:
կարող: Վերոնշյալ լեզվա-ոճական և ձեռագրական փաս-
տարկներից ոչ մեկը չի բնորոշում այս խաղը, բացառությամբ:
Տ-1543 ձեռագրի, որ «Սայաթ-Նովայի ասած» է: Բայց
դրական մի տվյալ քիչ է, որպեսզի այն իրոք Սայաթ-Նովա-
յին հատկացնենք, մանավանդ որ ինչպես ոճական-լեզվական-
այնպես էլ բանաստեղծական արվեստի առումով խաղը մեր-
վում, նույնանում է Ստեփանոս Դերձակի մնացած յոթ ոտա-
նավորներին:

Եզրակացություն.

ա) Ստեփանոս-Դերձակը նույն Սայաթ-Նովան չէ:

բ) Սայաթ-Նովան մասնագիտությամբ «դերձակ» չի եղել:
Ախվերդյանի վկայությունը ամենաճշմարտամոտն է («ջու-
հակ»):

գ) „ցշլութամ օհա ՑՇՐԻԾ“ («Ես քեզ սրտով չեմ նախան-
ձում») խաղը Սայաթ-Նովային է պատկանում:

ՍԱՅԱԹ-ՆՈՎՈՅԻՆ ՎԵՐԱԴՐՎԱԾ ՎՐԱՅԵՐԵՆ ԽԱՂԵՐ

Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը, ինչպես տեսանք, ասստիճանաբար են հայտնաբերվել ու հրապարակվել: Այդ քննթացքում բացառված չէր նաև որոշ խաղերի վերագրում, որոնք իրականում այլ հեղինակի ստեղծագործություն են:

Սայաթ-Նովան XVIII դարի վերջի և XIX դարի սկզբների պրական թիֆլիսի ամենահայտնի բանաստեղծ-աշուղն էր: Պ. Իոսելիանու այն դիտողությունը, թի Սայաթ-Նովայի խոսքերը մինչև այժմ էլ իրեն պատկերավոր արտահայտություններ են գործածվում, իսկապես ճիշտ է: Իսկ նման պարագաներում բնական է, որ Սայաթ-Նովայի խաղերը կարող չեն այլ հեղինակությամբ ներկայանալ (Դ. Թումանիշվիլու ժողովածուում Սայաթ-Նովայի խաղը դեռևս 1808—1810 թվականներին Սեֆիլ-Օղլանի անվամբ է զետեղված) կամ «Հակոռակը՝ դիտավորյալ թե պատահաբար այլ հեղինակների պոբեր Սայաթ-Նովայի հեղինակությունն են ստացել: Վերջին Ֆրանցիսկ Հաճախաղեպ է միջնադարյան դրականության մեջ. «Վագրենավորի» մի քանի շարունակություններ կան, հավելումներ՝ Ռուսթավելու անվամբ ներկայացված, կամ Խայամին վերագրվող քառակների կեսից ավելին, խոշորագույն արևելագետների կարծիքով, իրականում այլ հեղինակություն պետք է ունենա: Ինչպես տեսնում ենք, վերագրվում կամ սեփականացվում են զեղարվեստական խոսքի խոշոր վարպետների գործերը: Այդպես է կատարվել Ռուսթավելու, Խայամի, նաև՝ Սայաթ-Նովայի հետ:

Վրաց սայաթնովագիտության պատմության սկզբնական տարիներին, երբ դեռևս չէր ուրվագծված գրողի ստեղծագործական դիմանկարը, հաճախ նույնիսկ փորձված գրողի կամ գրականագետի համար դժվար էր տարբերել Սայաթ-Նովայի խաղը նրան վերագրվածից:

Վրացական «Գրոերա» թիրթը 1868 թվականին (№ 18, էջ 4) հրապարակեց „Ծրջոնօ“ («Ժամանակներ») խորագրով մի խաղ՝ ծանոթագրելով. «Սայաթ-Նովայի խաղերից է»: Խմբագրության կոչը (Հմմ. Զեռ. Ա-1969) Սայաթ-Նովային վերաբերող հրապարակային առաջին հայտն էր (խոսքը վրաց իրականությանն է վերաբերում) և այդ առումով շատ նշանակալից: Բայց հրապարակված խաղը իրականում Սայաթ-Նովայի ժամանակակից Ալավերդային է պատկանում: Վերջինս բավական հայտնի աշուղ էր: Նրա մասին հիշատակվում է «Կալմասորայում»: Խաղի վերջին տան մեջ, աշուղական ավանդույթներին համապատասխան, նշված է հեղինակի անունը.

Առաջընթաց, գաղտնաբառ, զարգացնութ հեցնօ և զարգացնութ մանաւութ մանաւութ:

Խմբագրությունը, կարելի է կուահել, դժվարացել է „Ճռ-Յո՞րդա“ (Ալավերդա) բառի տակ հատուկ անուն տեսնել, մանավանդ որ բառի հասարակ առումը շատ զործածական է վրացերենում (և հայերենի որոշ բարբառներում):¹

Սայաթ-Նովային վերագրված երկրորդ խաղը հրապարակված է իւ. Ճավալավաձեկի «Հիլերիա» հանդեսում (1877, № 28, էջ 30): Վերագրումը ձեռագրական աղբյուրից է բխել: Երբեմն զրիշները առանց տարանջատման ընդօրինակում են մի այլ երգ: Իսկ երբ խորագրում չի նշված հեղինակի անունը

1 Այդպիսի է կատարվել և Դվիթիսծղալորայի հետ: Նույնիսկ փորձված դիտնական է. Մելիքսեթ-Բեկը բառն ընկալել է սովորական առումով՝ ասածո ողորմություն, մինչդեռ այն հայերեն Աստվածատուրի բառացի թարգմանությունն է (ազգանունը՝ Քերուղաշվիլի=Բեհրուղյան, բանաստեղծ և թարգմանիչ):

երկու տարբեր խաղեր հեղատությամբ կարող են միակցվել և իրար շարունակություն դառնալ: «Իվերիայում» հրատարակված խաղը իրականում Մերաղե Դավթինն է (Մերաղե՝ այգեպան): Հեղինակի անունը նշված է բուն տեքստում: Վերջինս հայտնի է նաև ձեռագրական այլ աղբյուրներում: Խմբագրությունը պարզապես ուշադրություն չի դարձրել վերագրվողի և նրան հաջորդող Սայաթ-Նովայի խաղերի ինչպես կառուցվածքային, այնպես էլ լեզվա-ոճական տարբերություններին, Առաջին խաղի այլ պատկանելիությունը ի. Գրիշաշվիլիին նկատել է դեռևս 1918 թվականին, Սայաթ-Նովայի ժողովածուն հրատարակելիս:

Հետագա վերագրումները բոլորովին այլ պատճառաբանությամբ են կատարված. այստեղ գործ ունենք ոչ թե գրշական որևէ սխալի կամ միամտության հետ, այլ՝ քննական տեսության ու սկզբունքային մոտեցման: Այլ առիթով արդեն նշել ենք, որ Կ. Կեկելիձեն «Վրաց հին գրականության պատմության» երկրորդ հատորի առաջին հրատարակության մեջ Սայաթ-Նովայի անունով հրատարակեց մինչ այդ անհայտ «ուզալած լուծածու» խաղը, Տ—1543 ձեռագրից քաղելով: Նա հաջորդ վերահրատարակությունների ժամանակ ևս շարունակեց այն Սայաթ-Նովային վերագրել՝ գաղափարական ու ոճական մի քանի լրնդհանրություններ տեսնելով: Ստեփանոս Դերձակի առնշությամբ արդեն տեսանք, որ ոչ այս խաղը, ոչ էլ 1930 թվականին կ. Մելիքսեթ-Բեկի հրատարակած մյուս խաղերը (9—1) Սայաթ-Նովային չեն պատկանում: Համեմատական ուսումնասիրությունը իրավունք է տալիս նշված չխաղերը նորից Դերձակին հատկացնել:

Սոյաթ-Նովային վերագրված հաջորդ խաղը (թվով՝ 11-րդ) հրատարակվել է վրացական «Մնաթորի» հանդեսում²: Հրատարակող ի. Մեղրելիձեն նշում է, որ ինքը սկզբնաղբյուր է ունեցել Գ. Բաշինչաղյանի գրառած տեքստը (բերվում է խաղի ֆաքսիմիլեն): Թե որտեղից է նշված խաղը Բաշին-

չաղյանին հասել՝ մենք չդիտենք. Հնարավոր է, որ մյուս
երկուսի հետ ի. Գրիշաշվիլին է տրամադրել: Վեց տնից բաղ-
կացած այս բանաստեղծությունը, նվիրված ումն «Աննա բա-
շիի» անհնար է, որ Սայաթ-Նովային պատկանի: Ի. Մեգրե-
լիձեն լեզվա-ոճական ինչ-որ ընդհանրություններ է նկատի
ունեցել: Բայց այդպիսի ընդհանրություններ ամենևին չկան:

Նախ՝ խաղը գրված է XIX դարի կեսերին հատուկ վրա-
ցերենով, երբ նոր վրացերենը վերջնականապես դրական լի-
դու էր դարձել, իսկ այս նոր վրացերենի և XVIII դարի բա-
նաստեղծական լեզվի տարբերությունը շատ ակնբախ է՝ և
ձևաբանական և շարահյուսական առումով: Բերենք մի քառ-
յակ.

Եղած մօյշից յայցնու ածոցցեց
Ծա ցամահուն ցայլամ տաշու հանցեց,—
Աննան յցա մանց սրոշու ցը ո՛Ծացուն,
Ծա առ օցու օւց Շուտան ձանցեց.

[Բեկուղ հավաքվեն աշուզքն աշխարհի
նվազի պատրաստ՝ լարը չոնդուրի,—
Աննայի դովքը շեն ասի նորից,
Եթե սինի երդը Շոթարի:]

Միայն այս քառատողն իսկ բավական է, որպեսզի ուրիշ հե-
ղինակ որոնենք. Սայաթ-Նովան, ինչ խոսք, գիտակ կլիներ
Շոթարի (Ռուսթավելու) «Վագրենավորին», բայց ոչ մի խա-
ղում չի վկայակոչել նրան: Գաղափարական առումով էլ
խնդրո առարկա բանաստեղծությունը XIX դարի այլ հեղի-
նակի է. Աննա բացին պատերազմի դաշտ է գնացել ու «թրշ-
նամուն ոտնատակ տվել», զոհվել հայրենիքի համար: Սա-
յաթ-Նովայի «Աննան» (եթե իսկապես նա եղել է) բոլորովին
այլ էակ է, այլ առիթով ներբռոված:

Սայաթ-Նովային շպատկանելու որոշակի կովան կա
քննվող խաղի վերջին քայլակում.

Թյու ցմուրո ցա՞ն, նյ մոյշորեց Շորուտա,
Ցյոն նմալուտա եա՞ն զա մյ ցունշորուտա,
Ջացոնցցեց ածալ և առա տ ն ց հ ո տ ա,
Նմալուց առ ոյ հոմ համոնքունց էո.

[Ես էլ հմ հերոս, մի նայիր խանդով,
թե դու սուր ունես՝ ես էլ՝ ճանուբով
Հանդիման հմ նոր սայաթահան զով
Թե որ մբցության սուրդ կունենաս:]

Երբորդ տողում նշված Տօօտնո՞րօն, որը և, Հավանաբար, պատճառ է եղել Հեղինակի շփոթման, ուղղակի մատնանբում է, որ Հեղինակը գրում է «Սայաթ-Նովայի հանդով»: Ինչպես կարող էր Սայաթ-Նովան «Սայաթ-Նովայի հանդով» երգել: Բավական է այս երգը համեմատել մեծ աշուղի ցանկացած խաղի հետ, և նրանց սկզբունքային տարբերությունը որոշակի կդառնաՅ:

Սյապիսով, Սայաթ-Նովային են վերագրվել տասնմեկ խաղեր, որոնք իրականում ոչինչ ընդհանուր չունեն մեծ բանաստեղծի գրական ժառանգության հետ: Վրաց սայաթ-Նովագետները, կարելի է ննթաղրել, զգացել են այդ տարբերությունը և ձեռնպահ մնացել վերահրատարակումից: Որեւէ անհայտ խաղ Սայաթ-Նովային հատկացնելիս պետք է ելակետ ունենալ վերջինիս գրական ժառանգության գեղարվիստական-գաղափարական ինքնատիպությունը, լեզվական ռառազանձային նորմերը, այլ կերպ կարելի է տասնյակ զրոյների մի «արշինով շափել»:

3 Խաղի Հեղինակը, ուրեմն, Սայաթ-Նովայի ազգեցությունը կրած բանաստեղծներից մեկն է:

ՍՍ.ՅԱ.Թ-ՆՈՎ.Ա.ՅԻ ԿԱԼԱՄԲՈՒՐՆԵՐԸ

Հովհան Արքայազնի «Կալմասոբայում», երբ Սայաթ-Նովան պատասխանում է վրացի հոգևորականի «Ասացեք խնդրեմ, ո՞վ էիք դուք» հարցին, մի այսպիսի տեղեկություն կա, «Ես ամենուր տեղ ունեի ոչ միայն երգով, այլ նաև՝ կատակով ու աշխարհական գործերով...»: XVIII դարում Հերակլի պալատ այցելած ուստ ճանապարհորդներից մեկը, իր տպավորությունները գրառելիս, պատմում է, որ արքունիքում նիստ ու կացով շատ են նմանվում պարսկական շահերին՝ նկատի ունենալով և՛ փոխհարաբերությունները, և՛ արքունական դրվածքը: «Քարթիս Յիովլիքայի» մեջ ևս հենց այդ «պարսկական»-ի մասին է խոսվում: Բնականաբար, զարմանալի չէ, որ Հերակլի մոտ կլինեին այնպիսի «սազանդարներ», որոնք հանպատրաստից ու սրամիտ խոսքով կօգնեին արքային պաշտոնական հոգսերը ընդմիջել երաժշտությամբ կամ «զվարճասացությամբ»: Հերակլ II շրջապատված էր բավական խարդախ ու, ինչպես ինքն է բնորոշել, «սատանայից քսանչորս ժամ շուտ ծնված» մարդկանցով: Աղբյուրների վկայությամբ նա մի առանձին հարգանք է տածել դիակի սրամիտ ու պատկերավոր խոսքը: Զվարճախոս Ճաբուան, օրինակ, իսկապես հարգվել ու սիրվել է թագավորի կողմից: Դեռ Հերակլի կենդանության օրոք հյուսվել են հետաքրքրաշարժ բազմաթիվ զրուցներ ու անեկդոտներ: Զեռագրերում պահպանվել են Բեսիկի կալամբուրները՝ Անտոն Ա կաթողիկոսին կամ Գայոս Ռեկտորին հասցեագրված: Այդ առումով ուշագրավ է նաև Բեսիկի ու Միրիան Արքայազնի բանաստեղծա-

կան մըսությունը: XVIII դարի երկրորդ կեսի վրաց գրականությունն ուսումնասիրիլիս բավական նկատելի է երգիծական ժամբի տարածվածությունը¹: Մեր Սայաթ-Նովան և, ինչպես երևում է, մի ժամանակ հայտնի է եղել իր կատակեներով՝ շափածո ասված: «Կալմասորայի» վկայությունը հաստատվում է հենց իր՝ Սայաթ-Նովայի վրացական խաղերում հանդիպող մի քանի ակնարկումներով: Հայ սայաթնովագիտությունը այս հարցով գրեթե չի զբաղվել: Երբ Գ. Լեռնիձեն հրատարակեց Սայաթ-Նովայի երկու կալամբուրները, որոշ մասնագետներ նույնիսկ գծողհեցին նրա եզրակացությունից: Սակայն, «գժողովները», ըստ էության, ճիշտ չէին պատկերացնում Սայաթ-Նովայի «կատակասացի» կամ «զվարճախոսի» ծառայությունը: Նրանք XVIII դարի թիֆլիսի ինքնատիպ գրական միջավայրի, «զարաշոխալիների» սրամտություններն ու կալամբուրները շփոթում են արքունական ծաղրածուների ծառայության հետ: Մինչդեռ իրականում սրանք բոլորովին տարբեր հասկացողություններ են. կալամբուրները ամենատաղանդավոր գրողների հանպատրաստից խոսքեր են՝ այս կամ այն միջադեպը, անձնավորություննը բնորոշող: Սայաթ-Նովան Հերակլի պալատում «սազանդար» է եղել, ոչ թե «զվարճախոս»: Բայց եթե հիմքեր կան պնդելու, որ նա չի վարանել և կալամբուրներ ասելու, նույնիսկ հորինել է այդպիսիք, ապա դա վկայում է նրա գրական տաղանդի բազմաժանրությունը: Սայաթ-Նովան «խումար» ասելով «սուր լեզու», բանաստեղծական թեավոր ու ազդու խոսք է հասկացել, և, բնականաբար, գործածել նույնպես: Ճիշտ այդ իմաստով է բառս գործածված նրա վրացերեն մի խաղում.

Տաօսաթօզա ամաս շիօզո, Շամալո զը՞ մօ՛շօզօ!

Թոնդա ցշլո նըգ ազացո գա նմալո զը՞ մօ՛շօզօ,

Շեն շծօս ծրո՛նշլոս նամալո զը՞ մօ՛շօզօ,

თազո մէշկօզա, ցշլո մէշկօզա, Շամալո զը՞ մօ՛շօզօ,

Թռմաշը նահօս եցլմանգոլո, Ե՛թ մահ օ, զահ, օցօ շանա?

1 Հմմ, «Կատվի ու առյուծի մարտը» պոեմը, ուր ի դեպ, շատ հայաբանություններ (արմենիզմներ) կան:

Սայաթ-Նովին զանգատ ունե, վոր ման էկա դիղ չը գըթա,
Ուզում իմ, թե սիրտը խուցիմ՝ պըտքեցի մե թիր չը գըթա,
Մոցիս պահած ջուխտ նըռներուն հետնելու մե դուռ չը գըթա,
Սրտիս, զըլսիս բըռնած ցավին մե շարա, մե դիղ չը գըթա,
Բնիքում իմ զար աղբուխնիբը, իս խումար իմ, դիղի՞ս աջաբ²⁾:

«Յիս խումար իմ, դիղի՞ս աշաբ» արտահայտությունը, բանաստեղծության կառուցվածքի համաձայն, համապատասխանորեն առնչվում է նախորդ տների վերջնատողերին, իսկ այնտեղ շեշտվում է Սայաթ-Նովայի հալատը իր ու իր զգացմունքի նկատմամբ. «Ինչ զարբար իմ, ինչ ատլաս իմ, յիս ինչ զար իմ, դիղիս աշաբ»: Այս պատճառով էլ Սայաթ-Նովայի «խումար իմ»-ը ևս հալատ է իր արդեստի նկատմամբ: Թեև դժվար է ու ափոս մեծ բանաստեղծի որևէ տողը պատմողաբար ներկայացնել, բայց եթե փորձենք այդպես վարվել, ապա մոտավորապես պիտի կարդանք. «այնպիսի խոսք կասեմ, որ ծանակ կդառնաս», այսինքն «խոսք կասեմ.՝ երկինքը ճքճքա»-ի կամ «ինձ Սայաթ-Նովա-Արութինն ակոսին»-ի մի այլ տարբերակն է: Այնպես որ երգիծական բնույթի հատակոտորները ոչ թե ստվերում, այլ բարձրացնում են Սայաթ-Նովայի խոսքի ուժը:

Միանգամայն արդարացի է Գ. Լեռնիձեն, երբ նրա կալամբուրները կորած է համարում։ Պահպանվել են միայն երկուսը, մեկը լենինգրադի Georg. № 222 ձեռագրում, մյուսը՝ S-2723-ում։ Վերջին ձեռագրի տեղը այժմ հայտնի չէ։ Վրաստ. ԳԱ Կ. Կեկելիձեի անվան Զեռագրերի ինստիտուտի համապատասխան հավաքածոյում այն չի պահպանվել։ Կալամբուրը կորուստից ազատվել է Գ. Լեռնիձեի հրատարակությամբ³, որտեղից և վերցնում ենք այն։

არაგვისა გავსდოთ წილია,
აქლემს ხურჯინი ჰყილია,
ეს დარბაზი რა დილია,
ჭრ. ჭრ. ჭრ. ჭრ!

Արագին անցնենք՝ կամուրջ կա,
Ուղարի մեջքին՝ խորչին կա,
Կլս ինչ խոշոր դահլիճ կա,
Հռ, հռ, հռ, հռ:

2 «Մայակ»-Նովա», 1959, էջ 94:

³ „მგლსანი საათნავა“, 1930, № 17—18:

ՁԸՆՅԱՌ ՅՈՒՅՑՈ ՁՅՈՍ ԹԵՐ,
ԾՅՆԾԱ ՎԵԼՇՈ ԾԱՄԿԱՌ ԿԵՐ,
ԾԱՐԺԱԼՈՒՐԻ ՀԱՏԱՅՐՎՐԵՐ...
Յօ, Յօ, Յօ, Յօ!

ԵԼ ՀԻՄ ՄԱԻ ՄՐԻՀ ԲԱՆ,
ՄԵԶՔԻՍ ԲԵԿՈՒՊ ՎԱՐԿ ԳԵՐԱՆ,
ԿԱՄ ՄԱՐԳՎԱՐՄԻ՛ ԺԱԼԴԼԱՆ...
Հո, Հո, Հո, Հո:

ԶԵԿԱՎՐՈՒՄ ԷՂԱՃ ԲԱԳԱՄՐՈՎՄՅԱՆ ՀԱՄԱՃԱՅՆ, ԿԱԼԱՄ-
ՐՈՒՐԻՆ ԱՍՎԱՃ է ՄԵՂԵՃԱԲՈՒԿ ՕՐԲԵԼԻԱՆԻԲԻ ՀԱՐՍԱՆԻՔԻ ԺԱՄԱ-
ՆԱԿ, ԷՐԲ «ՆԵՐՍ ՄՄՈԱՆ ՀԱՐՍ ՈՒ ՎԻՆԱ, ՀԱՐՍԸ ՀՈՎՃ ԳԵՂԵ-
ՄԻԿ, ԽՍԼ ՎԻՆԱԱՆ՝ ԱՆՑՈՈՆԻ ՈՒ ՍԱՎԱՄՏԱՎՈՐ»: ԿԱԼԱՄԲՈՒՐԻ
ԱՊԱՋԻՆ ԷՐԿՈՒ ՄՈՂԸ, ՎԻՌԱԲԵՐՄԱՄԲ, ՖԻՉՄ ԱՅՋՎԱԽԻՄ ԱՐ-
ՄՏԱՔԻՆ է ՆԵՐԼԱՅԱԳՆՈՒՄ: Այն պարզապիս ՀԿՏԱՔՐԾԻԲ է
ԷՐԲԻՆ ԷՐԳԻՃԱԼԿԱՆ ԲՆՈՎՅԻ ՀԱՎԻԱԾՈ ԽՈՍՔ՝ ՀԱՆԱՎԱՄՐԱՍՄԻՑ
ԱՍՎԱՃ⁴:

ԷՐԿՐՈՐԴ ԿԱԼԱՄԲՈՒՐԸ ԱՎԵԼԻ ԱՐԺԵՔՎՈՐ է: Այն ուշադիր
ՔՆՆԵԼՈՒ ԴԻՎՔՈՒՄ ԿԱՐՈՂ է ԼՈՎՐԸ ԻՄԱՍՄԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՆԱԼ:

ՄՇՄՈՇԵՍՈ ՏԱՅՐՈԱՆՔՈ,
ԸՆՌՍԵՎԼԱՋ ՄՆԴԱ ԳՃՅՈ,
ԱՄԾՈՋԵՋ ՋՈՋԵՇՈ ԳՃՅՈ;—
ՀԱ ՄՊԱՅ?
ՃՄԼՇՈ ԾԱՄԱՆՈԼՋ ՇՈՎՈՅ,
ՏԱՅԵԼՎԱՏԱ ՄԵՅՐՈԱՆ ՏՈՎՈՅ,
ԾԱՎՅԱՌՋ ԻԵԹՈ ԿՅՈՋՈՅՈ;—
ՀԱ ՄՊԱՅ?

ՈՎ ՀԱՅՐԱՎԿԻ ՊՈՎ ԱՐՐԱԴԱՆ,
ԲԱՐԻԲԻ ԱՆԻՄ ՄԻՄ ՔԻ ԱՐԺԱՆ,
ԿՈՍԻՆ՝ ԺԻՌՈՒՄԴ ՈՆԻՄ ՄԻ ԲԱՆ
Ի՞նչ արիր:
ԹՈՓԻ ԽԱ ՎԱՐԿԻ ԱՐՄԻՄ ՄԽՅԻՆ,
ԱՆՈՒՆԱԼ ԽՆԴ ՍՈՓԻ ԿՈՍԻՆ,
ԿՈՐՈՄԻԼ ԽՄ ԽՄ ԿՈՐՈՓԻՆ՝
Ի՞նչ արիր:

«ՍՐԲԱԼՎԱՆ ՀԱՅՐԱՎԿԻՄ» ԱՆՉՈՎՅԱ ԱՆՏՈՒՆ Ա.-Ն է: ՍԱ-
ՅԱԲ-ՆՈՎԱՅԻ ՍԹԵՂՃԱՎՈՐԾՈՎՄՅԱՆ ՄԱՐԲԻՆԵՐԻՆ ՆԱ ԷՐ ԿԱՅԻ-
ՎԻԿՈՍՈՒ: XVIII ՊԱՐԻ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՄՈՎՄՅԱՄԲ ՈՒ ՄՉԱԿՈՎՅԻԲԻ
ՀԱՐԳԵՐՈՎ ՎՐԱՎԴՎՈՂ ՄԱՏԱՆԱԳԵՏՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԷՆ ԼԱՎ ԱՎԱՏԼԿ-
ՐԱԳՆԵԼ ԱՆՏՈՆ Ա ԿԱՅԻՊՈՒԿՈՍԻ ՀԱՍԱՐԱԼԿԱԼԿԱՆ ԺԱՆՐԱԼՀԻՌ
ԱՊՂԵՑՈՎՄՅՈՒՆԸ: ՆԱ ՊՐԵԼ է ՄԱՏԱՆՅԱԿՆԵՐԻ ՀԱՍՆՈՂ ԿՐՈՆԱԿԱՆ
ԲՈՎԱՆԴՎԱԿՈՎՄՅԱՄԲ ՄՉԽԱՍՏՈՎՄՅՈՒՆՆԵՐ, ԲԱՐԳՄԱՆԵԼ ԿԱՄ
ՎԻՌԱՎՐԵԼ ՍԵԲԱՍՏԱԳՈՒ ՔԵՐԱԿԱՆՈՎՄՅՈՒՆԸ, ՃԱՐՏԱՍԱՆՈՎ-
ՄՅՈՒՆԸ, ՊՐԵԼ ՄԵԿՆՈՎՄՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՎԱՐՔԻՐ, ԲԱՐԳՄԱՆԵԼ ԿԱՄ

4 Տեքստում հանդիպող «Հո-Հո»-ները ոչինչ բնդանուր չունեն Ստե-
փանոս Գերձակի կապակցությամբ նշվող կոշականների հետ:

թարգմանել տվել փիլիսոփայական տրակտատներ, բացի հոգեոր ուսումնարաններ և այլն: Անտոնը բացառիկ ազդեցություն ուներ նաև Հերակլ II վրա: Գաբրաշվիլու և այլոց կողմից մի քանի տարի մեղաղրվելուց ու Ռուսաստանում հովվելուց հետո Անտոնը վերադարձավ նորից կաթողիկոսության (1764)՝ այս անգամ բավական խիստ վրեժ լուծելով իր հակառակորդներից⁵: Արդեն նշվեց, որ Բեսիկին, Կ. Կեկելիձեի կարծիքով, վտարվել է հենց Անտոնի հալածմամբ, իսկ ինչ կլիներ «ոչ ազնվական» ու «խալխի նորար» Սայաթ-Նովայի հետ, եթե վերջինս փորձեր ծաղրել կամ թեկուզ «ձեռք առնել» սրբազան կաթողիկոսին: Եթե Անտոնը շղթարացավ Գաբրաշվիլիների ազգեցիկ տոհմը տեղահան անել, ապա Սայաթ-Նովային վտարելը կամ քահանա դարձնելը նրա համար հասարակ մի քան էր:

Վերոնշյալ կալամբուրի հետ կապված նկատառումները մեզ թուզլ են տալիս Սայաթ-Նովայի պալատից հեռացման ու հոգեորական դառնալու այլ պատճառ՝ որոնել՝ Անտոն կաթողիկոսի հետ կապված: Վերոբերյալ կալամբուրը կարդալիս ինքնին մտածում են, թե ինչպես կհանդուրժեր Անտոնն այդ երգիծանքը: Կալամբուրը, Սայաթ-Նովայի վտարման պատճառներին առնչելիս, Հնարավորություն կտա ավելի կոնկրետ թվագրել վտարման ժամանակը: Անտոնը երկար ժամանակ Ռուսաստանում էր և Վրաստանի կաթողիկոսական աթոռ վերադարձավ 1764 թվականին: Այդ թվականից էլ նա սկսեց հալածել իր հակառակորդներին: Սայաթ-Նովան, ուրիմն վտարված պետք է լինի 1764—1765 թվականների միջև, որովհետև 1766 թվականին նա արդեն Կախավանում էր:

5 Որոշ ազգայուրների վկայությամբ Անտոնը վրաստան է վերադարձել 1762 թվականին:

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՎՐԱՅԵՐԵՆ ԽԱՂԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԲ

Սայաթ-Նովայի կենսագրության տմենից հավաստի սկզբնաղբյուրը նրա խաղերն են, մանավանդ վերջին շըրջանի համար՝ վրացերեն երգերը:

Սայաթնովագիտությունը արդեն հարցուրից ավելի տարիների պատմություն ունի: Այնուամենայնիվ, վրացերեն ու աղբբեջաներեն բանաստեղծությունները հայ ընթերցողին ամենից ամփոփ ներկայացված են Մ. Հասրաթյանի կազմած վերջին ժողովածուում (Երևան, 1959): Այդ գրքում զետեղված թարգմանությունները վրացերենից՝ հիմնականում հաջող են և բնագրային հարազատություն հավաստող, մանավանդ այն երգերը, որոնք առաջ էլ են եղել թարգմանված և այժմ մշակվել են միայն: Նոր թարգմանված և բանասիրական լուրջ կարեսորություն ունեցող մի երկու բանաստեղծություն, սակայն, նկատելի մեղանչում են բնագրի առաջ: Թարգմանությունը կատարված է, ինչպես համապատասխան ծանոթագրություններն են հաղորդում, տողացի հայերեն փոխադրումից:

Սայաթնովագիտության համար բացառիկ նշանակություն ունի «Արդար դատե, չէ վուր թագավոր իս դուն» խաղը, որտեղ արտացոլված են բանաստեղծի հոգեկան վիճակն ու կենսագրական-սոցիալական մի քանի եղելություններ՝ «սիվ կարայով սքվորութին» ստանձնելու նախօրերին: Ավելի ճիշտ, այս խաղը Սայաթ-Նովայի ողբերգությունը մեկնող ամենա-

Հիարժեք ստեղծագործությունն է: Սայաթ-Նովայով զբաղվուշ
հայ մասնագետները մշտապես ստիպված են հիշյալ խաղին
դիմել՝ բացի նշված պարագաներից, նաև՝ վերջին ստեղծա-
գործություններից մեկը լինելու պատճառով էլ:

Քառյակ առ քառյակ համեմատենք բնագիրն ու նրա
հայերեն թարգմանությունը:

Բնագիր.

Ինձ արդար դատե, թագավոր իս դու,
Ողջ Վրաստանի սրառվ (ընարյալ) ես դու,
Մեկն ինձ ասում է՝ «մաշա ես դու»,
Մեկն էլ ավելացնում՝ «Շոտած հոր իս դու»,
Կարող ես տիւեցնել քի ուրախացնել ինձ դու.

Թարգմ.

Արթար դատե, չէ՞ վուր թագավոր իս դուն,
Վրաստանում տեր ու զորավուր իս դուն.
Մեկն ինձ կոսե՝ «զընա, մաշված շուր իս դուն»,
Մեկն էլ կոսե՝ «մե հոտած չըրհուր իս դուն...»:

Առաջին տողի շուրջ որեէ դիտողություն շունենք, թե ինձ՝
«չէ՞ վուր» կապակցությունը կարելի էր փոխարինել բնագրին
նոր երանդավորում շտվող «ախըր»-ով: Երկրորդ տողում Սա-
յաթ-Նովան ակնարկում է ոչ թե Հերակլի «տեր ու զորավոր»
լինելը, որ ինքնին հասկանալի է, այլ հարգված հեղինակու-
թյունը՝ մանավանդ Քարթլիի ու Կախբի միավորումից հետո
եվ իսկապես, վրաց թագավորներից միայն Դավիթ Վերաշի-
նողն ու Թամարն են Հերակլի պես բացարձակ ժողովրդակա-
նություն վայելել, «ողջ Վրաստանի սրառվ եղել»: Բնագրի
երրորդ տողի «մաշա ես դու» (Ճամ) արտահայտությունը
ամբողջությամբ փոխարինված է այլ դարձվածքով: Պատ-
ճառը, հավանաբար «մաշա» բառի իմաստի անծանոթու-
թյունն է: Մինչդեռ «մաշան» պարսկերեն «մաշե»-ն է, որ
բառացի «շուն» է նշանակում և Սայաթ-Նովայի մոտ գոր-
ծածված է վերաբերմունք արտահայտող ժողովրդական շատ
հայտնի առումով... Թարգմանության մեջ այն պետք է «մա-
շա» ձևով պահել, որովհետեւ բառը հատուի չէ նաև վրացերե-

նին: Առհասարակ, մեր կարծիքով, վրացերեն խաղերը թարգ-
մանելիս Սայաթ-Նովայի լեզվական ամփոփությունը պահ-
պանելու համար պետք է նույնությամբ պահել բոլոր ոչ վրա-
ցերեն բառերը, մանավանդ՝ պարսկական-արաբական: Այլ
կերպ՝ թարգմանելուց առաջ պետք է խաղը քննել վրաց լեզվի
ու վրացագիտության տեսանկյունից: Բավական է հայերեն
խաղերում մի երկու օտար բառ «գրականացնել» և հմայքն
արդեն նույնը չի լինի: Այս վերաբերում է և թարգմանությանը:
Անհասկանալի է մնում բնագրի հինգերորդ տողի բացառումը
թարգմանության մեջ: Բնագրում այն որոշակի ամփոփում է
հնդյակը՝ մեկնելով և ավարտելով առաջին տողի իմաստը:
Ասում ենք «բացառումը անհասկանալի է», որովհետև այն
շափաբերվող ճկուն տող է՝ հանգավորելու նկատելի կարե-
լիությամբ:

Երկրորդ հնագյակը՝

բնագրում.

Ոչ կողակից ունեմ, ոչ եւ խնամի[թ],
ես մի ռամիկ եմ՝ դետին զարկելու.
Մեջիսոն խաղ լր պետք նորանոր,
Ում առաջ էլ բացր իմ սրտի սաղեն՝
Բոլորն տաշին՝ «անպետ սար ես դու»:

Թարգմ.

Վուշ. Տարսնախոս ունիմ, վուշ էլ կողակից,
Մեջիսումն էլ նոր խաղ արին, ծաղրեցին.
Յիս ռամիկ իմ, ինձի զուխշ-զուխշ թաղեցին.
Ում առաջ էլ սրտի ցավը մաղեցի,
Վուխն ինձ ասին՝ «մե անպատիլ նոր իս դու»:

Վրաց աղբյուրներին անծանոթ և տվյալ հնդյակում կհն-
ատգրական մանրամասներ փնտրող հայագետը կարող է սխալ
հետեւթյունների հանգել: Ինչպես կարող էր Սայաթ-Նովան
«Հարսնախոս» շունենալու մասին խոսել, երբ նրա կինը,
տապանագրի համաձայն, վախճանվել է քրոնիկոնի 456 թվա-
կանին, որ երրորդ պտույտին է վերաբերում՝ $780 + 532 + 456 =$
 $= 1768$ թվական: Ուրեմն բանաստեղծությունը գրված է 1768

թվականից հետո, «ոչ կի՞ն ունեմ» արտահայտությունը, ինչ խոսք, կենսագրական իրողություն է: Իսկ կնոջ մահից հետո Սայաթ-Նովան նոր «Հարսնախոս» շէր որոնի, մանավանդ որ Սայաթ-Նովա—Ստեփանոս քահանայի ինքնագիր հիշատակաւ- րանից հայտնի է, որ 1766 թվականին նա արդեն քահանա է՛ւ «ի Կախոյ քարավանսարէն»: Կնոջ մահից հետո Սայաթ-Նո- վան «աբեղա» ձեռնադրվեց (լուսարարի պաշտոնով) և այլու «խնամախոսի» հարցը բացառվում է: Եվ իրոք, բնագրում «խնամի» է ասված և ոչ «Հարսնախոս»: Վերջինիս դեպքում վրացերենում կունհնայինք «շուամավալի» կամ «մաճանկա- լի», մինչդեռ Սայաթ-Նովան գործածել է «մախալի» բառը, որ «խնամի» է նշանակում: Տվյալ դեպքում «խնամին» «մտե- րիմ բարեկամներ» իմաստն ունի:

Բնագրի երկրորդ տողը (թարգմանության՝ երրորդ) որիէ էական առարկություն չի ծնում: Թարգմանիչը հարկավ իրա- վունք ունի որոշ բառահավելումների ու ծավալման: Թարգ- մանության մեջ դիպուկությունից զուրկ է բնագրի «մեջլիսին խաղ էր պիտք նորանոր» տողը: Մեջլիսն այստեղ արքունիք է նշանակում և ակնարկվում է մի նոր քմահաճույք և խար- դախություն ևս: Ոչ թե «մեջլիսում նոր խաղը» են արի, «ծաղրել» Սայաթ-Նովային, այլ, ըստ բնագրի, բանաստեղ- ծին դավիլով «նորանոր զվարթություն» են ապրել: Ուրեմն Սայաթ-Նովայի ողբերգությունը, արքունականների հերթական «զվարճանքներից» մեկն էր: Ինչպես տեսնում ենք, Սայաթ- Նովայի ակնարկը ավելի խորն է: Հինգերորդ տողի «ան- պիտք սար ես դուռ-ն թարգմանությունում առանց պատճա- ռաբանման փոխարինված է «մե՛անպատիլ հուր իս դուն»-ով: Նշված խաղին հատուկ չէ բուն համեմատության կրկնու- թյունը: «Անպիտք սարը» այստեղ քարակուստի, ինչ որ բանի արգելակող «զանգվածի» իմաստ ունի, և Սայաթ-Նովային դավող երբեմնի պալատակիցների համար բնորոշ արտահայ- տություն է: Բնական է, որ մեծ բանաստեղծի ճշմարիտ ար- վեստն ու նրա դավանած սկզբունքները առանց քան- քարի, սոսկ նենգությամբ վեր ձգող արքունականի (Սա-

չաթ-նովայի պաշտոնավարությանը առընչվող մասից համար «սար» կլինեին, «խանգարող սար»:

Երբորդ Հնդակա:

Քնազրում.

Թագավորին մոտեցա՞ հաղինս զուգած,
Զեմինս սազ ունի նվազի լարած.
Ինձ ետ դարձրին՝ ոնց մարա քենած...
Երնեկ լիմանայի ես էն քարթուլին,—
Գնա—[ասացին]—կեղտու խալիչա ես զո...

Պարզմ.

Սազը լոյսած, ձերիս բռնած, հազրոված,
Թագավորի մող զընացի զարթքոված.
Ինձ յիդ տրվին, վունցու փուշը կոտրոված
Երնեկ լիզուն լիմանայի յիս նըրանց.
Ասին՝ «զընա, Եւսաս սիլ մուր իս դուն»:

Թարգմանության առաջին տողը (բնազրի երկրորդ) Հույժ
ալարդունակ է, ոչ բանաստեղծական, մի բան, որ ամեննեին
քնորոշ չէ Սայաթ-Նովայի ստեղծագործություններին: Մեզ
համար անհասկանաչի է «լունցոր փուշ կոտրոված» ար-
տահայտությունը: Բնազրում դարձվածքը շատ պատկերավոր
է ու խոր՝ «ոնց մաթա՞ բեռնած...» նշանակում է «ՀՀկլածին»
և են դարձրել ծանր անպատված, վիրավորած: «Մաթա»
բառը պարսկերեն է՝ դարձացած, շվարած, մոլորյալ իմաստն
ունի: Եթե Սայաթ-Նովայի ստեղծած այս պատկերը փորձենք
պատմել, ապա կլինի «Հասցեն շփոթած մոլորյալի պես ինձ
Ազրունկի վրա ետ դարձրին՝ անպատվությամբ բեռնած»:
Թարձվածքի միտքը, ինչպես տեսնում ենք, պատկերավոր է
արտահայտված և օգնում է բանաստեղծի ու արքունիքի
վիխչարաբերությունը ճշտելուն: Թարգմանության չորրորդ
առողը անշուշտ հաջող է: Ավելի լավ կլիներ «լիզուն...
նըրանց»-ը փոխել բնազրի «էն քարթուլին» արտահայտու-
թյամբ: «Քարթուլի» բառը թարգմանությունը ավելի պատկե-
րավոր կդարձներ, կոլորիտային և ապա՝ այն սոսկ «վրաց լե-
զու» չի նշանակում, այլ նաև խոսքի որոշակի տարբերակ,

ինչպես հայերենում ունենք «Հայրններ»։ Վեր ոին տողը՝ «էրեստ սիլ մուր իս գուն»-ը ոչ միայն չի առնշվում բնադրին, այլև ուշադիր լինելու դեպքում, կարող է վնասել նբան։ «Սև երես, սև մուր, մրոտ, մրել» կապակցությունները պատճառաբանված (հետեւթար արգարացի) որևէ նախատինք են։ Նշանակում։ Մինչդեռ Սայաթ-Նովան «Հրաժարելով հրաժարիմք» է ասել բոլոր ամբաստանություններին, բնագրի «կեղտոտ խալիչա ես դուն» ընդհանուր խաղից բխող որոշակիր իմաստավորում ունի. խալիչա, որ ոտնատակ են արել ու կոխվել։ Ինքնին հասկանալի է ինչպիսի համառությամբ են հաջողել Սայաթ-Նովայի թշնամիները դետնել բանաստեղծին (իմա զրկել քյամանչից)։

Չ ո ր բ ո ր դ հ ն դ յ ա կ

բնագրում.

Ասված բան է՝ սարը սարին կհանդիպի.
Աստծո կամքն է ողորմության զրալը,
Խոլ ինձ զրալը՝ բող և ձեռմով լինի...
Երնեկ գուրս չնետեիր, ծեծեիր մի լավ,--
Իմ հոգեսոր հայրումայրն ես դու։

Թարգմ.

Աստծու կամով մարքս օղորմած պիտի.
Սարն էլ սարին կու հանդիպի, ով գիտի.
Էրնեկ մենակ ինձ ծեծելով խրատիր,
Կամ քու ձիուվ ինձ յիդ տայիր անպատվիր,
Իմ հոգեսոր մինձ ծնուղքը վուր իս դուն։

Սայաթ-Նովան ամեննեին էլ «մարթս ողորմած պիտի»-ը հարցը չի քննուա, այլ այն, որ ողորմած լինելը, առհասարակ աստծո գործն է, բայց իմ հանդեպ գու կատարիր այդ աստվածայինը։ Այս երկուսի միջև որոշակի տարբերություն կատվյալ դեպքում խոսք չի կարող լինել մարդու ողորմածության մասին ընդհանրապես։ Բանաստեղծը Հերակլին դիմել է նորից իր տեղը վերադառնալու ակնկալությամբ, հավանաբար քահանայական ծառայության տհաճությունը զգալուց հետո։ Այդ է պատճառը, որ նա թագավորին աստծո շնորհուել

է օժտում՝ իր հանդեպ զթության ակնկալով։ Նման դիմումը, մեր կարծիքով, ոչինչ ընդհանուր չունի արքունական հաճոյախոսության հիտ։ ղաժանորեն պատժված Սայաթ-Նովան (իր շգործած մեղքի համար) հոգևորականի իրեն անհարիր ծառայությունից դառնացած պատրաստ է թագավորին նույնիսկ «Հոգևոր հայր ու մայր», «աստված» իսկ համարելու, միայն թե «սիլ կաբան» ու «խուցը» նորից բանաստեղծությամբ փոխարինվի։ Թարգմանության շորրորդ տողը մեկնական հավելում է և պարզունակ՝ տողերի թիվը հինգ դարձնելու ստիպմունքով։ Այնուհեռ կարելի էր չզեղչել առաջին կամ երրորդ տողերից մեկը։ Տվյալ դեպքում մենք առարկում ենք ոչ թե թարգմանչական հնարավորությունը, այլ Սայաթ-Նովայի բանաստեղծության դադարական որոշ նրբերանքների կորուստը։

Վերջին հնդյակը համեմատաբար հաջող է թարգմանված։

Բնագիր.

Թեկուզ ջարդեն կող ու իրանս՝
Քեզնից շեմ զնա՞ շունչս բերանս,
Թե քուը չի խեղզի՝ ծովը կընկնեմ...
Լեզվով ավելացրիր բո դարդերը,
Սայաթ-Նովա, դառը կսիծին պատրաստ ևս դու։

Յարդմ.

Ենկուզ ջարդին, ջանրս փետով վեր հատին,
Շունչըս բիբնիս լիս ինձ քեզնից շեմ զատի.
Նովը կընդնիմ, թե վուր քուն ինձ ազատի...
Սայաթ-Նովա, բո լիզվովն ցավ դատի,
Հալբաթ դարդ ու ցավի մե աղաղուր իս դուն։

Վերամշակման կարիք են զդում վերջին երկու տողերը։ «Քու լիզվովն ցավ դատի» արտահայտությունը հեռու է բնադրից, կարծես Սայաթ-Նովան անիծում է իր արվեստը, մինչդեռ բնագրում շատ որոշակի է ասված՝ լեզվով ավելացրիր քո դարդերը։ Այս տողը լավագույն սկզբնաղբյուր է Սայաթ-Նովայի ողբերգության պատճառը մեկնելու։ Դարդերը լեզվի պատճառով են ավելացել, նշանակում է Սայաթ-Նովան իր

բանաստեղծություններն է ակնարկում, ինչ խոսք, նրանց ժողովրդական բովանդակությունը։ Ուրեմն բանաստեղծի վտառումը ոչ թե սիրահարության պատճառով է եղել, այլ նրա լեզվի, այսինքն՝ նրա երդի բովանդակության պատճառով։

Մեր կարծիքով նշված թերությունների մի նշանակալի մասը հայերեն տողացի թարգմանությունից է բխում։

Սայաթ-Նովայի բանաստեղծությունների տողացի թարգմանությունը չի կարելի վստահել սոսկ վրացերեն լեզուն իմացողի։ Բնագրում կան բառեր, դարձվածքներ, որոնք այսօրվա վրաց լավագույն ընթերցողին իսկ անհասկանալի են։ Միայն մասնագետը կարող է մեկնաբանել դրանք։

Բերենք նման աշխատանքի անհրաժեշտությունը վկայող մի քառատող։

Ինձ ավատա, ուշերավին բառ թե կա,
Շատ հասարակ երկաթի համա կոսին.
Փետե ամանն ինչքան էլ օսկեջըրես,
Նրան էլի մե վառվող պինա կոսին։

Պետք է սկզբունք մշակել ո՞ր բառը թարգմանել, ո՞րը պահել։ Ի՞նչ կարող է հասկանալ հայ ընթերցողը «ուշերավին» բառ թե կա» արտահայտությունից։ Թարգմանիչը պահել է վրացերեն «ուշերավին» բառը, բայց բառարանում չի բացատրել այն։ «Ուշերավին» նշանակում է անպետք, վստահությունից զուրկ, և խիստ փոխաբերական առումով է գործածված։ ինչպես վերջին քառյակն է բացատրում։ Չորրորդ տողում նույնությամբ է պահված «պինա» բառը։ Ժողովածուի բառարանում նորից չկա. «պինա»-ն հունարենից կատարված փոխառություն է հայերենում ու վրացերենում՝ «պինակի, պնակ» ձեռվ (տե՛ս Մարկ. 26, 23)։ «Պինա» ձեռվ մի երկու անդամ գործածված է վ. Բարնովի և ի. Ճավճավաձեկի մոտ։ Այսօրվա վրացուն բառը զրեթե անհասկանալի է։ Առավել անհասկանալի է (այդ ձեռվ) ժամանակակից հայ ընթերցողի համար։ Ուրեմն պետք է կամ «պնակ» ձեռվ տալ, կամ բացատրել բառարանում։ Իսկ որոշ բառեր հարկավոր էր անպայման պահել. օրինակ՝ այս քառյակի բնագրում հանդիպող «զար-

նիշ»-ը, որ պարսկերեն է՝ դար-նիշ, «ոսկե-նիշ», ոսկերիչ
է նշանակում:

Այսպիսի դիտողություններ կարելի է անել Սայաթ-Նո-
վազի վրացերենից թարգմանված բանաստեղծությունների
դպալի մասի վերաբերյալ:

Մեծ բանաստեղծի խաղերի ակադեմիական հրատարա-
կության ժամանակ վրացերեն (նաև աղբբեջաներեն) խաղերի
լիակատար թարգմանությունը կատարելիս՝ պիտք է նկատի-
առնվին վերոհիշյալ հանդամանքները:

ՎՐԱՅԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՄԱՍԻՆ

Սայաթ-Նովային վերաբերող տեղեկություններից շատերը բազմիցս օգտագործվել են բանասիրության մեջ, հատկապես վրաց սայաթնովագետների կողմից: Բաց դեռևս չունենք խիստ բնագրային ու լիակատար հայերեն հրատարակություն: Վրացական սկզբնաղբյուրները թարգմանելիս կամ վերաբարգմանելիս նպատակ ենք ունեցել հայ սայաթնովագետներին հնարավորություն ու առիթ տալ վերանայելու տրադիցիոն դարձած մի քանի հղուածոնդումներ, կատարելու Սայաթ-Նովային վերաբերող աղբյուրների համեմատական ուսումնասիրություն:

Աշխատանքը շծանրաբեռնելու համար խուսափում ենք ծանոթագրություններից: Միայն, մինչև տեքստի թարգմանությունը, ճշտում ենք նրա հեղինակային պատկանելիությունը, զրության ժամանակը, հավաստիությունը և այլն: Խուսափում ենք նաև մանրազնին մատենագիտություն կազմելուց:

Վրացական աղբյուրները իրենց տեսակի մեջ միակն են: Հայ գրականության մեջ, որքան էլ զարմանալի է, Սայաթ-Նովային վերաբերող նման աղբյուրներ չունենք, բացառությամբ հեղինակի չորս ինքնագիր հիշատակարաններից, որտեղ խոսվում է միայն ծնողների և իր քահանայության մասին: Մինչդեռ վրացական աղբյուրները բավական շատ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում ոչ միայն նրա կենսագրության, այլ նաև բանաստեղծական արվեստի, հոգևոր ծառայության, գրական վաստակի և այլ հարցերի շուրջը:

Վկայությունների ուղղակի Սայաթ-Նովային վերաբերող
բաժինները թարգմանում ենք բնագրի առգրությամբ, որը
հնարավորություն կտա, ցանկության դեպքում, ստուգել
աղբյուրը, այստեղ ես երանգներ որոնել: Աղբյուրները սահ-
մանափակվում են Հովհան, Թեյմուրազ և Բագրատ արքայազ-
ների վկայություններով: Պլ. Խոսեհանիի հաղորդումը, ինչ-
պես իր տեղում նշել ենք, սկզբնաղբյուրի արժեք չունի, որով-
հետև գրվել է անցյալ դարի 60-ական թվականներին:

Թարգմանելիս աշխատել ենք անաղարտ պահել բնա-
գիրը, հավելել ենք բնագրով թելաղրվող բառեր միայն, այն
ել անկյունավոր փակադերի մեջ դնելով:

ՀԱՎՃԱՆ Ա.ԹՅԱՅԱԶՅՆ, «ԿԱԼՄԱՍՈՒԹԱ» («ԿԱԼՄԱՍՈՒԹԻՒԹ»)

Հովհան Արքայազնը (1772—1836) իր ժամանակի խո-
շորագույն վրացագետն էր: 1801 թվականին, Վրաստանի պե-
տականության վերացումից հետո, տեղափոխվեց Պետեր-
բուրգ, որտեղ և շարադրել է իր նշանավոր հանրագիտարանը՝
«Կալմասորա»: Պահպանված տեղեկությունների համաձայն,
աշխատասիրությունը շարադրված է 1813—1828 թվական-
ների միջև, երեք ծավալուն հատորներով: Հիմնականում այն
մենագրություն-ուղեգրություն է: Այստեղ արտացոլված են
վրաստանի քաղաքական ու մշակութային կյանքին վերաբե-
րող հարցուրագոր հարցեր, օգտագործված են բաղմաթիվ
պատմական վավերագրեր ու հրովարտակներ: Իրեկ քննվող
հարցերի շուրջը խորհրդածող, պայմանականորեն, իոնա
(=հոան) Խելաշվիլին է հանդես գալիս, որ իրական անձնա-
լորություն է և Հովհանի դասընկերը, իսկ ապա՝ Քարթլիի
Քվաթախիմի վանքի կուսակրոն՝ կիսասարկավագ: Արխիվային
փաստաթղթերի համաձայն, Խելաշվիլին իրոք նյութեր է
տրամադրել Պետերբուրգում ապրող իր դասընկեր-արքայազ-
նին: «Կալմասորան» ունի անսպառ հանաշողական արժեք:
Երկար ժամանակ գիտնականները բանավիճում էին երկի հե-
ղինակային պատկանելիության շուրջը: Նոր հայտնաբերած

դրշագիրը առմիշտ ճշտեց Հովհան Արքայազնի հեղինակությունը:

«Կալմասոբան» հայադիտության համար հետաքրքիր է մի քանի առումով. այստեղ թվարկվում ու մասամբ բնութագրվում են Վրաստանում ապրող շատ հայ գործիչներ, գրողներ, հետաքրքիր տեղեկություններ է հաղորդվում Վրաստանի հայկական բնակավայրերի պատմությունից (հատկապես հեղինակին ժամանակակից շրջան), նկատվում են պատմական Գուգարքի (Սոմխիթի) հոռովանները, բնակչության վիճակը, խոսվում է էջմիածնի այն ժամանակի վիճակի մասին և այլն: Պակաս հետաքրքիր չեն նաև զուտ տեսական-փիլիսոփայական բնույթ կրող խորհրդածությունները, որոնք արձեքավոր են XVIII դարի թիֆլոսահայ մշակութի հետ կապված. Հարցեցը քննելիս: Ամենից արձեքավորը, սակայն, Սայաթ-Նովային վերաբերող վկայությունն է: Հովհան Արքայազնը նշանավոր անձնավորություն էր, 1789 թվականից ուկած Վրաստանին առնչվող բոլոր անցուղարձերի ուղղակի մասնակից: Նա վրացական ջոկատներից մեկի ուազմավարներից էր՝ 1795 թվականին, Կրօնական կառավագանությունները ականատեսի ժամանակապրության արժեք ու հավասարությունը ունեն:

Տեքստում հնարավորություն կա ճշտելու նրա Հայաստան կատարած ճանապարհորդության ժամանակը, հետեւաբար նաև՝ Սայաթ-Նովային վերաբերող տեղեկությունների թվակրումը: Սողոմոն Արդության-Երկայնաբազուկի հետ զրուցելիս նա վերջինիս նախատում է «անհավատարմության համար», հիշեցնելով, որ Երկայնաբազուկների հանդեպ ողորմած է եղել Հերակլ II-ը (մահ. 1798), և այժմ էլ Սողոմոնի հանդեպ նույնքան ողորմած է թաղավոր Գիորգին (1798—1801): Ուրեմն՝ Սայաթ-Նովայի հետ Հովհան Արքայազնը հանդիպել է Հերակլի մահից հետո (1798): Հաղպատ-Սանահինից նա ուղերձվում է էջմիածնին, ուր հանդիպում է վրացերեն գիտեցող կաթողիկոսին. Ճիշտ այդ տարիներին հայրապետ էր վրաստանցի Դավիթ Էնագեթցին: Իսկ թե որքանով

են հավաստի նրա վկայությունները, կարելի է ստուգել Արդությաններին վերաբերող Հերակլ II-ի հրովարտակի հիշատակմամբ։ Այդպիսի հրովարտակ իրոք կա և ճիշտ է նրա բովանդակության վերաշարադրումը, ճիշտ են նաև «հանրապետության» շուրջ արված դատովությունները. այս թվականներին հնդկահայոց ծրագրերը բավական տարածուն էին և ունեին մի շաբթ կողմնակիցներ¹:

«Կալմասոբան» մի երկու անգամ հատվածաբար է հրատարակվել։ Իսկ ապա՝ երկու հատորով՝ Կ. Կեկելիձեի և Ա. Բարամիձեի խմբագրությամբ։ Սայաթ-Նովային վերաբերող տեքստը քաղում ենք այս վերջին հրատարակության I հատորից²։ Ռուսերեն թարգմանության մեջ հետաքրքրող մասը խիստ կրծատված է³:

* * *

«...Երբ Հովհանը Սանահին հասավ, հարցրեց Արդութաշվիլու անդ գտնվելու մասին։ Հայտնեցին Սողոմոնի այնտեղ լինելը։ Հովհանը ուզարկեց Զուրաբին և իջևան խնդրեց։ Ուզարկված Զուրաբը այցելեց (Սողոմոնին) և տուն խնդրեց։ Նա անմիջապես տուն տվեց և Հովհանին իր մոտ ընթրելու հրավիրեց։ Սրանք գնացին նշանակված օթևանը և հանգստացան այնտեղ։ Հետո, ընթրիքի ժամանակ, Հովհանը գնաց Սողոմոնի մոտ։ Երբ Հովհանը հասավ՝ ասաց. «Խաղաղություն ձեզ, ով երկայնաբազուկ»։ Նա էլ շնորհակալություն հայտնեց, հարցուփորձ արեց, հետաքրքրվեց ճամփորդության նպատակներով։ Հովհանը ամեն ինչ պատմեց, հետո ընթրեցին։

...Հովհանը վեր ելավ, հրաժեշտ տվեց Սողոմոնին։ Սողոմոնը ծախսելու փող նվիրեց և ճամփուր դրեց, [ասելով] վաղը առավոտյան շուրջ Միսխանա պիտի գնամ։ Եվ այսպիս բաժանվեցին նրանք։

¹ Հմմ. Պ. Մուրագյան, Գայոս Ռեկտորը և հայ մշակությը, «Կամուրջ», Թրիլ., 1962, էջ 438—442։

² ոյցալոնասոճա», 1936։

³ Արևիչ Իօանի, Կալմասոբա, Տб., 1945, սր. 111—114.

Հովհանը հանգստացավ այդ զիշեր: Հաջորդ օրը այցելեց այնտեղի շինություններն ու ամրությունները և մեծապես հավանեց ու ասաց. «Զարմանում եմ, թագավորներն ինչու այստեղ քաղաքների պես ամրություններ չեն արել և ժողովուրդ չեն բնականից ինքնին [ամրություն] է ստեղծված և արշավողների համար անանցանելի է: Բայց, երեսմ է, սրտացավ օգնականներ չեն ունեցել, այն իրենց անձնական օգուարը որոնողները»: Ապա եկավ դեպի Հաղպատ, այն ևս դիտեց և այնտեղի հկեղեցին ու շինությունը շատ հավանեց:

Այն ժամանակ հայ արեղաներից ինչ որ մեկը Հովհանին իր խուցը հրավիրեց: Նա էլ գնաց: Երբ այդ վարդապետը Հովհանին իր խուցը տարավ, բարեկց ու ճամփորդության նպատակները հարցրեց: Հովհանը ամեն ինչ հաղորդեց, և նստեցին, մի քիչ զրուցեցին: Վարդապետը Հովհանին ճաշ հրամցրեց, և սկսեց ուտել: Միաժամանակ լավ զինի էլ հյուրասիրեց Հովհանին, և ինքն էլ լավ էր խմում: Այդ ժամանակ շոնգուրն առավ ու սկսեց նվազել, և ապա հաջորդեց այս երգը՝

Իմ խիղճ զրլուխ, քիղիդ էս ինչ պատահից,
Վուխալ աշխարում ծաղը ու տընազ քի պատից.
Ռուրու փախար, էնթի բախտըտ սոթ տըվից,
Վիրշումն էլ տի՛ս, թե վո՞նց բեղովլաթ էլար.

Դե էլ յիս ո՞ւմ միդ զընիմ, ինչի՞ց էլավ:
Էս ամենըն հենց իմ էս խի՛լքից էլավ:

Աշխարումը դուն պատվական ու գոված,
Շուշի նըման օսկե զութումըն պահած.

Աշար, հիմի դուն ժեռ քարից իս շինած.
Հանկըրծակի էս ի՞նչ արին, ի՞նչ էլավ.

Դե էլ յիս ո՞ւմ միդ զընիմ, ինչի՞ց էլավ:
Էս ամենըն հենց իմ էս խի՛լքից էլավ:
Թաքավուրաց կամքով մեջիս կանչվուխ,
Թավաղներուց միճրովող ու հարդվողիս,
Կարմիր կապան արք ու փառքով հաքնողիս
Արիդայի սիվ քուրձը բաժին էլավ.

Դե էլ յիս ո՞ւմ միդ զընիմ, ինչի՞ց էլավ:
Էս ամենըն հենց իմ էս խի՛լքից էլավ:

Բըրինձ էի, զարի զառնալն ինչի՞ս էր,
Յիս աղավնի, նուր լոր զառնալն ինչի՞ս էր.
Ասեք, կըրունավոր զառնալն ինչի՞ս էր.
Վայ թե հենց իմ անբախտ օրիցն էս էլավ.
